

1860

ՀԱՄԻԱԾԻՆ



ՌՆԺ
ԺԷ ՏԱՐԻ


Յուլիս

ԷԶՄԻԱԾԻՆ

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՒՈՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ


Է

1960



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—Տասնհինգ տարի	3
ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒՇԱԿՅԱՆ— Կոշումին գիտակցությունն է.	7
որ կկատարելագործե մարդը	9
ՀՈՒՀԱՆՆԵՍ ՊԱՊԻՆԻ—Արև և ձյուն	11
ՄԱՅՐ ԱԹՈՒՈՒՄ	14
Ա. Հ— Աստվածաշնչի հայերեն բարգմանության պատմությունից	14
Ն. ԽԱԼՓԱԽՅՅԱՆ— Նոր եյուրեւ Սուրբ էջմիածնի վանքի և Վաղարշապատի հատակագծի վերաբերյալ	24
Ն. ԵՂՈՒԱԶԱՐՅԱՆ— Մուղեու վանքը և նրա վիմագիր արձանագրությունները	32
Ա. Ն. ՇԱՀԻՆՅԱՆ— Հայկական խաչքարերի արվեստը	38
Բազմալաստակ ուսուցիչը	45
Գ. ՊՈՂԱՐՅԱՆ— Ճշմարիտ հայրենասիրությունը	47
ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ	50
Քույրակ Մայր Աթոռ Ս. էջմիածնի նոր ստացված ձեռագրերի	56
Սուրբ էջմիածնի Հոգևոր Ճեմարանը հայտարարում է ուսանողների ընդունելություն 1860—1861 ուսումնական տարեշրջանի համար	63



ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ
 ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՒՄ, ԵՏՄԻԱԾԻՆ
 «ԵՏՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, редакция журнала «Эчмиадзин»
 Redaction of the monthly review «Etchmiadzin», Etchmiadzin, Armenia, USSR

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԱՅ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՂԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱՋՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Տ Ա Ս Ն Հ Ի Ն Գ Տ Ա Ր Ի



ստուծո օգնականությամբ, Վեհափառ Հայրապետի օրհնությամբ և Հոգևոր ձեմարանի վերափոխությամբ, դասախոսական կազմի քարեխիղճ և ազնիվ աշխատանքներով, ինչպես նաև ամբողջ ուսանողության ցուցաբերած աշխատասիրության և կարգապահության շնորհիվ, գոհացուցիչ արդյունքներով և հուսադրիչ հեռանկարներով փակվեց Հոգևոր ձեմարանի 1959—1960 ուսումնական տարեշրջանը:

Մեր տի և մեծ գոհունակությամբ պետք է արձանագրել այստեղ, որ Հոգևոր ձեմարանը, անցնող ուսումնական տարվա ընթացքում, մի քանի ևս մոտեցավ իր հարագատ նկարագրի և հոգևոր կոչման բարձրության:

Մեր հույսերը մեզ շխարհեցին: Բարեհաջող կերպով բոլորվեց ևս ուսումնական մի տարի: Անցնող տարին Հոգևոր ձեմարանի տարեգրության մեջ կմտնի որպես խաղաղ և ստեղծագործ աշխատանքի նվիրված մի տարի:

Վեհափառ Հայրապետը, վերափոխությունը և դասախոսական կազմը արեցին իրենց կարողություն և լավագույնը, որպեսզի այս նվիրական հաստատության մեջ առավել ևս պայծառանան, բազմապատիկ արդյունավորությամբ, հոգևոր և ազգային սպասավորության ոգին ու շնորհները: Եվ այս ազնիվ առաքարություն համար, ո՛չ Վեհափառ Հայրապետը, ո՛չ վերափոխությունը կանգ չեն առել նյութական ու բարոյական ո՛չ մեկ գոհության առաջ: Հոգևոր ձեմարանի ուսանողության ուսումնական և բարոյական ընդհանուր պատկերը այսօր ավելի է քան գոհացուցիչ է: Հոգևոր ձեմարանի զարգացման և ապագայի հետ սրտառույ հույսեր և ակնկալություններ են կապել ինչպես մեր հավա-

տացյալ ժողովուրդը, այնպես էլ Վեհափառ Հայրապետը: «Մեր եմառն է, — ասել է Վեհափառ Հայրապետը 1957 թվականին Հոգևոր ձեմարանի ամսվերջի հանդիսության ժամանակ, — Մեր ԿՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿՆ է ՇԵՆՑՐՆԵՆ, ՈՒՐԱԽԱՑՆԵՆ ՀԱՋԱՐԱՄՅԱ Ս. ԷՋՄԻՍԻՆԸ, ՊԱՐԳԵՎԵՆՈՎ ԱՆՈՐ ՀԱՎԱՏԱՎՈՐ, ԱՆՔԱՍԻՐ ԵՎ ԱՆՋՆՎԵՐ ՍՊԱՍԱՎՈՐՆԵՐ: ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷՋՄԻՍԻՆԸ ԳԼՈՒԽՆ Է ՄԵՐ Ս. ԵՎԵՂԵՑԻՆ, ԵՎ ԱՆ ԻՐ ԶԻՆՎՈՐՑԱՆ ՄԻԱՔԱՆՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ՁԵՄԱՐԱՆՈՎ, ՊԵՏՔ Է ԴԱՌՆԱ ՈՒՍԱՏՈՒ ՓԱՐՈՍ, ՕՐԻՆԱԿ, ԱՌԱՋՆՈՐԴ ԵՎ ՆԵՐՇԵՑԱՐԱՆ ՀԱՄԱՅՆ ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅ ՀԱՎԱՏԱՆՑԱԿ ԺՈՂՈՎՈՐԴԻՆ»:

Այս ծրագրերի և գաղափարների իրագործման ճանապարհի վրա, Վեհափառ Հայրապետը Հոգևոր ձեմարանը շրջապատել է գործունեությամբ և հայրական շնորհությամբ, վառ հույսեր կապելով նրա գոյության և նպատակների հետ:

Այս տարի լրանում է Հոգևոր ձեմարանի վերաբացման 15-ամյակը:

Լուսանոցի Տ. Գևորգ Զ-ի օրով, 1945 թվականի նոյեմբերի 1-ին, խանդավառ իրադրության մեջ կատարվեց Հոգևոր ձեմարանի պաշտոնական վերաբացումը:

Գևորգ Զ-ը, դեռ նախքան իր ընտրությունը, «Բարձրագույն հոգևոր իշխանության ֆառավա գործունեության մասին» 1943 թվականին Ազգային-եկեղեցական ժողովին ներկայացրած իր զեկուցագրում ընդգծել էր Հոգևոր ձեմարանի վերաբացման անհրաժեշտությունը. «Ս. Էջմիածինը, որպես համայն հայության կենտրոն, պիտի ունենա քավարա թվով կուսակրոն հոգևորականություն և ֆանանայություն: Հոգևոր դաս պատ-

4
բատող հաստատությունը Մայր Աթոռ Պետրոսյան ձեմարանն էր, որը դադարել էր գոյություն ունենալ 1917 թվականից, որի հետևանքով մեծ կարիք էր զգացվում քե՛ կուսակրան հոգևորականության և քե՛ քառանասիրյան, մանավանդ միութենական ներքին քեմերում և Մայր Աթոռում:

Այսօր, ի միխրաություն բոլորիս, կարող եմ հայտարարել, որ դժվարագույն խնդիրներից մեկը լուծվել է հիմնական կերպով և օրինական եղանակով. Ս. էջմիածինն իրավունք է տրված Հոգևոր ձեմարանն ունենալ:

...Այս հիմնական աշխատանքը կատարելուց հետո, թվում է, քե՛ իրավունք ունենալու. ես իմ պարտքս կատարեցի: Պատկանելի ժողովից է մնում ձեմարանի տնտեսական ապահովության կարիքը հոգալ՝ սակայն ապահովության կարիքը հոգալ (էջմիածին, 1946 թ., № VI—VII, էջ 8—9):

1945 թվականի հունիսին, Մայր Աթոռում գումարով Ազգային-եկեղեցական պատկանելի ժողովը, իր հունիսի 19-ի և 20-ի նիստերում, զբաղվում է Հոգևոր ձեմարանի տնտեսական ապահովության խնդիրներով: Համագային այդ ժողովում պատգամավորների կողմից հանդիսավոր և խանդավառ խոստովանել են լինում հոգալու ձեմարանի 40 տաների թռչվելը, յուրաքանչյուրի համար տարեկան 500 դոլարի ծախսի նախնադրվով: Նույն ժողովում կազմվում է եռաբայց Հոգևոր ձեմարանի 1945—1946 ուսումնական տարվա ծախսերի 1 150 000 ռուբլու հասնող նախաճաշիկը:

Նորերտի Հայրապետը ապա լծվում է Հոգևոր ձեմարանի վերաբացման նախապատրաստական աշխատանքներին: Ձեմարանը ապահովվում է որակյալ դասախոսական կազմով, հոգացվում են ուսանողության դասադասական, գրեական, կենցաղային, սննդի և առողջապահության վերաբերյալ անհրաժեշտ կարիքները և, ի մեծ ուրախություն բոլորի, 1945 թվականի նոյեմբերի 1-ին հեշում է Հոգևոր ձեմարանում դասավանդության գվարք գանգը:

Հոգևոր ձեմարանի վերաբացումից հետո, Քեռոց Զ-ը, հեշելով երա առաջ դրված կարևոր հարցերը, գում էր. «Այժմ վստահ կարող եմ լինել, Ս. էջմիածնի ձեմարանը, Ս. Նուսադեմի և Կիրիլիոն ընծայարանների հետ, ըստ ամենայնի ի վիճակի կլինեն հայ ժողովրդի հոգևոր-եկեղեցական կարիքներն հոգալու և ետա կրեական դաստիարակության գործը քարծ մակարդակի վրա գնելու, որն այնքան կարևոր է հայ ժողովրդի հոգևոր գորացման, կույուրական քարծ-րացման և ազգային ինքնագիտակցության համար»:

Վեհափառ Հայրապետի պահանջով, Հոգևոր ձեմարանի ուսումնական ծրագրում լայն տեղ էր հատկացված եկեղեցական մասնագիտական և հայագիտական առարկաներին: Վերաբացվող Հոգևոր ձեմարանի ուսումնական ծրագիրը մեր կրեական եման քարծրագույն ընծայարանների ծրագիրն էր: Բացի եկեղեցական, կրեական մասնագիտական առարկաներից, որոնք բնորոշում էին ետաբայց ձեմարանի Հոգևոր եկարագիրը, ծրագրում լայն տեղ էր հատկացված եան հանրակրական առարկաներին, հատկապես լեզուներին՝ գրաբար, ռուսաց լեզու, անգլերեն, ինչպես եան հայագիտության, այլ թվում հայոց պատմության, հայոց մատենագրության, հայկական եկեղեցական տոմարին:

1946 թվականի ապրիլի 1-ին գրած եր անդրանիկ կեղեցական Քեռոց Զ-ը Հոգևոր ձեմարանի մասին գում էր հետևյալը. «Պիտի կարողանամ առդյոք ետաբայց Հոգևոր ձեմարանը իր քարծրության հասցենի՝ մատակարարելով Հայ եկեղեցուն առծանավոր հովիվներ»:

Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վագգեմ Ա Ամենայն Հայոց Հայրապետի գանակության առաջին իսկ օրից Հոգևոր ձեմարանը դրվեց ավելի լուրջ հիմքերի վրա, քարծրացեելու համար Հոգևոր ձեմարանի մակարդակը և պատրաստելու համար իր կոշումին ավելի գիտակից հոգևորականություն, ինչպես, հեշ է Վեհափառ Հայրապետն եր անդրանիկ կեղեցական, քարպեսգի ան առավելագույն շափով առդարացեն իր գոյությունը և այսօրվան մեր համեոտ և երկշտ պատանիները, տարիներ հետո՝ մարմնով անած ու հոգիով գինված, հավատով և շնորհներով յի, եվրոյալ մշակներ դառնան Տիրոջ այգիին մեջ»:

Հոգևոր ձեմարանը, իր բնույթով, Հայ եկեղեցուն համար ետ հոգևորականություն պատրաստելու կոշված մի սուրբ հաստատություն է, որն ամենից առաջ աշխատում է ուսանողության մեջ մշակել, խորացեել հայ հոգևորականի եկարագիր և կրեական կյանքի սեր:

Վեհափառ Հայրապետի ցանկությամբ և ծրագրով, Մայր Աթոռ Ս. էջմիածնի Հոգևոր ձեմարանը կոշված է մեծ և պատվավոր դեր կատարել մեր հոգևոր վերագարքոնքի շարման մեջ, իր կոշման և պարտականության գիտակից, բազմակողմանիորեն գարացած, հավատավոր և հայրենասեր հոգևորականություն պատրաստելու ասպարեզում:

Անցյալում, հայ հոգևորականություն պատրաստելու ասպարեզում և մեր մշակույթի գարացման պատմության մեջ, խոշոր և

շնորհակալ դեր են կատարել մեր հոգևոր հիմարանները, դպրեվանհները և բնծայարանները: Էջմիածին, Դվին, Աղբաժար, Սանահին, Հաղբատ, Գլածու, Տաթև, Կաթմիր վանք, Սիս, Նուսահեմ, Արմաշ և այլ հոգևոր կենտրոնների անուններ վաղուց մտել են արդեն մեր մշակույթի և մանկավարժության պատմության մեջ:

Ս. Էջմիածնի Հոգևոր ձեմարանը հազարամյա պատմություն ունի:

Այս նույն վայրերում՝ Էջմիածնում, վաղարշապատում, շատվաղուց և եղել վանական-եկեղեցական դպրոցներ՝ աշակերտների մեծ խմբերով, ինչպես վկայում է Կառլոսը: «Արաբատյան դաշտում, հայոց ամենահին ու ամենախոշոր կրոնական և հոգևոր կուլտուրայի կենտրոնն է եղել Էջմիածինը: ...Հայոց առաջին դպրոցները, սկսած 4-րդ դարից և հատկապես հայագիր դպրոցները 5-րդ դարում, հաստատվել են Էջմիածնում, Վաղարշապատում, և եթե հաշվի չառնենք ծանր ժամանակների հետևանքով առաջացած փոքր ընդմիջումները, ապա այստեղ միշտ էլ դպրոցներ են եղել, մասնավորաբար Կաթողիկոսարանին կից վանական միջին ու բարձր տիպի դպրոցներ» (Ա. Խ. Մովսիսյան, «Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության», Նրևան, 1958 թ., էջ 260):

Ե դարը միաժամանակ հայ դպրոցների ստեղծման և կազմակերպման դարն է: Հետագայում մեր երկրի ֆաղափական կյանքի ծանր կացությունը խոչընդոտել է միշտ մեր մշակույթի և դպրոցական շինարարության առաջընթացը: Այնուամենայնիվ, ի դեմս մեծ գոհողության և զրկանքների, դպրոցները պահել են իրենց գոյությունը՝ որպես հայ մշակույթի օջախներ և հայ կրթության վառարաններ, կենտրոնացնելով վանքերում:

Հայկական վանքերն են, որ միջնադարում հսկայական դեր են խաղացել հայ կյանքի ֆաղափական, հասարակական, կրոնական և կրթական ասպարեզում: Վանքերը հոգևոր, մշակութային կենտրոններն էին, որոնցում ամփոփված էին նաև մեր գիտությունն ու արվեստը, մշակույթն ու դպրությունը: Էջմիածնի վանքն ու դպրոցը, որպես հայ դպրության առաջին օջախներից մեկը, մեծ ազդեցություն են ունեցել հայոց օրիշ շատ դպրոցների վրա:

«Էջմիածնի այսպես կոչված «նոր դպրոցը» հիմնադրվեց 1441 թվականին: ... Որոշ ընդհատումներով իր գոյությունը պահպանեց երկար ժամանակ, մինչև 16-րդ դարի առաջին կեսին հիմնադրված ժողովրդավարաց դպրոցը և հետո էլ Գևորգյան ձեմարանը...: Էջ-

միածինը, որպես հայոց հնագույն հոգևոր կրթության կենտրոն... հայոց կուլտուրայի և կրթության պատմության մեջ կատարել է վիթխարի դեր» (Ա. Խ. Մովսիսյան, նույն տեղում, էջ 261):

Ահա այսպիսի հնագույն ավանդություններով և պատմական առաջնությամբ հարուստ մի հոգևոր-մշակութային հաստատության շարունակությունն է մեր այսօրվա Հոգևոր ձեմարանը, իսկ ուսանողությունը ճշմարիտ ժողովրդողն է անցյալի մեր փառքի, ավանդությունների և մշակութային նվաճումների:

Մեր օրերում էլ Ս. Էջմիածնի Հոգևոր ձեմարանը, որպես հարազատ շարունակությունը Վաղարշապատի հին դպրոցի և Գևորգյան ձեմարանի, իր գոյության համեմատաբար ավելի կարճ ժամանակաշրջանում, պատվով է կատարել իր պարտքը հայ ժողովրդի հանդեպ և արդարացրել Ամենայն Հայոց երկու Հայրապետների՝ լուսաճաղի Ս. Գևորգ Զ-ի և Նորին Ս. Օծություն Ս. Ս. Վաղգեն Ա-ի ակնկալությունները:

Այսօր էլ մեզ հարկավոր են հոգևոր մշակներ, նոր ժամանակների պահանջի համապատասխան դաստիարակված, զինված նոր գիտությամբ, նոր ոգով ու անկախում հավատով՝ առաջնորդելու համար Հայ եկեղեցու կյանքը:

Հոգևոր ձեմարանը տվել է իր երախայրի՝ կուսակրոն և ամուսնացյալ եկեղեցականների առաջին և երկրորդ խմբերը, վարդապետ, ֆահանա և սարկավագ, ժոռեֆ, ավարտելով ձեմարանի դասարանական և լսարանական բաժինները, իրենց ուսերի վրա են վերցրել մի ծանր բայց ֆաղթ լուծ, այն է՝ հոգևոր սպասավորության և նվիրման աննահանջ սիրով, հայ հոգևորականի կոչման բարձր գիտակցությամբ, աշխատելով բար ծառայել վեհափառ Հայրապետի դեմքով և հոգով: Մյուս Աթոռ Ս. Էջմիածնի հովանու ներքո՝ ԱՍՏՄՈՒՆ, ԺՈՂՈՎՋՐԴԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑՈՒՆ: Հոգևոր ձեմարանի բազմաթիվ այլ շրջանավարտներ ընտրել են ուսուցչական, գրական ասպարեզը, օգտակար լինելով հայ դպրոցին ու գրականությանը:

Ճիշտ է, որ համեստ է 15 տարիների այս արդյունքը: «Հունձի բազումը՝ հեն և մշակի սակափ: Աղաչեցէ՛ք գտն հեճոցն, զի յարուսցէ մշակս ի հունձս իւր»: Բայց մեծ է և հուսադրի այդ հունձի ապագա հեռանկարը, բարոյական նշանակությունը և ազգային-եկեղեցական իմաստը:

Կարևորն այն է, որ ֆայլ առ ֆայլ, ֆար առ ֆար ամրապնդվում է Սայր Աթոռ Վե-

հափառ Հայրապետի հովվապետական ծաղկած գավազանի ներքո, ի մխիթարություն և հուրախություն հայ հավատացյալ ժողովրդի:

Մահալության, նվիրման ոգին, որ հատուկ է եղել մեր հոգևորականության մեր եկեղեցական պատմության ողջ ընթացքում, վառ է նաև այսօր Հոգևոր ձեմարանի շրջանավարտ կուսակցուն և ամուսնացյալ մեր եկեղեցականության մեջ: Ավելի քան մխիթարական ու քաջայերիշ է այն պայծառ փաստը, որ չի մնել նախնայաց ծառայության. նվիրման, աշխատասիրության ոգին. հավատն ու հռաչքը մեր օրերում ևս Հոգևոր ձեմարանից շրջանավարտ մեր կուսակցուն և ամուսնացյալ հոգևորականության և քաջ շրջանավարտների սրտերում, որոնք կոչված են արժանավոր ժառանգորդները լինելու մեր նախնայաց արյունով և քրտինքով ձեռք բերված անկրկնելի հոգևոր արժեքների, որոնց գանձարանն է Հայաստանայաց Առաքելական Ս. եկեղեցին:

Հոգևոր ձեմարանը այսօր թևակոխել է իր գոյության 15 տարին: Վեհափառ Հայրապետը, հայ հավատացյալ ժողովուրդը, ժամանակի հանգամանքներն ու պահանջները նոր և հրաշալի խնդիրներ են դրել Հոգևոր ձեմարանի առաջ: Հոգևոր ձեմարանը, գիտակից իր կոչման և առաքելության, իր կարելիք կատարելի, արդարացնելու համար իր վրա դրված հույսերը:

Հոգևոր ձեմարանի վերատեսուչ գերապետիվ Ս. Հայկազուն սրբազանը արդեն մեկնել է արտասահման, վեհափառ Հայրապետի արտոնությանը, 10—15 ուսանողներ բերելու համար նաև Սփյուտֆից, որպեսզի նրանք, ներքին թեմերից եկած Հոգևոր ձեմարանի ուսանողության հետ միասին, «սիրտ ի սիրտ և ձեռք ի ձեռք», կազմեն Հոգևոր ձեմարանի մեր այսօրվա ուսանողությունը,

հոգեին նվիրված այն վեհ գաղափարին, որի համար նրանք եկել են ուսանելու: Հոգևոր ձեմարանի կամարների տակ:

Ե դարում ևս Մեսրոպ Մաշտոցը, Վաղարշապատի հայագիր դպրոցը ճիմնելուց հետո, ըստ հորենացու վկայության, մտածում էր նաև Հայոց Ազգի համար. որը գտնվում էր հոռոմների քաղաքության տակ: Խորհնացին վկայում է, որ Մեսրոպ սկսեց «երազապես վարդապետել զարևմտեայսն, որպէս դարեկեիայսն»:

Հոգևոր ձեմարանի գոյության, հարատևության, նրա բարոյական և իմացական մակարդակի բարձրացման հարցը ողջ հավատացյալ հայ ժողովուրդի հավատի. պատվի և խղճի հարցն է. և միաժամանակ մեծ և կայուն երաշխիք ապահով. հաստատուն և արդյունավետ դարձնելու մեր ազգային-եկեղեցական կենսունակությունը, զարթոնք: Այժմ խնդիրն այն է, որ մեր քույր թեմերը հասկանան Հոգևոր ձեմարանի պատմական դերն ու նշանակությունը Հայ եկեղեցու կյանքում և իրենց սրտի ամենամոտ հաստատությունը դարձնեն այն, ինչպիսին է նա Ամենայն Հայոց Հայրապետի համար:

Ե դարում դեպի վաղարշապատ էր դիմում Հայաստանի տարբեր գավառներից հայ ուսումնասեր և հավատավոր երիտասարդությունը, նորարաց «Աստուծո գիտության աղբյուրին», ինչպես վկայում է կուրյունը: Այսօր ևս քաց է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր ձեմարանը, ուր պետք է դիմեն հոգևորական դառնալ ցանկացողներ, «ի կողմանց և Կ զաւառաց Հայաստան աշխարհի, յորդեալ և Կրդեալք», ինչպես նաև Սփյուտֆի մեր թեմերից, «ի բացեալ ազգիւրն զիտութեանն Աստուծոյ, Կանգի յԱրարատեան գաւառին րդխցիկն հայոց շնորհ պատուիրանացն Աստուծոյ» (Կուրյուն):





ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒՇԱԿՅԱՆ

ԿՈՉՁԻՄԻՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ Է, ՈՐ ԿԿՏՅԱՐՆԸ ԵԳՐԹԵՄ ՄԱՐԳԸ

(Այլակերպության տոնին առթիվ խոսկումներ)

«Նա արժ Երկու (Մովսէս և Աղիա) խօսելից ընդ մեա...
և ասելիցն զոր կատարելոցն էր յնորոտաղմոս:
ՂՈՒԿԱՆ Բ. 30

1. Ավետարանական պատկերին այս պզտիկ գիծը ներշնչող է մեծավայելուչ նկարի մը շափ. խորհրդավոր տեսարանի մը հաղորդած տարտամ տպավորությանց մեկ փշրանքն է ան, որուն մեջ կշռդա, սակայն, լույսի հստակ ճաճանշ մը:

2. Որեւէ մարդ, որեւէ գործիչ մանավանդ, որ զաղափարի մը հետ կապած է իր կյանքը, կամ իղնալի մը նվիրած, պետք է հաճախ ունենա աղոթքի շափ լուրջ և ինքնամփոփ պահեր, որոնց մեջ կարենա անդրադառնալ իր անձին ու գործին, իր պաշտոնին ու կոչումին վրա, լուսավորվելու համար իր պարտականության զգացումովը: Հոգեկան այդպիսի կացության մը անձնատուր եղողը իր մեջ հառաջ կրերն քարոյական այնպիսի պայծառություն մը, որ կրնա բովանդակապես տեսնել ինքզինքը, իր էության ամեննն մթին խորքերուն մեջ, ըմբռնել իր թերությունները, և գիտակցել իր առավելություններուն և ձգտումներուն: Ինքնամտածումի այդ բույնն հոգիին պայծառակերպության պահն է:

3. Այդ պահը ա՛յնքան ավելի հարազատ հանդիսավորությունը կըլլա հոգիին, որքան ավելի հեռավոր հորիզոնի մը վրա կրացվի վարագույրը. որքան ավելի, անձին զգացումնն վեր՝ ցնդին ղգացումը, անհատին հոգինն վեր՝ համայնքին հոգին երևին հոն:

Մեծ մարդիկը, մեծ գործիչները, իրենց ցնդին առավելություններուն ավելի կամ նվազ փառավոր խտացումներն են: Անձի մը նկարագիրը այնքան ավելի առկուն կըլլա և զնդեցիկ, որքան ավելի իր ցնդին առաքինություններն ու զնդեցկություններն են անոր բաղկացուցիչ տարրերը: Ժշմարտապես մեծ կրնա լինել ա՛յն անձը միայն, որ, իր կոչումին վրա մտածած պահուն, կրնա արթնցնել իր արյան մեջ նիրհող աղնվագույն հին բնաղզները. որ կրնա իր խղճմտանքին մեջ կենդանացած զգալ իր պատմության փառավորագույն տիպարները:— Հոգեբանական այդ օրենքին համեմատ է, որ Հիսուսի գիտակցության մեջ կվերերևին և իրեն հետ կխոսակցին Մովսէս և Եղիա:

4. Ահա Հիսուսի հավիտենական օրինակը, որ Թարորի բարձունքնն կավանդվի մեզի: Մովսէս և Եղիա—օրենքն ու նախանձախնդրությունը. արդարությունը և համոզումի քաջությունը: Որպեսզի զաղափարական գործի մը կարենա ընթանալ ղնայի իր կոչումին վախճանը, պետք է որ ունենա այդ երկունքն. պետք է որ արդարությունը ուղղի իր քայլերը, և անկեղծությունը թռիչք տա իր հոգվույն: Այդ երկուքը ունեցող անձը միայն կրնա իր վրա փայլեցնել մեծ նկարագիրներու շնորհքը, որ աղնվությունն է սրտին և պայծառակերպությունը հոգիին. առանց ա.

նոնց՝ մարդկային կյանքը կկորսնցնեն ամեն
ինչ, որ գաղափարական է իր մեջ, ու կվե-
րահվի անասնական վիճակի մը:

5. Վասնզի, ինչպես ըսված է, օրենքը
պարտականությանց լույսն է, և ո՛րքափ ա-
վելի ունենանք այդ լույսն, ա՛յնքան ավելի
ընդունակ կըլլանք ճանշնալու և կատարելու
մեծ պարտականությունները. ու օրենք մը
ա՛յնքան քաղցր է ու սրտազդեցիկ, որքան
ավելի բարոյական է անիկա: Կյանքին մեջ
երկու բան կա զեղեցիկ. աստեղազարդ եր-
կինքը՝ մեծ գլխուն վերև, ու բարոյական օ-
րենքը՝ մեծ ներսիդին, Արդարության սեփ-
րնադուր զգացում մըն է սրտին համար:
Հոգիին ջիղն է ան, եթե հնար է այսպես
ըսել: Բայց ինչպես առանց մարդանքի շու-
տով կխանգարվի մարդուն ջղային կազմը-
վածքը, նույնպես առանց օրենքի շուտով
կխամբի արդարության զգացումը. ան է,
օրենքն է, որ կմտրակե, կուղղե, մշտական
կանոնավորության մեջ կպահե արդարու-
թյան զգացումը: Որովհետև, մինչդեռ արդա-
րության փափազը անձնական զգացում մըն
է, օրենքը, ապրված փորձառություններու,
զտված և ճշտված նկատողություններու ար-
դյունք, հանրային սկզբունք մըն է, ժամա-
նակի և ընկերությանց շրջաններուն մեջն
հառաչացած, և մեծ միտքերու հավանու-
թյամբը կնքված:

6. Բայց ո՛չ արդարության սերը և ո՛չ օ-
րենքին հարգանքը պիտի չարժեն ոչինչ, ե-
թե բան մը, բարոյական ուրիշ գործություն
մը չփոխարինե՞ր զանոնք կյանքի: Այդ գո-
րծությունն է անկեղծությունը, համոզումին
բացությունը: Սրտի անվերապահ հորդում,
անիկա նախանձախնդրություն կստեղծե

հոն, ուր, առանց իրեն, մեռյալ տառ մը սի-
տի մնար օրենքը. զիմադրության անընկճե-
լի ոգի մը կկազմե հոն, ուր, առանց իրեն,
լի ռառ մը պիտի մնար արդարությունը, ու,
առաքինության այլազան ձևերուն տակ, փի-
լիսոփա կընե մաղդը բայցա՛ն: դաժանու-
թյուններուն դեմ, անվհատ ու անվեհեր՝
կյանքի զգվարություններուն մեջ, ամբակուռ
և աննվաճ՝ փորձությունց մոլորեցնող սագ-
րանքներուն առջև:

7. Մովսես և Նղիա. օրենքն ու անկեղծու-
թյունը, արդարությունն ու անձնվիրություն-
ներ. այդ երկուքն է, որ կխոսքն շիտափ գի-
տակցության մեջ, հիշեցնելով իրեն նորու-
սաղեմը, ուր պիտի երթար՝ վերջին անգամ
ըլլալով: Ու անոնց լույսովն է, որ Անիկա
Թարորի փառքին մեջեն կտեսնեն լեռան ստո-
րոտը, կյանքի դաժան դառնությանց մեջ
զալարվող մարդկությունը, և ավելի հեռուն՝
Գողգոթայի կախաղանը: Իր ցեղին հոգիեն
փրթած զույգ մը ճիշերն են անոնք, որ իր
կոշտվին՝ իր փրկարար պաշտոնին գիտակ-
կոշտվին՝ իր փրկարար պաշտոնին գիտակ-
կանությանց զգացումը նորոգելով և զորաց-
կանությանց զգացումը: Ու իր անձին և գործին, իր
նեղով Անոր մեջ, ու աշակերտները կտես-
նեն զինքը փառավորված ասավածային մեծ-
վայելությամբ, վասնզի չկա մարդկային
հոգիին մեջ զինքը ստուգապես բարձրացնող
բան մը՝ քան պարտականության սեփն ու
կամքը, որ իր կատարելության կհասցնե,
կամ, կրոնական բացատարությամբ, կպա-
ծառակերպե մարդը:

(Երեսադեմ, «Սինո» ամսագիր,
1933 թ., օգոստոս, № 8):



Ա Ր Ե Վ Ե Վ Զ Յ Ո Ւ Ն



արդու մը ձայնը, վեմե մը ե-
լած, զայն անվանեց Որդի Մար-
գո. ուրիշ ձայն մը, ամպե մը ելած,
զայն պիտի կոչե Որդի Աստուծոյ:

Ամենաբարձր է Հերմոն լեռը և երեք
կատար ունի. ձյունախաղաղ՝ կրակի եղա-
նակին իսկ. Պաղեստինի պինդ բարձր լե-
ռը, ավելի բարձր քան Քաբու. Հերմոն լեռ-
նեն, կրսե սաղմոսերգուն, կուգա ցողը Սիո-
նի բլուրներուն: Այս լեռան վրա, լեռներուն
ամենաբարձրը Քրիստոսի կյանքին մեջ, որ
իրո հանգրվան ունի բարձունքները—լեռ
փորձության, լեռ երանության, լեռ աշխ-
կերպության, լեռ խաչելության—Հիսուս բո-
լոր լույս եղավ:

Երեք աշակերտներ միայն էին իր հետ.
ան, որ վեմ կկոչվեր և Որոտման որդիները:
Ժայռը և Մրրիկը, ընկերություն՝ հարմար
տեղվույն և վայրկյանին, կաղոթեք միայն,
մեկուսի, բարձրը, անոնցմե և ամենքեն ա-
վելի բարձրը, գուցե ծուկները ձյունին մեջ,
Ո՛վ չէ տեսած, ձմեռ ասոն, լեռսն վրա, որ
ամեն սպիտակություն բաղդատաբար կդառ-
նա նսեմ և գորշ: Դժգույն դեմք մը կթփի
տարօրեն սեցած, լվացված կտավ մը կթփի
աղտոտ, թուղթը գույնն ունի շոր տիղմի:
Այն օրն հակառակը կտեսնվի, ամայի և
չինչ և երկնամուխ այն բարձունքին վրա:

Հիսուս, միևնվորիկ, կաղոթեք մեկուսի:
Հանկարծ իր դեմքը փայլեցավ ինչպես արե-
ղակը, և իր զգեստները պայծառացան ինչ-

պես ձյունը, որ կփայլի արևուն մեջ, չինչ
ինչպես ոչ մեկ նկարիչ կամ ներկիչ պիտի
կրնար ներկել կամ երևակայել: Զյունին
պայծառության վրա պայծառություն մը ա-
վելի հզոր, շողուն մ'ավելի զորավոր քան
բոլոր ճանցված պայծառությունները,
կհաղթեք ամեն երկրավոր լույսի:

Պայծառակերպությունը հանդեսն ու
հաղթությունն է լույսին: Մնալով դեռ—այն-
քան քիչ ատենի համար—մարմին և նյութ,
Հիսուս կառնե նյութին ավելի նուրբ, ավելի
թեթև, ավելի հոգեղեն վիճակը: Իր մարմի-
նը, որ կսպասե ազատարարին, կդառնա
լույս արևու, լույս երկնքի, լույս իմացա-
կան և գերբնական. իր հոգին աղոթքին մեջ
գերմարդկայնացած, տեսանելի կլլա իր
հրաշեկ փայլեցով մարմնույն ու կտավին
պատենշեն, ինչպես բոց մը, որ կուտե պա-
տերն, ուր փակված էր և զանոնք թափան-
ցիկ կընե:

Բայց լույսն հավասար չէ դեմքին և
զգեստներուն վրա: Դեմքին լույսը արևուն
լույսն է, զգեստինը կնժանի ձյունին պայ-
ծառության: Դեմքը՝ հայելի հոգվույն, կրա-
կին զույնն ունի. զգեստները՝ ածանցված և
ծառայական՝ սառի. Վասնդի հոգին արե է,
կրակ է, սեր է. բայց զգեստները, բոլոր
զգեստները, նաև այն ծանր զգեստը, որ
մարմին կկոչվի, անթափանց է, սառուցիկ,
մեռուտ, և չի կրնար փայլիլ, եթե ոչ անդ-
րադարձ լուսով:

Բայց Հիսուս, բոլոր լույս, դեմքովը, որ կկարմրի և կփայլատակե հանդարտ փայլափունքով, զգեստներովը, որ կշողշողապալատե արծաթե սպիտակությամբ—ոսկի, որ կկայծակե արծաթին միջև—միայն չէ, Երկու մեծ մեղավորներ, շինչ ինչպես ինքը, կմոտենան Անոր և կխոսին հետը։ Մովսես և Նոյի։ Առաջինը փրկիչներուն, առաջինը մարգարեներուն։ Լույսն և կրակն մարդիկ ետևան վկայութիւն բերելու նոր Լույսին, որ կկայծակե Հերմոնի վրա։ Բոլոր անոնք, որ խոսած են Աստուծո հետ, կմնան լույսի մէջ ծրարված ու թաթալուն։ Մովսեսի դեմքին սորթը, երբ իջավ Միջագետքէն, այնքան փայլուն դարձած էր, որ ստիպվեցավ քողով զննել ծածկել լշտանելու համար իր ընկերները։ Եվ Նոյի հափշտակվեցավ Երկինք հրեղեն կառքով, ջաշված հրեղեն ձիերի, Հովհաննէս, նոր Նոյի, քարոզեց կրակի մկրտութիւնը, բայց իր դեմքը, եթե սեղավ արեւն, շփայլեցավ ինչպես արեւը։ Միակ պայծառութիւնը, որ իրեն վիճակվեցավ, եղավ ոսկեղեն սկուտեղիքը, ուր դրվելով իր արյունաշաղախ գլուխը, արքայական նվեր Հերովդեսի քրեիքուր՝ աղաշուր հարձին։

Բայց Հերմոնի վրա Ա՛ն է, որ կփայլի դեմքովն ազնիւ քան Մովսեսը, և պիտի վերանա երկինք ազնիւ կատարյալ կերպով քան Նոյի—Ա՛ն, զոր Մովսես խոստացած էր և որ պիտի դար Նոյիայն վերջ, Նոյի մէջ Անոր քով, բայց վերջն աներևութանալու համար ընդմիջու։ Այս վերջին վկայութենէն վերջ այլևս կարևոր չեն։ Աշխարհը այլևս


պետք պիտի լուսննա իրենց օրենքին և իրենց հույսերուն։ Լուսնդն ամպ մը կծածկե երեք պայծառակերպները նրեք մթինն։ Բուն աշխարհն, որ կապասն, և ամպն մը մայն մը կիջն աղաղակելով։ «Ա՛դ է իմ սիրելի Որդին, աղո՛ր մտիկ ըրեց»։

Ամպը լի ծածկեր լույսը, այլ կկրկնապատկե ինչպես մորկին ամպն կփրթի փայլակը, որ կլուսավորե հանկարծ դաշտը, կիջն բոցը, որ կսպառե, կայրե հին կտակը և կհաստատե հավիտյան նոր ավետիքը, Հորդանան, սև ամպը, որ կլեցնէր Տապալանակը և զայն կծածկեր վախի և պղծութեան օրերուն մեջ, եղած է վերջապես ամպ մը լույսի այնքան հզոր, որ կծածկե մինչև իսկ արեգակնային պայծառութիւնը դեմքին, որ պիտի ապտակվի վերահաս աղաւաղութիւն մեջ։

Բայց ամպը կցնդի և դարձյալ մենավոր է Հիսուս։ Երկու հառաջընթացներն ու վկաներն անհետացած են, իր դեմքը առած է ընական գույնը, իր զգեստը ամեն օրփան է։ Քրիստոս, սիրային եղբայրը դարձած, կդառնա սահմակած ու շմորած ընկերներուն։ Եւ մի վախնաք, բայց ո՛չ ոքի մի՛ պատմեք ինչ որ տեսաք, մինչև որ Մարդուն Որդին մեռելներէն հաննու։

Պայծառակերպութիւնը ստվերագիծն է Համբարձման...

(«ՊԱՍՏԱՐԱՆՈՒՄ» ԳԵՐԱՐԱՆ, ԲԵՐԼԻՆ, Զ. ԱՐԱՅԵՆ ՂԱՍԱՐԻՍ ՂԱԳԻԿՅԱՆ, ՎԼԵՆՏԻՆԻ, Ս. ՂԱԳԱՐ, 1928)։





Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ

ՀՈՒՆԻՍԻ 23-ԻՆ ՀԻՆԳՇԱՐԹԻ, Մայր Աթոռ վերադարձան Հոգևոր Ժեմարանի դասախոսական կազմը և ուսանողությունը՝ վերատեսուչ **Տ. Հայկազուն** եպիսկոպոս Արքահամյանի գլխավորությամբ, շրջադայելուց հետո Հայաստանի մի շարք տեսարժան վայրերում և վանքերում: Երջպատույտը տեղի շորս օր: Զրոսպատույտի մասնակիցները այցելեցին Քալիշի եկեղեցին, Հադեա վանքը, Լենինականի եկեղեցիները, Սանահին և Հաղբառ վանքերը, Օձունի բազիլիկան, Գոշավանքը, Սևանի վանքը:



ՀՈՒՆԻՍԻ 26-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց **Տ. Առնակ** քահանա Գասպարյանը, որ Ամերիկայի Միացյալ Նահանգներից՝ Դիտրոյտից, ուխտավորաբար Մայր Աթոռ էր ժամանել՝ ի գլուխ մի խումբ ամերիկահայ տուրիստների: Պատարագի Տեր հայրը խոսեց նախ ԱՄՆ-ում Վեհափառ Հայրապետի այցելության առթիվ ստեղծված ժողովրդական խանդավառության մասին, ապա վեր առավ Հայ եկեղեցու դերը ԱՄՆ-ում ապրող հայության մեջ ազգային ոգի, հավատ և հայրենասիրություն արթարծելու գործում:

Հավարտ սուրբ պատարագի, ամերիկահայ տուրիստները իրենց ուխտը կատարեցին Իջման Ս. Սեղանի առաջ և ստացան սուրբ հաղորդություն:

Սուրբ պատարագի ընթացքում կատարվեց Հոգեհանգիստ՝ ուխտավոր ամերիկահայ հավատացյալների նշեցյալների հոգիների փրկության համար:

Պատարագից հետո հյուրերը, իրենց ղեկավար **Տ. Առնակ** քահանայի առաջնորդությամբ, բարձրացան Վեհաբան, որտեղ գերաշնորհ **Տ. Սահակ** արքեպիսկոպոսը, գերաշնորհ **Տ. Հայկազուն** եպիսկոպոսը և Տիրամայրը պատշաճ սիրով ու հարգանքով ընդունեցին նրանց: Տեր հայրը հաղորդեց ամերիկահայ թեմի կյանքի մասին թարմ լուրեր, ինչպես նաև ականատեսի վկայություններ

Վեհափառ Հայրապետի Ամերիկայի Միացյալ Նահանգներում գտած փառավոր ընդունելության և ազգային-եկեղեցական գործերի մասին:



ՀՈՒՆԻՍԻ 29-ԻՆ, ԶՈՐԵՔՇԱՐԹԻ, արժանապատիվ **Տ. Առնակ** քահանա Գասպարյանի առաջնորդությամբ, Մայր Աթոռ ժամանեց ամերիկահայ տուրիստների երկրորդ խումբը և արժանացավ պատշաճ ընդունելության: Հյուրերը եղան եկեղեցական արվեստի թանգարանում, այցելեցին վանական շինություններն ու նորոգումները, եղան Հոգևոր Ժեմարանում և գրադարանում: Հարգելի հյուրերը Վեհարանում ընդունվեցին պատշաճօրեն և իրենց հետ վերցրին Մայր Հայրենիքի և Մայր Աթոռի սրբազան ու խնկարույր հողից:



ՀՈՒՆԻՍԻ 2-ԻՆ, ՇԱՐԱԹ, «տուն գիտի նշխարաց Սրբուն Գրիգորի Լուսաւորլին մերոյ»: Մայր Տաճարում եպիսկոպոսական հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց Հոգևոր Ժեմարանի վերատեսուչ գերաշնորհ **Տ. Հայկազուն** եպիսկոպոս Արքահամյանը և քարոզեց՝ ծանրանալով Ս. Գրիգոր Լուսավորչի կատարած եկեղեցաշինական, կազմակերպական և լուսավորական գործունեության վրա:



ՀՈՒՆԻՍԻ 7-ԻՆ, ՀԻՆԳՇԱՐԹԻ, «տուն Սրբոց Թարգմանչացն մերոց Սահակայ և Մեսրոպայ»: Մայր Աթոռի միաբանությունը և ուսանողությունը, լուսարարապետ գերաշնորհ **Տ. Սահակ** արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի գլխավորությամբ, ուխտի գնաց Օշական՝ Ս. Մեսրոպի գերեզմանը:

Օշականի Ս. Մեսրոպի անվան եկեղեցում սուրբ պատարագ մատուցեց Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ

Տ. Վահան վարդապետ Տերյանը և քարոզից Ս. Սահակի և Ս. Մեսրոպի գործունեության մասին՝ գրերի գլուխի և Աստվածաշնչի հայերեն թարգմանության միջոցով:

Հավարտ սուրբ պատարագի կատարվեց հոգեհանգիստ՝ եկեղեցու բակում հանգչող և Ս. Մեսրոպի մեծ աշակերտ Վահան Ամատունի իշխանի գերեզմանի վրա:

Միաբանությունը և ուսանողությունը ժամը 1-ին վերադարձան Մայր Աթոռ:



ՀՈՒՆԻՍԻ 7-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, ժամը 2.30-ին վանքի սեղանատանը, Հոգևոր Ժեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Արարհամյանի արտասահման ուղևորվելու կապակցությամբ, կազմակերպվել էր հրաժեշտի ընդունելություն, որին ներկա էին, լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ՝ արքեպիսկոպոսի գլխավորությամբ, Մայր Աթոռի միաբանությունը, Տիրամայրը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Վերստուգիչ հանձնաժողովի անդամները և ուսանողությունն ու պաշտոնեությունը:

Ճաշկերույթի ժամանակ Հայկազուն սրբազանին ողջերթ մաղթեցին գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը, գերաշնորհ Տ. Ծղևիկ և Տ. Վարդան եպիսկոպոսները, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ պր. Ա. Տիրացյանը, Վերստուգիչ հանձնաժողովի անդամ պր. Ծիրին Ալեքսանյանը, Արարտյան թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Տերյանը, Տիրամայրը, ժեշմիածին՝ ամսագրի խմբագիր պր. Ա.

Հատիտյանը, Հոգևոր Ժեմարանի վերակացու արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարությանը և բարեշնորհ Պետրոս և Հովհաննես սարկավազները, Բյուսարանի ուսանող Հակոբ Կյոքճյանը և ուրիշներ:

Գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը վերջում բարեմաղթություններին պատասխանեց չերմ և զգացված խոսքերով:

Գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը, որ արտասահման է մեկնում Հոգևոր Ժեմարանի համար ուսանողներ բերելու նպատակով, խոստացավ շուտով վերադառնալ Մայր Աթոռ՝ ի գլուխ իր պարտականություններին:

Ընդունելությունը վերջացավ խմբովին երգված «Էջ Միածինն ի Հորէն» շարականի երգեցողությամբ և Տերունական աղոթքով:



ՀՈՒՆԻՍԻ 10-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարությանը:



ՀՈՒՆԻՍԻ 10-ԻՆ, ԿԻՐԱԿԻ առավոտյան, ինքնաթիռով արտասահման մեկնեց Հոգևոր Ժեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Արարհամյանը:

Երևանի սղանալակայանում սրբազանին ճանապարհեցին գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը, Տիրամայրը, Արարտյան թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Տերյանը, ժեշմիածին՝ ամսագրի խմբագիրը, սարկավազներ, Մայր Աթոռի պաշտոնյաներ, հավատացյալներ և ուղևոր սրբազանի հարազատները:

ԱՅՑՆԻՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՈՒՆԻՍԻ 17-ԻՆ, ՈՒՐԱԼԹ, Մայր Աթոռ այցելեց Ցելյուսի Մոսկվայի դեսպան պրոֆ. Մայր Լասդերը: Հարգելի հյուրը եղավ Մայր Տաճարում և եկեղեցական արվեստի թանգարանում: Պրոֆեսորը ուշադրությամբ դիտեց հայկական եկեղեցական զարդարվեստի, ձեռագործի, մանրանկարչության արժեքավոր նմուշները և հատուկ կերպով կանգ առավ 1793 թվականին Հնդկաստանից բերված մեծ վարագույրի առաջ:



ՀՈՒՆԻՍԻ 18-ԻՆ, ՇԱՐԱԹ, Մայր Աթոռ այցելեց անգլիացի ուսանողների մի ստվար խումբ, որը վերջերս այցելության էր եկել ՍՍՏՄ: Հյուրերը եղան Մայր Տաճարում, եկեղեցական արվեստի թանգարանում,

վանական և պատմական այլ տեսարժան վայրերում: Նրանք մի պահ կանգ առան նաև անգլիացի գնդապետ Մաք Դոնալդի գերեզմանի առջ, Մայր Տաճարի հարավ-արևմուտյան պատի տակ:



ՀՈՒՆԻՍԻ 22-ԻՆ, ՉՐՈՆԲՇԱԲԹԻ, «Լուսին» թայմս թերթի թղթակից Մաք Դոնալդը այցելեց Մայր Աթոռ և եղավ Մայր տաճարում և եկեղեցական արվեստի թանգարանում: Հարգելի թղթակիցը ժառանգեց է Մայր Տաճարի հարավ-արևմուտյան պատի տակ թաղված, Թավրիզի անգլիական հյուպատոս գնդապետ Մաք Դոնալդի, որը եղել է մեծ հայասեր և լավագույն բարեկամը Գրիբոյեդովի: Հյուպատոսը, Թավրիզի ժանտախտին

զոհ գնալիս, փափագել էր թաղվել Ս. Էջմիածնում: Թղթակից պր. Մաք Դոնալդը երկար կանգ առավ իր ազգակցի շիրիմի առաջ:



ՀՈՒՆԻՍԻ 23-ԻՆ, ՀԻՆԳՇԱՐԹԻ, Մայր Աթոռ ժամանեցին Մոսկվայում սովորող մի խումբ անգլիացի ուսանողներ, որոնք եղան Մայր Տաճարում, եկեղեցական արվեստի թանգարանում և շրջակա պատմական մյուս սրբավայրերում: Ուսանողները մեկնեցին լավագույն տպավորություններով:



ՀՈՒՆԻՍԻ 24-ԻՆ, ՈՒՐԱԱԹ, Մայր Աթոռ այցելեց ամերիկահայ երիտասարդ գիտնական քիմիագետ դոկտոր Զորջ Օդյանը: Հարգելի դոկտորը դասախոս է նյու-Ջրսիի համալսարանում և ղեկավարը Բեռլինյան ապրիլյան ինկորպորեյշնի հետազոտական խմբի: Հյուրը մեծ ուշադրությամբ հետևեց ցուցադրված հայ արվեստի նմուշներին, դիտեց Մայր Տաճարում կատարված նորոգությունները: Ավագ Սեդանի «Հայաստանի Տիրամայրը» մեծ տպավորություն գործեց նրա վրա:



ՀՈՒՆԻՍԻ 25-ԻՆ, ՇԱՐԱԹ, Մայր Աթոռ ժամանեցին ֆիննական 11 տնտեսագետներ: Նրանց ընկերակցում էին Հայաստանի առևտրական ցանցի մի խումբ պատասխանատու աշխատողներ: Հարգելի այցելուները եղան Մայր Տաճարում, եկեղեցական արվես-

տի թանգարանում և մեկնեցին զոհունակություն:



ՀՈՒՆԻՍԻ 6-ԻՆ, ԶՈՐԵՓՇԱՐԹԻ, Մայր Աթոռ այցելեցին Միացյալ Արաբական Ռեպուբլիկայի Սիրիական շրջանի Հալեպ քաղաքից մի խումբ հայ ֆուտբոլիստներ: Նրանք եղան Մայր Տաճարում, եկեղեցական արվեստի թանգարանում և վեհարանում: Ֆուտբոլիստները Մայր Աթոռին նվեր էին բերել հայկահայ ոսկերիչների ճարտար աշխատանքի արդյունք մի փոքրիկ արծաթյա կանթեղ: Մատուցելով այդ զոդտրիկ նվերը, նրանք իրենց բարեպաշտական ուխտը կատարեցին Իլման Ս. Սեդանի առաջ:



ՀՈՒՆԻՍԻ 10-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճար այցելեց Մոսկվայում լիբանանյան դեսպան պր. Էդուար Կորան, իր կնոջ և որդու հետ: Հարգարժան հյուրերը եղան Մայր Տաճարում, եկեղեցական արվեստի թանգարանում: Պր. դեսպանը փափագ հայտնեց Մայր Տաճարում ներկա լինելու սուրբ պատարագին:

Հավարտ սուրբ պատարագի, պր. դեսպանը իր խորին շնորհակալությունն ու շնորհ գոհունակությունը հայտնեց Մայր Տաճարում հայկական սուրբ պատարագի Կոմիտասյան երգեցողությունից իր ստացած հոգեկան ապրումների և վայելքի համար:

Վերջում հարգելի հյուրը հրաժեշտ առավ Միաբանությունից՝ սրտաբուխ մաղթանքներ անելով Հայ Եկեղեցու բարօրության և միասնության համար:





Պ Ա Տ Մ Ա - Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԱՍՏՎԱԾԱՇՆՁԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Ե դարի առաջին տասնամյակում, 405—406 թվականին, Ս. Մեսրոպ Մաշտոցի միջոցով կատարված հայ գրերի գյուտը և դրանից անմիջապես հետո սկսած Աստվածաշնչի հայերեն (գրաբար) առաջին թարգմանությունը 406—420 և երկրորդ թարգմանությունը կամ սրբագրությունը 432—438 թվականներին, որով հիմքը դրվեց հայ գրավոր գրականության, ծնունդ են ժամանակի քաղաքական, տնտեսական պայմաններին, պատմականորեն հասունացած անհրաժեշտության և ազգային-եկեղեցական ու մշակութային տեսակետից անկախ ու ինքնուրույն լինելու բաղձանքին:

Ե դարը մեր ժողովրդի և գրականության պատմության մեջ վերին աստիճանի մի նշանակալից երևույթ է հանդիսանում: 387 թվականից, Տիգրանի դաշնագրով թյուրքանդիայի և Պարսկաստանի միջև Հայաստանի առաջին բաժանումից հետո, մեր երկիրն ու ժողովուրդը ընկել էին երկու քարի, երկու կրակի միջև: Հայ գիրն ու գրականությունը ստեղծվում են պատմական այնպիսի իրադրության մեջ, երբ օրակարգի էր դրված հայ պետականության ինքնուրույնությունն ու գոյությունը, և երբ հայ մշակույթին ու կրոնը եղծվելու վտանգի առաջ էին կանգնած՝ հունա-ասորական մշակույթների և կրոնի միասնությունը ազդեցությամբ: Մեր երկրի միասնությունն ու ժողովրդի միասնականությունը բաժանված էին երկու թշնամի ու գիշատիչ պետությունների՝ Թյուրքանդիոնի ու Տիգրանի միջև: Երկրի պառակտվածությունը յուրջ վտանգ էր ներկայացնում հայ ժողովրդի ֆիզիկական գոյության համար:

Այդ ճգնաժամային օրերին ժամանակի ազալավոր ու հայրենասեր մարդկանց համար հրվա առաջնահերթ խնդիրն էր ստեղծել մի այնպիսի ամուր պատվանդան, մի այնպիսի գաղափարական ղեկք, որը հնարավորություն տար Հայաստանի երկու մասերի միջև ստեղծելու ազգային-մշակութային, գաղափարական, միասնական հոգևոր կապ: Միակ արմատական միջոցը այդ անել կացությունից դուրս գալու՝ սեփական գիր ու գրականություն և ազգային գրավոր մշակույթ ունենալու հարցն էր: Միայն ու միայն ինքնուրույն, ազգային գրականության և մշակութի ստեղծումով կարելի էր մի գորավոր գաղափարական պատենջ կանգնեցնել ընդդեմ Իրանի և Հռոմի: Ահա թե ինչու Ե դարի սկզբներին հայ ժողովրդի համար ստեղծված քաղաքական այդ ծանր իրադարձությունը անհրաժեշտություն դարձրեց դիմելու վճռական միջոցներին:

Ե դարը հայ ժողովրդի ինքնագիտակցության և հերոսական գոյամարտերի դարաշրջանն էր: պայքար հայ մշակույթի և գրականության միջոցով հույների դեմ, պայքար սրով՝ պարսիկների դեմ, պահպանելու համար ժողովրդի ինքնուրույնությունը և կանխելու ձուլման վտանգը:

428 թվականին Հայաստանի քաղաքական անկախության կորստից հետո, երբ վերջապես Արշակունյաց դինաստիան, հայ ժողովրդի ազատագրական, քաղաքական այդ պայքարը ղեկավարում էին ժամանակի առաջավոր մարդիկը, հայ գրերի ստեղծումով և Աստվածաշնչի հայերեն թարգմանությամբ:


Հայ գիրն ու դպրութիւնը, հայոց լեզուն. հայ ժողովրդի ազգային գոյութեան պահպանման և ամրապնդման գործում, հանդիսացան հզոր ազդակ և պատմական մեծ նշանակութիւն ունեցան թե՛ ն դարում թե՛ հետագա դարերում:

Գրերի գյուտը և Աստվածաշնչի հայերեն թարգմանութիւնը միաժամանակ հնարավորութիւն կտային վերականգնելու երկրի անկախութիւնը, միավորելու Արշակունիների թագավորութիւնը, ն դարում հոգնորականութիւնը և արքունիքը գրերի գյուտի մեջ տեսնում էին ոչ միայն հայ մշակույթի դարգացումը, այլ նաև բաժանված և թու-

իր տեղը կուգա գրավել լուսավորչայ մարդկութեան մեջ» (Ն. Ադունց, «Անահիտ», 1937 թ., № 3, էջ 16):

Գրերի ստեղծումով սկսվում է հայ ժողովրդի մշակույթի զարգացման մի նոր շրջան:

Գրերի գյուտով և Աստվածաշնչի հայերեն թարգմանութեամբ հայ ժողովուրդը ազատվեց ասորա-պարսկական մշակույթի մեջ ձուլվելու վտանգից. Քրիստոնեութիւնը հայացավ և ամրապնդվեց մեր երկրում, հայութեան սրտի մեջ արմատավորվեց ճշմարիտ ազգային գիտակցութիւնը, հայոց



ԱՍԾՎԱԾԱՇՆՉԻ ՀԱՅՍԵՆ ԸՆԱԴՈՒՅՆ ՁԵՐԱԴՐՈՒՄՈՒԹՅՈՒՆ (Զ. ԴԱՐ)
(Երևանի Պետական ձեռագրաստան)

լացած հայ քաղաքական իշխանութեան միավորումը և ամրապնդումը:

Աստվածաշնչի ոչ մեկ թարգմանութիւն ոչ մի ժողովրդի կյանքում երբեք չի ունեցել այն բախտորոշ և վճռական նշանակութիւնը, ինչ ունեցել է Աստվածաշնչի հայերեն (գրաբար) թարգմանութիւնը հայ ժողովրդի համար: Վերջինս գրականութիւնը շատոնց ի վեր գոյութիւն ունեւ, երբ վերգատան (Աստվածաշնչի լատիներեն թարգմանութիւնը— Ա. Հ.) երեցավ, մինչդեռ հայ Աստվածաշնչի սկզբնավորութիւն եղավ նոր թվականի մը, ուր հայ ժողովուրդը, առաջին անգամ ըլլալով՝ գրիչ ի ձեռին

պատմութեան ոգին դարձնեց և հայ հոգիներից ներս թափանցեց գրականութեան, մշակույթի, լուսավորութեան կենդանի և մաքուր շունչը:

Աստվածաշնչի թարգմանութեան հալոցի մեջ զտվեց, պայծառացավ, առնականացավ հայոց լեզուն և ստեղծվեց մեր մատենագրութեան մեջ ինքնատիպ ազգային Սահակ-Մեսրոպյան ոճը, որին նմանվել ձգտեցին հաջորդ դարերի մեր գրականութեան մշակները:

Ն դարում Աստվածաշնչի, թի ձեռն երկուց հաւասարելոցն [Սահակայ և Մեսրոպայ] հայաբարբառը հայերէնախօսը դառնա

(ԿորյուՆ) և հիմը գրվեց հայ գրականութ-
թյան:

Գրերի գյուտի և Աստվածաշնչի հայերեն
թարգմանության, ԿորյուՆի քաջատրու-
թյամբ «աստուածագործ մշակութեան ա-
րուեստ»-ի մասին խոսում են և դարի մեր
երեք մատենագիրները՝ ԿորյուՆի իր «Պատ-
մութիւն վարուց և մահուան Սրբոյն Մեսրո-
պայ վարդապետին մերոյ թարգմանիւն»
(Թիֆլիս, 1913 թ.), Մովսես Խորենացին՝
«Պատմութիւն Հայոց» (Թիֆլիս, 1913 թ.) և
Ղազար Փարպեցին՝ «Պատմութիւն Հայոց»
(Թիֆլիս, 1908 թ.) աշխատութիւններին
մեջ:

Այս երեք մատենագիր-պատմիչները շատ
շիւ րան են հաղորդել մեզ Աստվածաշնչի
հայերեն թարգմանության մասին, այն էլ
հաճախ տարտամ, անորոշ և մերթ հակասա-
կան: Մինչ ԿորյուՆը և Խորենացին խոսում
են Աստվածաշնչի հայերեն երկու թարգմա-
նութիւններին մասին՝ մին գրերի գյուտից
անմիջապէս հետո՝ մին՝ 432 թվականից
հետո, Ղազար Փարպեցին հիշատակում է
միայն մի թարգմանութիւն:

Աստվածաշնչույը միանվագ և ամբողջու-
թյամբ չի թարգմանվել: Առաջին մասնակի
հայերեն թարգմանութիւնը սկսած պետք է
լինի գրերի ստեղծումից անմիջապէս հետո:
Եղեսիայում, Մեսրոպ Մաշտոցի նախաձեռ-
նությամբ և Հովհան Եկեղեցացու ու Հովսեփ
Պաղնատի աշխատակցությամբ: Այս մասին
ԿորյուՆը վկայում է, որ Ս. Մեսրոպը, գրերի
ստեղծումից հետո, երբ «հայկական շափուն
ծնեալ ծնունդս նորոգ և սքանչելի Սուրբ
Աշտուղ իւրով նշանագիրս հայերէն լեզուին»
(էջ 14—15), Եղեսիայում հրածելտ է տա-
լիս տեղի Ռաբուլաս (Քաբուլաս) եպիսկո-
պոսին և «իջանէր ի քաղաքն Սամոսատացոց»,
որը հելլենիստական մշակութի կարևոր
կենտրոններից մեկն էր Միջագետքի հյուս-
սիսային մասում, և դիմում հունական
դպրութեան հմուտ գրիչ Հուսիանոսի օգնու-
թյան:

405—406 թվականներին Մեսրոպ Մաշ-
տոցը Եղեսիայում ստեղծելուց հետո հայ
նշանագրերը, նրանց յուրաքանչյուրին տա-
լիս է առանձին ձև, որոշում անունները և
որոշ դասավորութեամբ շարում, կազմելով
մեր այսօրվա ալբուրները. «և անդ վաղվա-
դակի նշանակեալ, անուանեալ և կարգեալ,
յօրինէր սիղորայիւք և կապօք» (ԿորյուՆ, էջ
14): Ապա նա «հանդերձ օգնականօք իւրովք»
գնում է Սամոսատ՝ հայ գրերի տեխնիկա-
կան վերջին ձևավորումը տալու համար
հույն դպրութեան գրչագրական արվեստի
վարպետ Հուսիանոսի մոտ: Վերջինս վերց-
նում է Մեսրոպի պարզ սեպագրութիւնը և

նկարում մագաղաթյա թղթի և մոմի տախ-
տակի վրա մի վայելուչ պնակիտ, «տառերի
կարճը՝ կարճ, երկարը՝ երկար պահելով և
նուրբ ու հաստ գծերը գեղեցիկ նկարելով»
(ԿորյուՆ, էջ 15):

Հայ տառերի ձևավորումից հետո, Մեսրոպ
սկսում է թարգմանութեան, որպէս նախա-
փորձ՝ Սողոմոնի Առակաց գրքի առաջին
գլխից. «ի թարգմանութիւն դառնային հան-
դերձ արամբք երկուք, որոց առաջնոյն Յով-
հան անուն կոչէին և երկրորդին Յովսէփ: և
եղեալ սկիզբն թարգմանութեան զգիրս նախ
յԱռակացն Սողոմոնի» (ԿորյուՆ, էջ 15): Ս.
Մեսրոպի ձեռքով հայերենի թարգմանված
առաջին նախադասութիւնն է հետեւյալը.
«Մանաշիւ զիմաստոյթիւն և զխրատ, իմա-
նալ զքանս հանճարոյ» (Առակք Ա 1): Հուս-
իանոս ոչ միայն իր գեղեցիկ գրով գրում
է Մեսրոպյան առաջին թարգմանութիւնը.
այլ նաև հայերեն գեղագրութեան արվեստն
է սովորեցնում Մեսրոպի աշակերտներին.
«որ և գրեցաւ ձեռամբ այնորիկ գրչի, հան-
դերձ ուսուցանելով մանկունս գրիւս նմին
դպրութեան» (ԿորյուՆ, էջ 15): Խորենացին,
կրկնելով ԿորյուՆի ասածները, ավելացնում
է, որ Մեսրոպ «զարմանալի արագութեամբ»
թարգմանում է նաև Հին Կտակարանի 22
հայտնի կամ նախականոն գրքերը և ամ-
բողջ նոր Կտակարանը, ինչ որ հավանական
չի թվում. «եսկոյն ի թարգմանութիւն ձեռն
արկեալ, խորհրդաբար սկսանելով յԱռակաց,
րովանդակ քսան և երկու յայտնիսս և զնոր
կտակս յեղով ի հայ րան» (Խորենացի, էջ
336): Պարզ է, որ Սամոսատում Մեսրոպ չէր
կարող երկու աշակերտով թարգմանել ամ-
բողջ Աստվածաշնչույը, երբ աշակերտները
գրերի գյուտի օրերին դեռ այնքան էլ հմուտ
չէին ոչ ասորերեն և ոչ հունարեն լեզուների
իմացութեան մեջ: Փարպեցին վկայում է. «և,
երանելի Մաշտոց և որք ընդ նմա... պա-
տուական քահանայքն էին՝ ոչ զօրէին հա-
մաքմակել յայսպիսի սաստիկ և կարևոր
գործ, թարգմանել գիրս ի լոյն լեզույն ի հայ
ժարբառս, վասն զի ոչինչ էին այնպէս տե-
ղեակ գիտնապէս հրահանգի լուսարէն ուս-
ման» (Փարպեցի, էջ 33):

Սամոսատում Մաշտոց ժամանակ լուսնոր
թարգմանութեամբ զբաղվելու նրա բուն
նպատակը չէր Աստվածաշնչի թարգմանու-
թիւնը, այլ՝ հայ գրերի գյուտը և ձևավո-
րումը:

Գրերի գյուտից և Աստվածաշնչի հայերեն
թարգմանութեան նախափորձից (Առակք Ա 1)
հետո, Ս. Մեսրոպը Սամոսատից «հոգեւորից
ուրախութեամբ եկեալ հասանէր ի Հայաս-
տան աշխարհն, ի կողմանս Այրարատեան

գաւառիկն, առ սահմանօք Նոր քաղաքին» (Վերջում, էջ 16), այն է Վաղարշապատ, թագավորական և հայրապետական աթոռանիստը: Հայ տառերի մեծ գլուտարարը ընդունվում է ժողովրդի ճշմունքից և քաղաքը և երգօք հոգեկորօք (Վերջում, էջ 17): Փարպեցիի նկարագրում է ուրախությունը բոլոր ժողովրդի, հոգեկորականության և արքունիքի. ամեն ոք «փափաքէր յուսումն գիտութեան, որպէս ի խաւարէն, յասորի տանջանացն, զերծեալք ի լոյս՝ խնդային» (էջ 32) գրերի գլուտով: Վերջումը, զեպքին ականատես և խանդավառ, Մեսրոպի գալուստը Հայաստան նմանեցնում է Մովսէս մարգարեի Սինա սարից էջքին, տասնաբանյա աստվածաշնորհ պատվիրանները ձեռքին, «Յոհնու-թեամբ ի քաղաքն [թագաւորական] դառնային, և զաւուրս տօնական ուրախութեամբ անցուցանէին» (էջ 17): Գրերի գլուտը համազգային տոն էր հայ ժողովրդի համար:

Վերջումը, արտահայտելով բովանդակ ժողովրդի «սրտալիր ուրախութիւն»-ը (էջ 19) գրերի գլուտի բարեբաստիկ առթիւ, գրում է. «Յայնմ ժամանակի երանելի և ցանկալի աշխարհս Հայոց, անպայման սքանչելի լիւնէր» (էջ 18), որովհետեւ գրերի գլուտով և Աստվածաշնչի թարգմանութեամբ մեր երկրում «աստուածագործ սքանչելագործութիւնք գործեցան...», մեր ժողովուրդը «առ ժամայն վաղարկակի ամենայն իրաց եղելոց խելաուռտ լինէր»: Իսկ Աստղիկ պատմիչը (Ժ դար) ավելացնում է. «սկիզբն դպրութեանս հայոց եղև սկիզբն մեծ գիտութեան և անպայման խնդութեան» («Պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885 թ., էջ 74):

Մեսրոպ Մաշտոցը Հայրենիք վերադառնալուց հետո, սկսում է մշակութային-դրական բուռն գործունեությունը՝ «թարգմանել, գրել և ուսուցանել», բացվում են դպրոցներ, ժողովրդի մեջ արմատավորվում է գրածանալությունը, շարունակվում է թարգմանական գործը մինչև 420-ական թվականները. երբ Ս. Սահակը կանչվում է Տիգրան, իսկ Մեսրոպը դրական, քարոզչական առաքելության է մեկնում Վրաց և Աղվանից աշխարհները և ապա Բյուզանդիոն: Ս. Մեսրոպի շրջագայությունը տևում է 7—8 տարի, հավանական է 415—423 թվականներին:

Ուրեմն 406—420 տարիները Աստվածաշնչի առաջին հայերեն թարգմանության տարիներն են:

Աստվածաշնչի երկրորդ թարգմանությունը կամ սրբագրությունը կատարվում է 432—438 թվականներին:

Աստվածաշնչի թե՛ առաջին և թե՛ երկրորդ թարգմանության աշխատանքներում մեծ

վաստակ ունի Ս. Սահակը՝ որպես գործի հովանավորողի, կազմակերպողի և հմուտ թարգմանողի:

Ամբողջ հոգեկորականությունը, թագավորն ու իշխանները, ի գլուխ ունենալով Մեսրոպ Մաշտոցին, «աշխարհապաղատ թախանձանք»-ով դիմում են Սահակ Պարթևին, որ գլխավորի թարգմանական աշխատանքը, որի անվիճելի հմտությունն ու ձեռնհասությունը ուներ նա, իր արվեստագետի նուրբ ճաշակով, «արուեստաւոր ուսմանց տեղեկութեամբ» և «գորաւոր ճարտարութեամբ, զոր ունէր ի քնէս»:

Աստվածաշնչի թարգմանության մեջ Ս. Սահակին է ընծայված Հնգամատյանի, Սաղմոսների, չորս մեծ մարգարեների, Երգ երգոցի թարգմանությունը, իսկ Մեսրոպին՝ Առական, Ժողովողի և Սիրաքի Բայց Աստվածաշնչի հիմնական թարգմանիչը Ս. Սահակն է:

Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի գրական, մշակութային, թարգմանական և մանկավարժական գործունեությունը տևում է ավելի քան 35 տարի՝ 405—440 թվականները:

Աստվածաշնչի հայերեն թարգմանության հարցը շատ է գրադեցրել թե՛ հայ և թե՛ օտար գիտնականներին: Հենվելով Վորյունի, Նորենացու և Փարպեցու մատենագրական հաղորդումների վրա, բանասերները կատարել են մի շարք մատենագրական, քննադատական հետազոտություններ և հասել են հաճախ տարրեր, միմյանց հակասող եզրակացությունների:

Աստվածաշնչի թարգմանությունը, որպես զուտ մատենագրական ձեռնարկ, զեռես սպառիչ կերպով չի ուսումնասիրվել, որովհետև այդ գործի հետ միշտ կապված էին մեծ մի շարք դժվարություններ: Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը կարոտ է է՛լ ավելի խոր և բազմակողմանի ուսումնասիրությանը:

Գրերի գլուտի և Աստվածաշնչի թարգմանության մասին խոսող Ե դարի մեր վերահիշյալ երեք պատմիչները եղել են շատ ժխտ. նրանք խոսել են ավելի հայ ժողովրդի կյանքում Աստվածաշնչի հայերեն թարգմանության՝ թողած հոգեկոր, իմացական և բարոյական մեծ նշանակության մասին և չեն ծանրացել թարգմանության գործի մանրամասն պատմության վրա, Այդ պատճառով մինչև այսօր դժվար է ճշտել Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ թարգմանիչներից յուրաքանչյուրի քաժինը, թե ո՞վ ի՞նչ է թարգմանել: Մեզ հասել է թարգմանիչների միայն մի քանիսի անու-

նը, ինչպիսիք են Սահակ Պարթևը, Մեսրոպ Մաշտոցը, Եզնիկը, Կորյունը, Հովհան Եկեղեցացին, Հովսեփ Վայոցձորեցին, Հովսեփ Պաղնկացին, Ղևոնդ Երեցը, Մուշե Տարոնեցին, Տեր Խորենացին, Գեորգ Վանանդեցին, Առևանը, Արթուրը և ուրիշները:

Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ, ամենակարևոր հարցը թարգմանության ընտրության (տեքստի) ընտրության հարցն է եղել միշտ: Աստվածաշնչի հայերեն թարգմանության ժամանակ գործածված ընտրության շատ քիչ և մշուշոտ ակնարկություններ ունեն Կորյունը, Փարպեցին և Խորենացին:

Աստվածաշնչը բաղկացած է երկու հիմնական մասերից՝ Հին Կտակարան կամ Հին Ուխտ, բաղկացած 39 գրքերից, և Նոր Կտակարան կամ Նոր Ուխտ՝ բաղկացած 27 գրքերից:

Հին Կտակարանը գրվել է մեր թվարկությունից առաջ մինչև 7 դարը, երբայից են լեզվով: Երբայից են սրբազան լեզու էր հրեաների համար, որով և գրվել են երբայական դասական բոլոր գրքերը:

Սակայն երբ հրեաները մեր թվարկությունից առաջ 7 դարում ցրվեցին ամբողջ հին աշխարհով մեկ և Պաղեստինից դուրս, ստեղծվեց հրեական Սփյուռքը (դիասպորա), որտեղ տիրում էր հայերեն լեզուն և մշակույթը, անհրաժեշտություն զգացվեց Հին Կտակարանը թարգմանել հունարեն լեզվի՝ Սփյուռքի հրեաների հոգևոր կարիքների համար: Եվ ահա այդ անհրաժեշտությունից մարտնչելով, Հին Կտակարանը երբայական ընտրողից առաջին անգամ թարգմանվեց հունարենի Ալեքսանդրիայում, Եգիպտոսի Պտղոմեոս Ֆիլադելֆոս (Նդրալրասնը) հելլենասեր թագավորի օրոք (285—247 թ. թ. մ. թ. ա.): Հին Կտակարանի այս առաջին հունարեն թարգմանությունը, կատարված Ալեքսանդրիայի մեծահարուստ մատենադարանի տեսուչ Դիմիտրիոս Փալերիոսի հանձնարարությամբ, կոչվում է Յոթնամեկից թարգմանություն (Սեպտուագինտա), թարգմանված Ալեքսանդրիայում 70 եբրայագետ-հունագետ հրեա գիտնականների կողմից:

Քրիստոսի ժամանակ Հին Կտակարանի այս Յոթնամեկից հունարեն թարգմանությունը ընդհանրացած էր նաև Պաղեստինում: Քրիստոս և առաքյալները իրենց քարոզության ընթացքում օգտագործում էին Հին Կտակարանի Յոթնամեկից թարգմանությունը:

Հին Կտակարանի երկրորդ թարգմանությունը եբրայերենից՝ կատարվել է ասորերեն լեզվով մեր թվարկության 8 դարում:

Ասորերեն է թարգմանվել միաժամանակ Նոր Կտակարանը, որի բնագիրը, ինչպես հայտնի է, հունարեն էր: Հին Կտակարանի ասորերեն լավագույն թարգմանությունը կոչվում է Փեշիտտո, որը շուրջ ասորական թարգմանությունների մեջ լավագույնն է, հարազատ եբրայական բնագրին և պաշտոնապես ընդունված և գործածված Ասորի եկեղեցու կողմից:

Աստվածաշնչը թարգմանվել է աշխարհի բոլոր լեզուներով, սակայն այդ թարգմանությունների մեջ առանձին արժեք են ներկայացնում մինչև 8 դարը կատարված հին թարգմանությունները, որոնց թվում և հայերեն թարգմանությունը:

Ըստ թարգմանության վաղեմության կարգի՝ Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը գրավում է յոթերորդ տեղը Մ. Գրքի համաշխարհային թարգմանությանց մեջ: Այսպես առաջինը՝ Յոթնամեկիցը, երկրորդը՝ լատիններենը՝ Վուլգատան, երրորդը՝ ասորերենը, չորրորդը՝ եթովպականը, հինգերորդը՝ եգիպտականը, վեցերորդը՝ գոթականը, յոթերորդը՝ հայկականը, բոլորն էլ համարյա 8 դարից:

Արդ, 8 դարում այս վերահիշյալ թարգմանություններից ո՞ր մեկի բնագիրը իրենց առաջ ունեցել են մեր թարգմանիչները: Այլ խոսքով՝ Աստվածաշնչի զարար թարգմանությունը ո՞ր բնագրից է կատարվել, եբրայականից, Յոթնամեկից թարգմանությունից, թե՞ Փեշիտտոյից:

Հայ բանասիրության մեջ տարածված կարծիքը ընդհանրապես եղել է ի նպաստ ասորական բնագրի: Այս տեսության կողմնակիցները ընդունում են, որ Հին Կտակարանի առաջին, կամ այսպես կոչված «փոթնակի», «լատինարոգիտ» թարգմանությունը կատարվել է Փեշիտտոյի, այսինքն՝ ասորական բնագրի վրայից, որը 432 թվականից հետո սրբագրվել է Կոստանդնուպոլսից բերված «ստոյգ» կամ «հաստատուն» կոչված Յոթնամեկից հունարեն օրինակի վրայից: Ուրիշներ կանգնել են, բնագրի ընտրության հարցում, այլ տեսակետի վրա՝ Վերդիններս ընդունում են, որ Հին Կտակարանի առաջին թարգմանությունը նույնպես կատարվել է հունարեն պատահական մի բնագրի վրայից:

Նախ երկու խոսք այն մասին, թե ի՞նչ է իրենից ներկայացնում թարգմանիչների Կոստանդնուպոլսից բերած «ստոյգ» կամ «հաստատուն» կոչված հունարեն օրինակը:

Ալեքսանդրյան եկեղեցու նշանավոր վարդապետ Օրիգենեսը (185—254 թ. թ.), դարեցնելու համար հրեաների և քրիստոնյաների միջև առաջ եկած վեճերը Աստվա-

ծաշնչի երբայական բնագրի և հին թարգմանություն մասին, իր Ս. Գրքի թաղիքյան և վեցիքյան հոյակապ աշխատության մեջ հեղափոխական տվել էր երբայական բնագրերը, իսկ նրա դիմաց՝ Յոթնասնից և մյուս հույն թարգմանությունները, նշելով միաժամանակ և ուղղելով նրանց տարբերությունները աստղաձև և սեպագծաձև տարբեր նշաններով: Օրիգենեսի այս գործը շարունակեց նրա աշակերտ Պամփիլոս վկան, որը սերորագրելով Ս. Գրքի ընդօրինակության մեջ լարություն մե տգիտություն մուծված վրիպակները, օրինակել տվեց Յոթնասնից թարգմանության մի հարազատ և ճշգրիտ օրինակ, համեմատելով այն օրիգենեսյան օրինակների հետ, պահելով աստղաձև և սեպագծաձև նշանները, և այն հանձնեց իր բարեկամ և եկեղեցական մեծ գործիչ Եվստրիոս Կեսարացուն, պահելով այն խնամքով Պաղեստինյան Կեսարիայի գրադարանում:

Որոշ ժամանակ անց, Կոստանդնուսոս կայսրը բերել տվեց Պամփիլյան այս օրինակը և հարյուրավոր օրինակներով բաղմանցնելուց հետո, պահ գրեց Կոստանդնուպոլսի կայսերական գրատան մեջ: Ս. Սահակը և Ս. Մեսրոպը, իմանալով այս մասին, շատ ցանկացան մի օրինակ ևս ունենալ Հայաստանում, որը անտարակույս ավելի մեծ հարգ և վավերականություն պետք է տար Աստվածաշնչի հայերեն թարգմանության աշխատանքներին: Եփեսոսի ժողովից հետո, 432 թվականի առաջին ամիսներին, Կոստանդնուպոլսում գտնվող թարգմանիչ վարդապետները, Եփեսոսի ժողովի որոշումների և կանոնների հետ, Հայաստան բերեցին նաև Աստվածաշնչի այս թանկագին օրինակը: Եվ վերջին՝ բնագրի վրա, Ս. Սահակը ձեռնարկեց Աստվածաշնչի առաջին հայերեն թարգմանության վերաստեղծության, Կորյունի խոսքերով՝ «հաստատել ճշմարիտ օրինակօք բերելովք», այն է՝ ուղղել, լրացնել առաջին թարգմանությունը: Խորհնացին այս երկրորդ թարգմանության մասին գրում է. «զոր առնալ մեծին Սահակայ և Մեսրոպայ, զարձեալ թարգմանեցին զմի անգամ թարգմանեալն, փութանակի հանդերձ նոքօք վերստին յօրինել նորոգմամբ» (Գ դիրք, գլ. կա, էջ 354):

Կորյունը և Խորենացին ակնարկում են, որ Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ նախապատվություն էր տրվում հունարեն Յոթնասնից բնագրին՝ որպես ճշգրիտ և վավերական բնագիր:

Կորյունը, որ միակ ժամանակակից պատմիչն է և Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ ունեցել է գործուն մասնակցություն,

բնագրի լեզվի մասին հստակ ուշիշի ասում, որովհետև հասկանալի է, որ դա հունարենն էր: Մի այլ տեղ Կորյունը վկայում է, որ Ս. Սահակը, Քրոս յառաջագուն սովորութեան, զբաղվում էր եկեղեցական գրող գումարութիւնն կանխալ ի յունական րարառոյն ի հայերէն դարձեցեալս (էջ 33—34): Կորյունի այս վկայությունը արդյոք պետք է ընդունել որպես փաստ այն մասին, որ Աստվածաշնչի առաջին թարգմանության հիմք է ծառայել հունարեն բնագիրը, որը հետո սրբագրվել և «հաստատվել» է նոր թարգմանությամբ:

Ղազար Փարպեցին ևս, որը Կորյունից հետո ամենից ավելի ժամանակամերձ և իրազեկ պատմիչն է Աստվածաշնչի հայերեն թարգմանության աշխատանքներին, և այնքան խանդավառությամբ է խոսում Սահակ Պարթևի «գիշերական տքնութեամբ» հունարենից կատարած թարգմանական աշխատանքների մասին՝ «սուրբ կաթողիկոսն Սահակ, արկանէր զանձն յաշխատութիւն հոգևոր և թարգմանէր զԱստուծաշունչ կտակարանս ի յոյն լեզույ ի հայ բարբառ» (էջ 33), երբեք չի խոսում ասորերեն բնագրի օգտագործման մասին: Ընդհակառակը, Փարպեցին նշում է, որ ասորերենը «մուրացածոյ բարբառ» էր հայ հոգևորականի և մտավորականի համար, «անլուր», այսինքն անխմանալի մի լեզու, որին տիրապետում էին «բազումք թողակօք և հեռագնաց ճանապարհօք և բազմածամանակեայ դեզերմամբ»:

Նշել պետք է նաև այն, որ Ե դարում ընդհանուր եկեղեցում և հատկապես Ալեքսանդրիայում, Անտիոքում, Կոստանդնուպոլսում գործածվում էր Յոթնասնից կամ Ալեքսանդրյան թարգմանությունը՝ որպես Հին կտակարանի կլասիկ, անխալակա՛ն թարգմանություն, մինչ ֆեշիտոսն յուներ Յոթնասնից բնագրի հարգը՝ որպես վերջին թարգմանություն: Որով մեր թարգմանիչները չէին կարող հրաժարվել Յոթնասնից թարգմանությունից, երբ իրենց առաջ հար էին գրել ստեղծել նաև առաջին հայ թարգմանական կոթողական գործը, որ Աստվածաշնչի թարգմանությունն էր:

Օտար քննադատներ, որոնք զբաղվել են Աստվածաշնչի թարգմանությանը բազդատությամբ և համեմատությամբ, ինչպիսիք են Կաուլեն, Բերտհոլցը, Շտոյբերնագելը, Լակրոզը, Կոնիքերը, Ռոքինզոնը, Պիտերմանը, Ն. Մառը և ուրիշներ, վկայում են, որ Աստվածաշնչի հայ թարգմանությունը շատ մոտ է Յոթնասնից օրինակին և վեցիքյանին:

հորենացին ևս երբեք չի զբաղվում Աստ-
վածաշնչի բնագրի հարցով, որովհետև նրա
համար ևս պարզ է, որ դա հունարենն էր:
Բայց հորենացին է, որ առաջին անգամ ա-
ռաջ է քաշում ասորերեն բնագրից ինչ որ
թարգմանությունների հարցը:

հորենացին վկայում է, որ Մեսրոպ Մաշ-
տոցը, գրերի գյուտից անմիջապես հետո,

թարգմանության ժամանակ Աստվածաշնչի
բնագիրը նույնպես եղել է հունարեն: Քիչտ
է, նա չի նշում Հին Կտակարանի 22 հայտնի
է, որ հունարեն լեզուն. դա, նույնպես հա-
կանալի է, որ հորենացու համար հունարենն
սույն է ասորական բնագրից կատարված
թարգմանությունների մասին (Գ գիրք. ԳԻ. 17).



ՄՆԵՐՈՑ ԳՐԹԻ ԱՌԱՋԻՆ ԷՋՐ ՀԱՅՆՐԵՆ ՀՆԱԳՈՒՅՆ ՁԵՌԱԳՐԻՑ
(Հայկական ՍՍԻ Պետական մատենադարան, ձեռ. Մ 345)

ախկոյն ի թարգմանութիւն ձեռն արկեալ,
խորհրդաբար սկսանելով յԱռակաց, զբո-
վանալ քսան և երկու յայտնիս և զնոր
կտակս յեղով ի հայ բանս (էջ 336), հորե-
նացու այս հաղորդումը ցույց է տալիս, որ

էջ 337), Այստեղ հորենացին պատմում է,
որ Մեսրոպ Մաշտոցը Հայաստան վերա-
դառնալուց հետո Սամոսատից, ձեռնարկում
է մանկավարժական գործունեության, դըպ-
րոցներ է բաց անում, ժողովրդի մեջ տա-

րածում ցրաճանաչություն, ապա մշակութային գործունեության և առաքելության համար անցնում է Վրաց և Աղվանից երկրները, նրանց համար նույնպես նշանագրեր է ստեղծում, և երբ վերադառնում է Հայաստան, «գտանել զմեծն Սահակ թարգմանութեան պարագայիս յասորոյն» ոչ լինելոյ յունին, Քանգի նախ ի Մեհրուժանայ այրեալ լինէին ընդհանուր աշխարհիս յոյն գիրք. դարձեալ ի բաժանել զաշխարհս Հայոց, շտային պարսիկ վերակացուքն յոյն ուսանել դպրութեան ումեք իւրեանց մասին, այլ միայն ասորիք»:

Բայց այստեղ ակնարկությունը վերաբերում է ոչ թե Աստվածաշնչի թարգմանության ասորական ընագրից, այլ ընդհանրապես եկեղեցական գրքերի թարգմանության, որոնց կարիքը զգացվում էր նույն ժամանակամիջոցում: Կորյունը վկայում է շատ պարզ կերպով, որ Ս. Սահակը դրադվում էր թարգմանությանը եկեղեցական գրքերի՝ «գզումանութիւն եկեղեցական գրոց», ինչպես նաև «բազում ևս զհայրապետաց սրբոց զճշմարիտ իմաստութիւնն թարգմանելով հայերէն», որով պետք է հասկանալ եկեղեցական պաշտամունքի ժամանակ կարդացված Ս. Գրոց հատվածների, կցորդ աղոթքների թարգմանությունները, այլ խոսքով՝ ժամագրքի, Պատարագատույց խորհրդատետրի և սուրբ հարց այլ գրվածքների թարգմանությունները:

Բայց սրանով չեն սպառվում Աստվածաշնչի հայերեն թարգմանության ժամանակ օգտագործված ընագրի ընարության հետ կապված դժվարությունները: Ստույգ է, որ Աստվածաշնչի հին թարգմանության մեջ կան ոչ միայն ասորերեն թարգմանության հետքերը, այլ նաև մեզ են հասել տարբեր թարգմանությամբ Հին Կտակարանի մի շարք գրքերի թարգմանությունները, որոնք նույնիսկ ավելի հին են ժամանակի տեսակետից քան Յոթանասնից թարգմանությունը:

Ինչպես լուծել այս հարցը: Արդյո՞ք առաջին թարգմանությունը եղել է ասորերեն ընագրի վրա: Կորյունը վկայում է, Աստվածաշնչի առաջին հայերեն թարգմանությունից հետո ձեռք բերված, մեր թարգմանիչների նաև ասորագիտության մասին: Ս. Սահակն ու Ս. Մեսրոպը նշանակում են թարգմանիչներից «գզմանս յասորի դպրութիւն և զոմանս յունական դպրութիւն» (էջ 14):

Նախապես Հովսեփ Պաղնացին և Ծղնիկ Կորդացին 425—426 թվականներին ուղարկվում են թի կողմանս Ասորոց, ի քաղաքն Եփեսացուց... դի յասորական քարքառոյն՝

ղնոցին հարցն սրբոց դաւանդութիւնս հայերէն գրեալս դարձուցեն» (Կորյուն, էջ 30): Կորյունի այս վկայությունը ոմանք մեկնել են այն իմաստով, որ Աստվածաշնչի առաջին թարգմանությունը եղել է ասորերեն ընագրից: Բայց խոսքը Կորյունի մոտ վերաբերում է ոչ թե Աստվածաշնչի թարգմանության, այլ Սահակ Պարթևի հանձնարարությամբ ասորի եկեղեցական հայրերի գործերի թարգմանության, Ծղնիկ և Հովսեփ, Սահակի և Մեսրոպի հանձնարարությամբ, Եփեսայում ասորական թարգմանություններ կատարելուց հետո, «աւնցեալ զնացին ի կողմանս յունաց, ուր և ուսեալք և տեղեկացեալք, թարգմանիչս կարգէին ըստ հելլենական լեզուին» (էջ 31):

Որոշ ժամանակ անց, Ս. Սահակ և Ս. Մեսրոպ Կոստանդնուպոլիս են ուղարկում Ղեկոնդին և Կորյունին, որոնք միանալով Հովսեփին և Ծղնիկին, մնում են այնտեղ «միաբանութեամբ հոգևոր պիտոյիցն» ղեկգիրն վճարէին, որով յետ այնորիկ հաստատուն օրինակօք աստուածատուր գրոցն և բազում շնորհագիր հարց յետ այնր աւանդութեամբ և նիկիական և Եփեսոսական կառնոք գային երևելով աշխարհին Հայոց և առաջի զնէին հարցն գրեբեալ Կտակարանսն Եկեղեցույ Սրբոյ» (էջ 31):

Վարդապետների վերադարձից հետո Ս. Սահակը հատկապես Ծղնիկի օժանդակությամբ սկսում է Աստուածաշնչի առաջին՝ «յառաջագոյն, յանկարծակի, փութանակի» թարգմանության վերասրբագրության, վերաթարգմանության. «դարձեալ յետ այնորիկ առեալ [Սահակայ] հանդերձ Եղնկաւ զյառաջագոյն զյանկարծագիտ զփութանակի թարգմանութիւնս հաստատէր ճշմարիտ օրինակօք ըբերելօք» (էջ 31):

Խորենացին ևս (Գ գիրք, զլ. կա, էջ 353) վկայում է, որ Բյուզանդիայից վերադարձող վարդապետները Սահակին և Մեսրոպին են հանձնում «յԱշտիշատ Տարօնոյ... զթուղթսն և զկանոնս ժողովոյն Եփեսոսի» վեց սահմանալ կանոնաւ զլիսոց և զստոյգ օրինակս գրոց: Զոր առեալ Սահակայ և Մեսրոպայ, դարձեալ թարգմանեցին»:

Կորյունի և Խորենացու վկայություններն ապացուցում են, որ Կոստանդնուպոլսից ուղարկված Աստվածաշնչի աստույգ և հաստատուն օրինակը ծառայում է որպես հիմք ստուգելու, ճշգրտելու և ամբողջացնելու առաջին թարգմանությունը:

Առաջին թարգմանության մեջ պակասում էին Հին Կտակարանի երկրորդականոն ցրքերը: Յոթանասնից թարգմանության մեջ հետո մուծված մի շարք երբայական սրբա-

ղան գրքեր՝ գրված երբայերեն և մասամբ աղամբերեն, որոնք երբայական կանոնի մեջ չկային, կոչվում են երկրորդականոնները. այսպես օրինակ՝ Մակարայեցվոց առաջին գիրքը, Սիրաքը, Տովբիթը, Հուդիթը, Բարուքի գիրքը, Իսկ Ձոթանասնից թարգմանություն մեջ մտել են Իմաստություն Սողոմոնի, Եղթան, Բ Մակարայեցվոց, Թուլթ Երեմիայի, Գա- նիելի մարգարեության մեջ Օրհնություն երեք մանկանց և այլ մասեր, որոնց բնագիրը հունարեն է և չի մտել երբայական կանո- նի մեջ:

Արդ, եթե Աստվածաշնչի թե՛ նախնական և թե՛ սրբագրված թարգմանությունները եղել են հունական սկզբնաղբյուրների կամ բնագրերի վրայից, ինչպե՞ս բացատրել ա- սորերենի հետքերը կամ Ձոթանասնից թարգ- մանության հետ առհասարակությունները, որոնք կան Աստվածաշնչի հայերեն թարգ- մանության մեջ, ինչպես նաև երբայերենի հետքերը:

Բանասերներից ոմանք, և ի մասնավորի Գալուստ Տեր-Մկրտչյանը (Միաբանը), ըն- դունում են Աստվածաշնչի հայերեն մի եր- րորդ թարգմանություն (տե՛ս «Արարատ», 1908 թ., էջ 564, «Տիմոթեոս Կուդի Հակա- ճառություն հայ թարգմանության ժամանա- կը և Ս. Գրքի երրորդ կամ սեռարեքո հայ թարգմանությունը»), կատարված և դարի երկրորդ կեսին, հունարան դպրոցին պատ- կանող հեղինակների ձեռքով:

Մայր Աթոռի վաստակավոր գիտնական Միաբանը, հենվելով Մովսես Խորենացու «Հայոց պատմության» Գ գրքի կա գլխի վրա (էջ 354), թի բազում մասանց թերա- ցեալ գործն համարում է երկրորդ թարգ- մանությունը Պրոֆ. Զ. Աճառյանը «Շողո- կաթ»-ում (Ս. էջ 1) մեծածին հայագիտական ժողովածու, Ա գիրք, Վաղարշապատ, 1913 թ., էջ 1) նշելով մեկտեղ, որ «բանասեր Գա- լուստ Տ. Մկրտչյան երևան կհանն ընդոր- վին նոր խնդիր մը՝ որ հայ մատենագրու- թյան պատմության համար ահագին նշանա- կություն ունի քանի մը տեսակետով», միա- ժամանակ շեշտում է, որ «մեր հին մատե- նագրությունը կճանչնա Ս. Գրքի երկու թարգմանություն... և բանասերները խորե- նացիի այդ տեղեկության վրա միշտ կասկա- ծով նայած են. արդեն Խորենացին ինքն ալ չի պատմեր, թե այս երրորդ թարգմանու- թյունը կատարվեցա՞վ թե ոչ»:

Աստվածաշնչի հայերեն թարգմանության տեքստի հարցով զբաղվել են նաև Զ. Հով- հաննես վարդապետ Զոհրապյանը 1805 թվականի Աստվածաշնչի հայերեն Գ տպա- գրության առաջաբանում, նրա հետևո-

թյամբ՝ Զ. Գարեգին վարդապետ Զարհա- նելյանը իր «Հայկական թարգմանութիւնք» գործում, Գ. Խալաթյանը «Գիրք Մնացոր- դաց ըստ հնագոյն հայ թարգմանութեանց» (Մոսկվա, 1899 թ.), «Յաղագս թարգմանու- թեանց աստուածաշունչ տառից ի հայոց լեզու» («Բարձրագիտ», 1850 թ.), Մեսրոպ լեզու («Բարձրագիտ», 1850 թ.), Մեսրոպ արքեպիսկոպոս Մովսիսյանը՝ Մայր Աթոռի միաբան, իր դոկտորական դիսերտացիայի մեջ՝ «Ս. Գրքի հայերեն թարգմանության պատմությունը» (ռուսերեն), ապա Մատա- թիա Գարագաշյանը, Եկիշն արքեպիսկոպոս Գուրյանը, Զ. Ներսես Աղիշյանը, Զ. Թորոս- յանը, Զ. Սահակ Կոզյանը, Թորգոմ արքե- պիսկոպոս Գուրգիսյանը, Զ. Արսեն Հացունին, Բարգեն Կաթողիկոս Կյուլեսերյանը, Գարե- գին Կաթողիկոս Հովսեփյանը, պրոֆ. Ն. Աղունցը, պրոֆ. Լեոն, պրոֆ. Ստ. Մալխաս- յանցը, պրոֆ. Արեղյանը, պրոֆ. Աճառյանը և ուրիշներ:

Ստույգ է, որ ունենք Հին Կտակարանի մի շարք գրքերի ավելի հին թարգմանություն- ներ, որոնք կատարվել են ասորերեն բնագրի վրայով՝ Օրինակ՝ մեզ է հասել Ա Մնացոր- դաց գրքի ասորերենից կատարված թարգ- մանությունը, հրատարակված Գրիգոր Խա- լաթյանցի կողմից՝ Կրկին թարգմանությամբ մեզ հասել են Առակաց գրքի, Ժողովողի և երգ երգոցի թարգմանությունները (տե՛ս Նորայր Բյուզանդացի, «Կորին վարդապետ և նորին թարգմանութիւնք», Տփղիս, 1900 թ.): Զ. Սահակ Կոզյանը հրատարակել է մի այլ հին թարգմանություն՝ Մակարայեց- վոց Բ գրքի հայերեն թարգմանությունը (Վիեննա, 1923 թ.): «Սիոն» ամսագրի 1936 թվականի մայիսի և 1937 թվականի ապրիլի համարների մեջ Նորայր եպիսկոպոս Պո- դարյանը հրատարակել է Սիրաքի, Ա և Բ Մնացորդաց և Ժողովողի հին հայ թարգմա- նությունների տարբերակներ՝ բաղադրու- թյուններով և ծանոթագրություններով:

Փարպեցին հիշում է Սաղմոսների երկու թարգմանությունների մեկ տարբերությունը՝ ԺԶ Սաղմոսում, Թոմվա Արծրունին վկայում է, որ սասնեցիք գգիտեն զՍաղմոսն զհին թարգմանեալն վարդապետաց հայոցս: Օձ- նեցին, Ղեռնգ պատմիչը և նարեկացի գոր- ծածուս են Սաղմոսների ավելի հին թարգ- մանությունը: Մատաթիա Գարագաշը իր «Աստուածաշունչ մատեն» Հին և Նոր Կտա- կարանաց աշխատության առաջաբանում (Կոստանդնուպոլիս, 1895 թ.), հաստատում է, որ Աստվածաշնչի հայերեն թարգմանու- թյունը երբայական բնագրի հետ բաղդա- տելիս «թէպէտե թարգմանութիւն մեր զհետ երթայ բազում հասատեալ և ճշտի դթարգ- մանութեանն Ձոթանասնից, ուրեք ուրեք

խոտորեալ ի նմանէ, մերձեցնայ երրայական
ընագրին։

Մատենագրական այս շատ հետաքրքիր և
կարևոր հարցը բանասերները բացատրել են
տարբեր տեսանկյուններից։ Ոմանք ընդունել
են, որ Աստվածաշնչի պաշտոնական և սրբ-
րագրված ու հաստատված թարգմանությու-
նից առաջ եղել են նախապես ասորերենից
ևս կատարված բանավոր թարգմանություն-
ներ շին Կտակարանի մի քանի գրքերի, ո-
րոնք վերջին թարգմանության և սրբագրու-
թյան ժամանակ թարգմանիչների աչքի
առաջ են եղել և նրանցից ոմանք նախամե-
ծար են համարել ասորական կամ եբրայա-
կան ընթերցումը որոշ հատվածների մեջ։

Այլ քննադատներ առաջ են քաշել այն
կարծիքը, որ թարգմանիչների առաջին ե-
ռանգը թելադրել էր նրանց ժանհապաղ հա-
յացնել Աստվածաշունչը իր մասերուն մեջ,
առանց խտրություն դնելու ընագրի և ընա-
գրի միջև։ Բայց հետո, երբ առաջին ոգե-
րությունը տեղի տվավ խոհականության,
ուշադրություն դարձվեցավ ընագրի միաս-
նականության և նախապատվություն շնորհ-
վեցավ հունարենի, որմե նաև ասորա-
կանը կրխերս (ժՀանդես ամսօրյա, 1930,
էջ 550)։

Աստվածաշնչի հայերեն թարգմանությու-
նը կատարվել է հունարեն Յոթանասնից

ընագրի հարադատությամբ, բարեխղճու-
թյամբ, հոգով և հավատով, որպես առա-
ջին հայ գրական մատենագրական երկը մեր
դպրության, Վերացած լեզվի և ոճի այնպիսի
գեղեցկության և ընկանություն, որ կար-
ծես սրբազան Հնդինակները հայու պես
գործեր են (Երազմավեպ, 1935, էջ 293)։

Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը
հավերժական փառքն է Ս. Սահակի և Ս.
Մեսրոպի և մեր թարգմանիչների, միաժա-
մանակ անկողնուպտելի հպարտությունը և
պատիվը մեր ժողովրդի։

Մեզ հասած հայերեն Աստվածաշնչի ա-
մենահին ձեռագիրը կրում է 1270 թվա-
կանը, ըստ Երեանի Ձեռագրատան № 345
ձեռագրի։ Դա լիակատար մի Աստվածա-
շունչ է, գրված Սսում, Իսկ ամենահին ձե-
ռագիր Ավետարանը, որը կրում է 887 թվա-
կանը, կոչվում է Լազարյան Ավետարան։

Աստվածաշնչի հայերեն առաջին տպա-
գրությունը եղել է 1666 թվականին Ամստեր-
դամում, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հաշվին,
Հակոբ Զուղայեցի կաթողիկոսի հրամանով,
երեւանցի Ոսկան վարդապետի նախաձեռ-
նությամբ։

Աստվածաշնչի տպագրության պատմու-
թյան մասին հաջորդիվ, առանձին այլ հոգ-
վածում։

Ա. Հ.






2. ԽԱԼՓԱԽԶՅԱՆ

(Ճարտարապետական գիտությունների
բնկնածու)

ՆՈՐ ՆՅՈՒԹԵՐ ԷԶՄԱԾՆԻ ՎԱՆՔԻ ԵՎ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՏԱՎԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



Միմիա՞նք և նրա շրջակայքում գտնվող հայ ճարտարապետության հնամենի հուշարձանները դեռևս բավականաչափ ուսումնասիրված չեն։ Մինչև այժմ կատարված պեղումների տրված լինելը կցկտուր են և հուշարձաններն անգամ լրիվ ուսումնասիրված չեն։ Այս պայմաններում հատուկ հետաքրքրություն հենրկայացնում արխիվային նյութերը։ Այդպիսի նյութեր են էջմիածնի վանքի այն նկարներն ու գլխավոր հատակագիծը, որ մենք հայտնաբերել ենք Մոսկվայի Պետական կենտրոնական ռազմա-պատմական թանգարանում։

Այդ նկարներից առաջինի տակ գրված է. «Հայոց էջմիածին վանքի տեսարանը, Արարատ լեռան մոտ (ռուսերեն)»։ Դա 30×34 սմ. չափսի ջրաներկ նկար է՝ զարդնա-վարդագույն և կանաչ երանգներով (նկար 1)։

Էջմիածնի վանքը պատկերված է մյուս ճարտարապետական անսամբլների շրջապատում։ Վանքը զետեղված է նկարի կենտրոնում, ամպերով պարուրված մեծ Մասիսի ֆոնի վրա։ Առջևի պլանում, դեպի ձախ, պատկերված է ըստ երեւութի չափսի վանքը, իսկ աջ կողմում, ծառի հետքեր, հեռ-

վում երևում են մի եկեղեցի և բնակելի շենքերի մի խումբ։

Վանքերը շրջապատված են պարիսպներով, որոնք ունեն բազմաթիվ կիսակլոր աշտարակներ։ Ինչպես պարիսպները, այնպես էլ աշտարակները ունեն հրակնատներ և վերջանում են կիսակլոր զաղաթ ունեցող ատամներով։ Առջևի պլանում ցույց տրված պարիսպը, ինչպես երևում է շարվածքի կարծրից, կառուցված է քառանկյունի տաշված քարերով։ Նրա աշտարակները ղեպի վեր բարձրանալով նեղանում են, իսկ հրակնատները նեղլիկ, վերնում կիսակլոր լուսամուտի տեսք ունեն և շրջանակված են տափակ շրջանակներով։ Պարսպամասերից մեկում ցույց տրված կամարակապ անցքը, որը հավանաբար մուտքն է, երկու կողմերում եռանկյունաձև որմնահեցեր ունի։

Վանքերի մուտքերը մեծածավալ դարբասների (պորտալների) տեսք ունեն, իսկ դռները զետեղված են սլաքաձև խորշերի մեջ։

Եկեղեցիների ճարտարապետական ձևերը տրված են խիստ մանրամասնորեն։ Նկատելի է, որ նկարիչը ձգտել է ճշմարտացի պատկերել շենքերի բնույթը, կոլորիտը և Հայաստանի բնության յուրահատկությունը, և ալը որոշ չափով նրան հաջողվել է։ Այնուամենայնիվ, աչքի է ընկնում շենքերի մանրամասնությունների և զարդաքանդակների մեկնարանման անճշտությունը։ Պարզ

1 Պետական կենտրոնական ռազմա-պատմական արխիվ, Ռազմական հաշվառման արխիվ, ֆոնդ 418, դործ 804։

երևում է ռուսական եկեղեցիների ոճի ազդեցությունը նկարչի վրա: Մասնավորապես աղավաղված են շենքի մանր ծավալային մասերի և մի քանի եկեղեցիների տանիքի ծածկերի ձևերը, ավելացված է լուսամուտների թիվը, լափազանցված են զարդաքանդակները, մի բան, որ նսեմացնում է նկարի փաստաթղթային արժեքը:

Նկարի կատարման տարեթիվը հայտնի չէ: Եթե դատելու լինենք «էջմիածին» անվան հին ռուսերեն տառադարձությունից, ինչպես գրվել է նաև տարեթիվ ունեցող այլ նկարներում, ապա կարելի է այս նկարը վե-

«Ջև Հայոց վաճառք սբյ Արառոյն էջմիածնի ուր յամի ՏԵՅՈՒՆ 307. կառուցյալ եղև ի բազմաշարչաւ Սբյ ԳՐԻԳՈՐԷ Լուսաւորչէն մերմէ 'ի Վաղարշապատ քղքի' ուր է ի Մեծն Հայս մերձ առ լիառն Արարատ և ճնգէտսն ասպարիգաւ ճեռի 'ի քաղաքէն Նրեանայ: Տպեցեալ ի Ս. Պ. Բուրգ յամի Տեառն 1805: Արդեամբ Զարուքի Աժառուրեան Վաղարշապատցոյ»³:

Գրավյուրի ձախ կողմում կա նույնի ուսերենը:



Նկար 1

ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՄՆԻ ՎԱՆՔԻ ՏԵՅՈՒՆԱՆԸ

(Ջրաներկ ճկաւ ԺԸ դարի վերջի. ԺՔ դարի սկզբի)

րազրել ԺԸ դարի վերջերին կամ ԺՔ դարի սկզբներին:

Մյուս երկու նկարները գրավյուրներ են, որ պատրաստել է նկարիչ-փորագրիչ Ա. ՌԻ. Ն Սանկտ Պետերբուրգում, 1905 թվականին, Հարություն Աստվածատուրյան Վաղարշապատցու պատվերով²:

Առաջին գրավյուրը (նկար 2) պատկերում է էջմիածնի վանքը: Ներքևը, աջ կողմում, հայերեն գրված է.

Գրավյուրի լափսն է 27X50 սմ.:

Դատելով Տաճարի տեսքից՝ վանքը ցույց է տրված հյուսիս-արևմտյան կողմից, մեծ և փոքր Մասիսների ձյունափառ զազաթների ֆոնի վրա: Ձախ կողմում, վանքի պարսպի հետևը, նույնպես պարսպապատ մի բնակավայր է, որի տները թաղված են կանաչի մեջ: Աջ կողմում, հեռվում, երևում են երկու խումբ, ըստ երևույթին, բնակելի շենքեր:

³ Վանքի կառուցման տարեթիվը (307) փաստաթղթերում հանդիպում է առաջին անգամ:

² Նույն արխիվում, ֆոնդ 418, դործ 783, թերթ 1 և 2:

Այս նկարում ևս վանքը շրջապատված է ատամնավոր պարսպով, որի երեսցող երկու կողմերից ամեն մեկում կա շորս գլանաձև բարձր աշտարակ։ Պարսպի ատամներից ցած կան ճեղքանման անցքեր, որոնք ըստ երևույթին, հրակնատներ են։ Վանքի հարթասր հյուսիսային կողմումն է, անկյունային և միջանկյալ աշտարակների միջև, և նրանց բարձրությունը հասնող պորտալի տեսք ունի, լայն կամարակապ մուտքով, որը զետեղված է սլաքաձև խորշի մեջ։ Նույնպիսի տեսք է տրված արևմտյան կողմի պարսպի աշակողմյան ծայրում գետեղված փոքրիկ դարբասին։

Այդ գրավյուրը համեմատելով էջմիածնի վանքի ընդհանուր տեսարանի այն նկարի հետ, որ կատարել է Ֆրանսիացի ճանապարհորդ Շարդենը 1673 թվականին⁴, կարելի է նկատել 1673 թվականից մինչև 1805 թվականն ընկած ժամանակամիջոցում տեղի ունեցած հիմնական փոփոխությունները։ Այդ ժամանակամիջոցում ոչ միայն ընդարձակվել է վանքի տեղիտորիան, այլև ավելացվել է պարսպի ու աշտարակների բարձրությունը, աշտարակների թիվը, ինչպես և նոր տեղ է փոխադրվել գլխավոր դարբասը (ըստ Շարդենի նկարի՝ պարսպն ու աշտարակները նույն բարձրությունն ունեն, իսկ այսպես կոչված Մարդասի դուռը, որ կառուցվել է Ժե դարի առաջին կեսին, ցույց է տրված Տաճարի արեւմտյան ճակատի առանցքի ուղղությամբ, զանգակատան դիմաց)։

Հիշյալ փոփոխությունները, որ զգալիորեն ամրացրել և փոխել են պարսպի արտաքին տեսքը, հավանորեն կատարվել են ԺԸ դարի սկզբին, Տաճարի նորոգման հետ միաժամանակ. որ կատարվել է Աստվածատուր կաթողիկոսի օրոք։

Պարսպից վեր բարձրացող Տաճարը նման է երկրորդ գրավյուրի վրա պատկերվածին, (նկար 3), որի տակ աչ կողմում հայերեն գրված է.

«Ձեակեբայութի Տաճարին Հայոց և Մյւր Աթոռոյն էջմիածնի ուր յամի ՏՆ 307. կառուցեալ եղև ի բագմաշաբաւ Մըյ Գրիգորէ Լուսաւորչէն մեռմէ ի Վաղարշապատ Բղբի ուր է ի Մեծն Հայս Սեբմ առ լեառն Աւարատ և ճեղճտնն ասպարիգաւ ճեռի ի քաղաքէն Երևանայ։ Տպեցեալ ի Ս. Պ. Թուրգ

⁴ Այդ նույն տեղումն է գտնվում այժմյան դարբասը, որ վերակառուցվել է 1957 թվականին։

⁵ Լ. Մելիքեթ-Երեկ, «Էջմիածնի տաճարը Շարդենի օրոք 1673 թվականին, «Էջմիածին» տնտեսագիր, 1958 թ., № 6, էջ 36, նկար 2.

յամի Տեառն 1805: Արդեամբ Գառուրի Աժառառեան Վաղարշապատոյն»։

Գրավյուրի չափսն է 27×50 սմ.

Գրավյուրի ձախ կողմում կա նույնի ոտսները։

Տաճարի ընդհանուր տեսքն այս գրավյուրի վրա շատ է հիշեցնում Շարդենի նույնանման նկարը⁵։ Երկուսն էլ նկարված են միևնույն կետից, այնուամենայնիվ նրանց միջև, մասնավանդ մանրամասնություններում, էական տարբերություններ կան։ Հարկ է նշել նաև նկարների կատարման տարբեր որակները (Շարդենի մոտ համալսականությունները փոքր-ինչ աղավաղված են, իսկ 1805 թվականի գրավյուրում դրանք ցույց են տրված ավելի ճիշտ, իրականին մոտիկ)։

1805 թվականի գրավյուրի վրա առաջին հերթին աչքի է ընկնում շենքի հնագույն վերնամասը։ Կենտրոնը պսակված է տասներկուկողմյա թմբկաձև գմբեթով, որ զարդարված է սլաքակամար սյունաշարով, Արևելյան կողմում բեմի արսիդի վրա կառուցված վեցկողմյա գմբեթն է, հարավային կողմում եռահարկ զանգակատան ութկողմյա ուտոնդան է, որ կառուցվել է 1633—1653 թվականներին, իսկ հյուսիսային ու հարավային կողմերում վեցկողմյա ուտոնդաններն են՝ գետեղված քառանկյունի կամարակապ հենարանների վրա, իսկ այս հենարաններն էլ կանգնած են դեպի դուրս ցցված արսիդների վրա⁶։ Այնինչ Շարդենի մոտ պատկերված են միայն երեք գմբեթ՝ կենտրոնականը, զանգակատան գլխինը և կողմնային մեկ արսիդի վրայինը, որ ըստ վանքի ընդհանուր նկարի՝ հյուսիսայինն է և ըստ Տաճարի ընդհանուր տեսարանի՝ հարավայինը։ Բացի արանից, նրա մոտ մի այլ անճշտություն էլ կա. հյուսիսային ու հարավային արսիդների գլխի ուտոնդանները ցույց են տրված միահարկ, մինչդեռ 1805 թվականի գրավյուրով (և իրականում) դրանք երկհարկանի են։ 1805 թվականի գրավյուրում երևում է մի արտաքին բաց սանդուղք, որը շենքի հիմնական ծավալի տանիքից տանում է դեպի զանգակատան երրորդ հարկը, որտեղ ցույց են տրված զանգերը։ Այժմ այդ սանդուղքը չկա, այն չկա նաև Շարդենի նկարում։

Տաճարի հիմնական ծավալը համարյա խորանարդ է։ Այստեղ դեռ չկա 1869 թվականին արևելյան պատին կից կառուցված վանքի թանգարանը։ Իրա տեղը պատկեր-

⁶ Նույն տեղում, էջ 37, նկար 3.

⁷ Հարավային արսիդի վրայի ուտոնդան 1921 թ. մարտի 27-ին քանդվելուց հետո վերականգնվել է 1959 թ.

ված է հենապատի (ցուկուի) քարծրությամբ մի կիսաշրջանաձև անհայտ նշանակությամբ ընդարձակ հարթակ, որը պարագծով շրջափակված է ուղղանկյուն սյունակներով: Շենքի շուրջը 1633 թվականին, Փիլիպոս կաթողիկոսի օրոք, սալահատակված է ուղղանկյունի քարե սալերով, և այդ իր պարագծի ձևով ընդգծում է տաճարի հատակագծի խաչաձևությունը: Սալահատակից ելնող ուղիղ կամ կորագծի քարե ուղիները, որոնք Շարդենի նկարում չկան, ըստ երևույթին երևան են եկել ԺԸ գարի սկզբներին:

դուկտոր) նյութովի գծած պատճենում, որն ա վերցրել է 1827 թվականի ապրիլի 14-ին առաջին կարգի տեղագիր Մամոնտովի աշխատիով կատարած գծագրից (Նկար № 4)⁹: 40X50 սմ. լափսի այս գծագիրը կատարված է թղթի վրա, գունաւոր, շենքերը նշված են վարդագույն, բուսականությունը՝ կանաչ, չրամբարներն ու առուները՝ կապույտ:

Գլխավոր հատակագիծն ընդգրկում է մի տարածություն, որի հյուսիսում Վաղարշապատ ավանն է, արևելքում ու հարավում՝ Հոփսիմեի ու Գայանեի վանքերը, հարա-



Նկար 2

ՍՈՒՐԻ ԷՋՄԻԱՏԻՄԻ ՎԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՆՍԱՐԱՆԸ ԷՅՈՒՄԻՍ-ԱՐԵՎԻՈՒՏՔԻՑ

(Գրավյուր 1805 թվականի)

Տաճարը շրջապատում են զանազան շենքեր¹⁰, ջախում, բակի հյուսիսային կողմում միահարկ խցերն են, որոնք ճակատի կողմում սլաքաձև խոր որմախորշեր ունեն, որոնց ոխթմը սյունաշար է հիշեցնում: Այդ կողմում նոսր լուսամուտներով մի բարձր շենք կա: Բակի տարածությունը կանաչապատված է:

Էջմիածնի գլխավոր հատակագիծը պահպանվել է առաջին կարգի լափագետ (կոն-

վում՝ ոռոգիչ առուն: Էջմիածնի վանքը, որ տեղագրված է ավանի ու Գայանեի վանքի միջև, մեկուսացված է այլ շենքերից ու կանաչ տնկիներից, մի բան, որ, ըստ երևույթի, բխել է ստրատեգիական պահանջներից:

Գծագրում նշված են էջմիածնի վանքի տանող հիմնական ուղիները: Առաջին ուղին դուրս էր գալիս հարավ-արևմտյան դիափոր դարասից, վանքի պարիսպները շրջանցում էր հարավից, արևմուտքից և հյուսիսից և ապա, ավանի հարավային ու արևելյան եզրի

⁹ Շարդենի մոտ այն պատկերված է որպես մեկուսի կանգնած մի շենք:

¹⁰ Նույն արխիվում, ֆոնդ 349, արձ. 44, դորձ 1591:

երկարութեամբ, ուղղվում դեպի հյուսիս, «դեպի ռուսաստանյան օահմանը»: Վանքի հարավ-արևմտյան անկյունի մոտ ճանապարհը ճյուղավորվում էր, մեկը դեպի արևմուտք, «դեպի Սարգարաբադ ամրոցը», մյուսը՝ հարավ, «դեպի Արաքս գետը»: Բնակավայրի հետ վանքը կապվում էր հյուսիս-ալիս դարբասից դուրս եկող ճանապարհով, իսկ «Երևան ամրոց»-ի հետ՝ հարավային շենքերից է նշել, որ Երևան տանող ճանապարհը ուղիղ դեպի արևելք չէր գնում, այլ Գայանեի վանքի տերիտորիան շրջանցելով գնում էր հարավային ուղղությամբ: Հավանորեն ճանապարհի այսպիսի երկարացումը, որ տարբերվում է Նոյսիսի վանքի մոտով անցնող այժմյան ճանապարհից, կախված է եղել այդ վանքերի միջև ընկած ինչ-որ դժվար հաղթահարելի խոլընդոտների հետ:

Հատակագծում մանրամասնորեն նշվում է հիմնական ոռոգիչ ցանցը, որը ջուր էր մատակարարում քնակավայրին ու վանքերին: Գլխավոր ջրանցքը քնակավայրը շրջանցում էր հյուսիսից ու արևելքից, երկրորդը՝ հարավից (երկուսն էլ դեռ այժմ կա գործում են): Երկրորդ ջրանցքից մի ճյուղ գնում էր դեպի հարավ, շրջանցելով այստեղ գտնվող բարձունքը և երկու վանքերը արևմուտքից ու հարավից, մածրագրի վայրերում ցույց են տրված զգալի տարածություններ ջրամբարներ, որոնք կապված են ջրանցքի այդ ճյուղավորությունների հետ: Դրանցից մեկը քնակավայրի արևմտյան մասումն է, երկրորդը՝ էջմիածնի վանքի հյուսիս-արևմտյան անկյունի մոտ, կա երկուսն էլ էջմիածնի և Գայանեի վանքերի միջև: Դրանցից մնացել է միայն այսպես կոչված՝ «վանքի լիճ»-ը, որ գտնվում է էջմիածնի վանքի հարավ-արևմտյան կողմում: 1846 թվականին, ներսես Ե Աշտարակեցի կաթողիկոսի օրոք այդ լճակը բարեկարգվեց: Միջին-ասիական ավազանների ձևով նրա պատերն ու հատակը պատվեցին սրբատաշ քարով, տարողությունը հասցվեց մոտավորապես 72 000 խորանարդ մետրի (երկարությունը՝ 170 մ. ավելի, լայնությունը՝ 70 մ., խորությունը՝ 6 մ.):

Էջմիածնի վանքի տերիտորիան, ըստ հատակագծի, համարյա քառակուսի է, հարավ-արևմտյան անկյունում ունի մի փոքրիկ ուղղանկյուն կտրվածք: Պարիսպներն աշտարակներ ունեն. անկյուններում գլանաձև աշտարակներ են, իսկ հարավային, հյուսիսային ու արևելյան կողմերում, միջանկյալ տարածությունների երկուական աշտարակները կիսակլոր են: Պաշտպանությունը դուրացնելու նպատակով, դիմավոր դարբասը

գետեղված է կտրվածքի անկյունում, որի երկար կողմը ճանապարհից դեպի ձախ ունի չորս մոտ-մոտ տեղավորված աշտարակներ: Դարբասի առաջ եղել է մի լրացուցիչ պարիսպ, որն արգելապատի (բարբականի) դեր է կատարել: Թվական տվյալների համաձայն ինչպես պարսպի, այնպես էլ դարպասի կտրվածքները բավական մեծ են եղել: Դարբասի բարձրությունը իր ծածկի հետ մոտ 7,25 մ. է, խորությունը՝ 8,5 մ.: Արտաքին թեք մակերեսով հաստ պարիսպները (հիմքում 3,2 մ.) նույն բարձրությունն են ունեցել: Նրանց վերևում ձգված է եղել մոտ մեկ մետր լայնությամբ անցուղի, որն արտաքին կողմից պաշտպանված է եղել 1,9 մ. բարձրությամբ պատով, և այդ վանքի պաշտպաններին հնարավորություն է տվել ազատ կանգնել ամբողջ հասակով:

Վանքի տերիտորիայում շատ շենքեր կան: Ի տարբերություն Շարգենի նկարից, որտեղ այն ներկայացված է որպես քառանկյունի մի ընդարձակ բակ, այստեղ կան իրենց ձևով ու մեծությամբ զանազան շենքեր, որով վանքի տերիտորիան բաժանվում է մեծ մասամբ մեկուսացված առանձին-առանձին բակերի ու պարտեզների: Ամենից մեծը կենտրոնական բակն է, որը քառակուսի հատակագիծ ունի, կենտրոնում՝ Տաճար: Տաճարը, ինչպես և 1805 թվականի գրավյունում է տրված, արևելյան կողմում չունի հետագայում կառուցված թանգարանը. բակի արևմտյան մասում գտնվում է Վեհարանը՝ իր ալգիով, հարավային կողմում ձմեռային ու ամառային սեղանատներն են՝ իրենց օժանդակ շենքերով, հյուրանոցը (Ղազարապատ), ժողովարանը, դիվանի, բաղնիքի շենքերը, արևելյան և հյուսիսային կողմերում վանականների խցերն են և այլ շենքեր, այդ թվում՝ մոմատունը, հացատունը:

Հարավ-արևելյան կողմում մի ընդարձակ բակ է, հավանորեն տնտեսական կարիքների համար, որի մի մասը զբաղեցնում է մանր, Այս բակը, ըստ երևույթին, երևան է եկել 1673 թվականից հետո, որովհետև Շարգենի նկարում այն չկա: Նույնպիսի չափի մի բակ ցույց է տրված և արևելյան կողմում:

Բնակավայրը էջմիածնի վանքից հեռու է այնպիսի տարածությամբ, որ մոտավորապես հավասար է ցանկապատի հյուսիսային կողմի երկարության կեսին: Վաղարշապատ ավանի հատակագիծը մոտավորապես քառանկյունի է. տարածությունը մոտ 3,5 անգամ մեծ է վանքի բակի տարածությունից: Բնակավայրի տերիտորիայի կեսից ավելին

րության¹², դա պաշտպանական հզոր կա-
ռուցվածք է եղել, որը մտել է հնադարյան
քաղաքի արևելյան սահմանը պաշտպանող
ամրությունների սիստեմի մեջ, Անտարա-
կույս այդ հողապատնեշը մի մասն է եղել այն
պաշտպանական հողապատնեշի, որ կառու-
ցել է հայոց Վաղարշակ թագավորը (117—
140 թ. թ.), երբ նա հնադարյան Վարդգեսա-
վանը վերականգնում էր որպես Հայաստա-
նի նոր մայրաքաղաք՝ Վաղարշապատ։ Վա-
ղարշակ թագավորի շինարարական աշխա-

սպառ է հզոր պատուարաւ, և անուանեաց
Վաղարշապատ, որ և նոր քաղաք¹³։

Այդ հողապատնեշի մասին համառոտ հի-
շատակություն կա նաև Հովհաննես Կախա-
կուպոս Շահխաթունյանի աշխատության
մեջ¹⁴։ Խոսելով էջմիածնի հնադարյան հու-
շարձանների մասին, նա նկարագրում է նաև
հողապատնեշը, որի երկարությունը ԺԹ դա-
րի կեսերին արդեն նվազել էր մինչև կես
կիլոմետր (750 քալ), իսկ ռեկոնստրուկցիոն
միայն հետքեր էին մնացել։



Նկար 4

ՈՐՈՐԸ ԷՋՄԻԱՄՆԻ ՎԱՆՔԻ ՆՎ ԵՐՋԱԿԱՑՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԹԸ
(Կազմել Լ. տեղեկագիր Մամոնտովը 1827 թվականին)

տանքների մասին տեղեկություններ կան և
դարի հայ պատմիչ Մովսես Խորենացու
մոտ։ Քաղաքը հիմնելու մասին պատմելիս
Խորենացին ասում է, որ Վաղարշակը պաշտ-
պանական նպատակով այն սպաստեաց պար-

էջմիածնի այս գլխավոր հատակագծի մեջ,
որը մինչև այժմ հայտնի եղածներից հնա-

¹¹ Մովսես Խորենացի, «Պատմութիւն Հայոց», գիրք
Ա, ԿԵ, Թիֆլիս, 1913, էջ 198։

¹² Հովհաննես Կախկուպոս Շահխաթունյան, «Ստո-
րագրութիւն էջմիածնի», հատ. Ա, Վաղարշապատ,
1842, էջ 79—80։

¹³ էջմիածնի վանքի չափերի հետ համեմատած, մի
կիլոմետրից ավելի է։

գույնն է, պաշտպանական հողապատենշի առկայությունը մեծ արժեք է տալիս հատակագծին, Պատմական նշանակություն ունեցող այս փաստաթուղթը ոչ միայն հաստատում է Մովսես Խորենացու տեղեկությունների խսկությունը, այլև նշում է հնադարյան քաղաքի ճիշտ տեղը, նրա արևելյան սահմանը Գայաննի վանքից մինչև քնակավայրի կենտրոնը:

Հողապատենշի հյուսիսային ծայրը հասնում է հատակագծում կոտրուված տեսք ունեցող պարսպին, որը, դատելով մնացած հրկու կտր աշտարակների առկայությունից, պաշտպանական նշանակություն է ունեցել: Այդ պարսպի մնացորդները տեղ-տեղ կառույցի է նկատել և այժմ, Այն հողապատենշից փոքր-ինչ կարճ է եղել: Սակայն նրա ձևը և հողապատենշի նկատմամբ ունեցած գիրքը վկայում են, որ այդ պարսպը քաղաքի սկզբնական ամրությունների մասը չի եղել, հնարավոր է, որ այն կառուցվել է հետագայում, պտղատու այգիները պաշտպանելու նպատակով:

Այդ այգիներն իրենց տարածությամբ մի քիչ փոքր են բուն քնակավայրի տարածությունից: Դրանք գոյություն ունեն հնագույն ժամանակներից: Վաղարշապատի հյուսիս-արևելյան ծայրում գտնվող հենց այդ այգիների մասին է, որ խոսվում է Ագաթանգեղոսի հիշատակած Հռիփսիմյան կույսերի¹³ պատմության մեջ: Հայտնի է, որ այդ կույսերից յուրաքանչյուր խմբի նահատակված տեղը այգիներում մատուցներ են կառուցվել: ապա, հենվելով գլխավոր հատակագծում Շողակաթի ու Հռիփսիմնի վանքերի տեղադրության վրա, կարելի է ասել, որ հնում այգիների տարածությունն զգալիորեն ավելի մեծ է եղել¹⁴:

Հետաքրքրական է, որ այդ գծագրերը կազմելուց 4 ամիս հետո, 1827 թվականի օգոստոսի 17-ին, այս այգիների տերիտորիայում տեղի է ունեցել մի նշանավոր ճակատամարտ, որի ժամանակ ռուսները հաղթել են թվով գերազանցող պարսիկներին,

որով և էջմիածինը փրկել են լիակատար ավերումից, ի հիշատակ այդ ճակատամարտի, հայերը 1834 թվականին այդ այգիներում կառուցել են մի կոթող, որը կտր սյունի տեսք ունի, դրված քառակուսի պատվանդանի վրա¹⁵:

Շողակաթի վանքը (ըստ գծագրի՝ «Շողակատ»), որ բաղկացած է մեկ շենքից, ցույց է տրված անշատ, բաց տարածության վրա, հյուսիսից ու արևելքից շրջապատված այգիներով:

Դեպի հարավ-արևելք, հենց այգիների եղրին, Հռիփսիմնի վանքն է (ըստ գծագրի՝ «Ռեպսիմն»), որն այդ ժամանակ հատակագծում ունեցել է քառակուսի տերիտորիա, շրջապատված անկյուններում կտր աշտարակներ ունեցող պարսպով, որ 1776 թվականին կառուցել է Մկրտիչ եպիսկոպոսը հում աղյուսից և լեռ քարից: Հռիփսիմնի եկեղեցին (կառուցված 618 թվականին) եղել է կենտրոնում, իսկ ուղղանկյուն եռանկյան նման շենքը, որ ըստ երևույթին քնակելի շենք է եղել, գտնվում է հողամասի հյուսիսային անկյունում: Դատելով այժմյան վիճակից, հատակագծի այդ սկզբնական, ճիշտ երկրաչափական ձևը, հետագայում, վանքի ընդարձակման կապակցությամբ, ձևափոխվել է: 1894 թվականին հարավային մասում հողն պարսպի փոխարեն, նրանից որոշ հեռավորության վրա, կառուցվել է նոր պարսպ՝ սրբատաշ տուֆով, ինչպես և երկհարկանի քնակելի տուն և այլ օժանդակ շենքեր: Փոքր ինչ վերակառուցվել է նաև հյուսիսային պարսպը, որի հետևանքով մասնավորապես նրա արևելյան ծայրում առաջացել է սեղանաձև մի ելուստ:

էջմիածնի այս նկարը, գրավյունները և գլխավոր հատակագիծը, անտարակույս, պատմական մեծ արժեք են ներկայացնում: Դրանք ոչ միայն ցույց են տալիս հուշարձանների վիճակը ԺԹ դարի սկզբում, այլ հնարավորություն են տալիս նշելու, թե գրական աղբյուրներից անհայտ ինչպիսի ձևափոխումների են ենթարկվել նրանք ԺԹ դարի վերջերից մինչև ի դարի սկիզբը:

13 «Ագաթանգեղայն Պատմություն Հայոց», Թիֆլիս, 1914, էջ 103—106:

14 Նույն տեղում, էջ 385—386:

15 Ա. Ներսիսյան, «Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կաթողիկոս Հայր ԺԹ դարում», Թիֆլիս, 1895, հատ. II, էջ 294—295:





Հ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

(Պատմական գիտությունների
բնկեաժողով, ԵՃԳԵՍ)

ՄՈՒՂՆՈՒ ՎԱՆՔԸ ԵՎ ՆՐԱ ՎԻՄԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ



այ մշակույթի պահպանման և զարգացման ասպարեզում, ժեղարի երկրորդ կեսը և ժԸ դարի առաջին քառորդը, համեմատաբար, բեղուն ժամանակաշրջան էր Այդ երևույթը հատկապես նկատելի է ճարտարապետության և եկեղեցիշինության բնագավառում:

Բազմաթիվ վանքեր, որոնք ավերվել ու ամայացել էին թուրք-թաթարական արշավանքների ժամանակ, վերականգնվում, վերահաստատվում և զգալի չափով ընդարձակվում են նշված ժամանակաշրջանում, ինչպես, օրինակ, Տաթևի վանքը, Շատի-վանքը, Կենվանքը, Ամաղու Նորավանքը, Արկյազի Ս. Խաչ վանքը, Խոր Վիրապը, Ուշու Ս. Սարգիսը, Հավուց թառի Ամենափրկիչ վանքը և շատ ուրիշներ:

Հիմնադրվում են նոր վանքեր ու մենաստաններ, ինչպես և քաղաքացիական այլ կառուցվածքներ, որոնցից հատկապես նշանակալից են Տաթևի մեծ անապատը, Շինուհայրի կուսանաց անապատը, Հարանց անապատը, Դավիթ Բեկի բերդը և Հալի-ձորի անապատը նույն բերդում, Արիստակ անապատը, Լիմ և Կտուց անապատները Վանա լճի համանուն կղզիների վրա, Մալի Ամենափրկիչ անապատը, Երևանի Անանիա առաքյալի անապատը, Վահրամաթի Կարմիր վանքը, Զվարթ վանքը, Ագուլիսի Թովմա առաքյալի վանքը, էջմիածնի Շողակաթ վանքը, Մակուի Թադեոս առաքյալի

վանքը, Դարաշամրի Ստեփանոս նախավայրի վանքը, Երնդակի Ս. Կարապետի վանքը, Երևանի կամուրջը Հրազդան գետի վրա, Աշտարակի և Օշականի կամուրջները Քասախ գետի վրա, Մատուրի կամուրջը Եղեգիս գետի վրա, Տաթևի վանքի ձիթհանը, Շատի վանքի ջրաղացը և շատ ուրիշներ:

Բազմաթիվ քաղաքներում, գյուղերում, շենքերում և այլ բնակավայրերում կառուցվում են եկեղեցական նոր շենքեր, որոնց թվում, որպես ճարտարապետական առավել աչքի ընկնող կոթողներ, նշանակալից են Երևանի Ս. Կաթողիկե, Ս. Զորավոր, Ս. Հովհաննես, Ս. Պողոս-Պետրոս եկեղեցիները և Գյոյմեշիտ մզկիթը, Կարրու Ս. Աստվածածին եկեղեցին, էջմիածնի քաղաքային Ս. Աստվածածին եկեղեցին, Լենինականի Ս. Աստվածածին եկեղեցին, Քանաքեռի Ս. Հակոբ եկեղեցին, Գառնի ավանի Ս. Աստվածածին եկեղեցին, Մեղրու Ս. Հովհաննես եկեղեցին, Կամոյի (Նոր-Բայազետի) Ս. Կարապետ եկեղեցին, Աստապատի եկեղեցին և այլն:

Մի շարք վանքերին կից բացվում են դպրոցներ, որոնց համար կառուցվում են հատուկ շենքեր:

Պատմական աղբյուրները նույնպես հիշատակում են տվյալ ժամանակաշրջանի եկեղեցաշինության մեծ թափի մասին: Ժամանակակից հայ պատմագիր Առաքել վարդապետ Դավրիժեցին, Խոսեով Հայրց Փրիլպոս կաթողիկոսի կյանքի և գործու-

նեոթյան մասին, այդ առթիվ տեղեկացնում է. «Եւ զդպրատունն՝ զոր ի Յոհաննավանք հաստատեցին, սա եւ կարի հաստատեաց, և ուսմամբ և առաքինութեամբ վարժեալ հասոյց ի կատարելութիւն. և յետ մամաց ինչ փոխեաց ի Յոհաննավանից և երբոր ի Սուրբ Էջմիածինն, և անդ կարգեաց զդպրոցն. որ և ամենեքեան ուսան և եղեն արք պիտանիք, վարդապետք, և եպիսկոպոսք, և քահանայք: Եւ վաղնչուց խափանեալ վանորայք լցան արեղայիք, և գիւղք,

լորր քարաշար բարձր պարիսպներով՝ և րեմն ամրոցապատերի ձևով:

Ինչպես վանքերի ու անապատների, այնպես էլ քաղաքների և գյուղերի նորակառույց եկեղեցական շէնքերի ճարտարապետական ոճը ընդհանուր է՝ եռանավ բազիլիկ ձևի, թաղակապ ծածկով, որոնք բոլորն էլ շարված են մաքուր տաշված քարերով կրաշաղախով մածուցված:

Այդ բոլորի շարքում իր պատկանելի տեղն է զբաղում Մուղնու վանքը՝ նա ալե-



ՄՈՒՂՆՈՒ ՎԱՆՔԻ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՐԱՎԱՐԵՎՄՈՒՏԳԻՐ

և քաղաքը՝ երիցամբք, և դեռ եւ որ յաւուր աճէ նորին սահմանադրութեամբն: Եւ սովաւ րազում կիսաւեր և խախտեալ եկեղեցիք նորոգեցան, և ի գիւղս և ի քաղաքս յուրով եկեղեցիք նոր շինեցան հրաշազան յօրինուածովք՝ պայծառ և փառաւոր ամենայն որպիսութեամբն¹:

Վերը թվարկված վանքերում և անապատներում, բացի եկեղեցական շէնքերից, կառուցվում են նաև բազմաթիվ բնակելի և այլ շէնքեր, շրջափակելով այդ բո-

լի ընդարձակ է, վեհաշուք՝ երկնասլաց գմբեթով:

Մուղնու վանքը գտնվում է այժմյան Այտարակի շրջանի Մուղնի գյուղում՝ մեկ և կես կիլոմետրաչափ Աշտարակից դեպի հյուսիս, Ապարանի վրայով դեպի Թրիլիսի տանող ճանապարհի վրա, Քասախ դետի անդնդախոր ձորի աջ հորանդրին: Վանքը բաղկացած է մեկ եկեղեցուց՝ Ս. Գեորգ զորավարի անունով, միաբանության բնակելի շէնքերից, որոնք շրջափակված են բարձր պարսպապատերով:

Թե ե՞րբ է հիմնադրվել Մուղնու վանքը, ուսույզ հայտնի չէ: Ավանդությունն առում է,

1. «Պատմութիւն» Առաքել վարդապետի Դաստիարակութիւն, Վաղարշապատ, 1884 թ., էջ 250:

որ հայոց ներսնս Մեծ հայրապետը Գևորգ զորավարի մարմինը Բյութանիայի նիկոմիդիա քաղաքից, որտեղ նա նահատակվել էր, բերում է Հայաստան և թաղում Հովհաննես վանքում: Հետագայում նրա նշխարքները փոխադրում են վանքից ոչ հեռու գտնվող կարբի և Մուղնի գյուղերը՝ իսկ ավելի ուշ Մուղնի գյուղին մոտիկ կառուցում են մի փոքր եկեղեցի՝ փայտաշեն գավթով, ուր և ամփոփում են Ս. Գևորգ զորավարի նշխարքները, միաժամանակ նշանակելով վանական միաբանություն: Հենց այդ ժամանակից էլ, հավանաբար, հիմք է դրվում Մուղնու վանքին: Թե և հոր է դա տեղի ունեցել, պարզ չէ. տեղում պահպանված նյութական մշակութի ռոտը մնացորդներ հիմք են տալիս ենթադրելու, թե այդ պետք է տեղի ունեցած լինի ԺԳ դարում:

Այնուհետև, ինչպես տեղեկացնում է Առաքել Դավրիժեցի պատմիչը, Փիլիպոսի կաթողիկոսության ժամանակ (1633—1655 թ. թ.), ի թիվս մի շարք մենաստանների ու եկեղեցիների, վերակառուցվում է նաև Մուղնու վանքը. «Սոցին նման շինեցաւ յաւուրս Տեառն Փիլիպպոսի կաթողիկոսի, և վանքն Սրբոյն Գէորգայ զօրավարին, որ է ի գիւղն Մուղնի, որոյ մերձ գոլով գիւղաքաղաքին կարբու, սպասաւորութեամբ և արդեամբք Մարտիրոս եպիսկոպոսին, որ էր ի նոյն Մուղնի գեղջէն եպիսկոպոս նոյն վանացն. որոյ եկեղեցին յոյժ փոքրիկ էր՝ և այլ ամենայն շինուածքն անպէտ և անդէպ. վասն որոյ այս Մարտիրոս եպիսկոպոս զեղեալ եկեղեցին, և զայլ ամենայն շինուածս միահաղոյն ի րաց երարձ, և զնոր պարիսպ պատեաց շուրջանակի յափաւոր, և եկեղեցի վայելույ ի մէջ պարսպին ի վերայ շորից սեանց կառուցեալ. և առ պարսպօքն տներ և խցեր, դամենայն շինեալ, աւարտեաց և եթող իւր յիշատակ րարի առաջի Աստուծոյ և մարդկան, և ինքն ևս անդէն թաղեցաւ»:

Մարտիրոս եպիսկոպոսի կառուցած եկեղեցին, որը շինված էր անտաշ քարերից, երկար գոյություն չի ունենում: Նրան հաջորդող վանքի առաջնորդ և նրա եղբորորդի Հովհաննես վարդապետը 1665 թվականին հիմնովի է քանդում է այն, ինչպես այդ մասին տեղեկացնում են Զաքարիա սարկավագ պատմիչը և հուշարձանի վրա փորագրված արձանագրությունը (առձանագրությունն ա) և կառուցում այժմյան եկեղեցին՝ իր սրահով, մակայն Հովհաննես վարդապետին չի հաջողվում ավարտել եկեղեցու կառուցումը՝ վրա հասնող մահվան հետևանքով. ուստի

հետագա շինարարությունը նա հանձնարարում է իր հաջորդ և եղբորորդի Դավիթ վարդապետին, որը շարունակում և ավարտում է այն 1669 թվականին:

Եկեղեցու վրա փորագրված արձանագրությունների համաձայն նրա կառուցմանը օժանդակում են՝

ա. Մուղնու վանքի առաջնորդ, վերը հիշատակած Դավիթ վարդապետի եղբայր Վարդանը, կառուցելով եկեղեցու ներսի հարավ-արևելյան մույթը և մի կամարը (առձանագրություն ր):

բ. Ագուլիսի հոգևոր թեմի առաջնորդ Պետրոս վարդապետը, իր թեմական համայնքի հետ միասին, կառուցելով եկեղեցու արևմտյան դուռը (առձանագրություն գ):

Եկեղեցին կառուցող ճարտարապետը եղել է Վասպուրականի Հիզան գյուղացի քարգործ Սահակը, որը, սակայն, դեռ եկեղեցու շինարարությունը չավարտած, մահանում է և թաղվում վանքի արևելյան կողմի գերեզմանոցում: Այս նրա փեսա Մուրադը շարունակում և ավարտում է եկեղեցին:

Վանքը բազմիցս ենթարկվել է վերանորոգումների: 1830 թվականին, վանքի առաջնորդ, թեմական Ստեփանոս արքեպիսկոպոսը վերանորոգում է տանիքը, իսկ 1839 թվականին՝ գմբեթի վեղարի ծայրը, որը քանդվել էր կայծակի հարվածից:

Մարտիրոս արքեպիսկոպոս Կեսարացին, որը նիքեմ կաթողիկոսի տեղապահ էր և որի տեսչության տակ էր գտնվում Մուղնու վանքը, վերանորոգել է տալիս վանքի պարիսպը և միաբանության բոլոր շենքերը:

Աշտարակեցի Սիմոն Սաժումյանը, Գևորգ Դ կաթողիկոսի կարգադրությամբ, դառնալով Մուղնու վանքի հոգաբարձու, 1668 թվականին վերանորոգել է տալիս եկեղեցու տանիքը (առձանագրություն դ):

Արել եպիսկոպոս Մխիթարյանը, դառնալով Մուղնու վանքի առաջնորդ, 1870 թվականին այնտեղ հիմնում է հատուկ դպրոց, որի համար կառուցում է առանձին շենքեր:


Մուղնու վանքը եպիսկոպոսանիստ կենտրոն է դառնում Մուղնեցի Մարտիրոս եպիսկոպոսի առաջնորդության ժամանակ, ընթացած վանքի առաջնորդ Ռսկան վարդապետը դեռ 1580 թվականին այնտեղ հաստատել էր իր եպիսկոպոսական Աթոռը՝ անպաշտոն ձևով:

Մուղնու վանքը իր զարգացման առավել բարձր աստիճանին է հասնում Գևորգ Դ-ի կաթողիկոսության շրջանում, դառնալով Արևելյան Հայաստանի նշանավոր կրոնական կենտրոններից մեկը: Նա միաժամանակ նշանակալից է եղել որպես խոշոր ուխտատեղի:

Բ. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

II. Դեռուզ Եկեղեցի. — Դմբեթավոր ընդարձակ սրահի ձևով մի կառուցվածք է, ուղղանկյուն երկարածից հատակագծով: Ներսում չորս մույթերը միանալով լայն կամարներով, իրենց վրա են կրում բարձր գմբեթը՝ կլոր թմբուկով և սրածայր վեղարով: Որը հիմքին փոխանցվում է առաջաստների միջոցով:

Բերի քառաստիճան քարյա սանդուղքներով Արսիդի երկու կողմերում կան ուղղանկյուն հատակագիծ և թաղակապ ծածկ ունեցող մեկական խորաններ, որոնց մուտքերը արևմտյան կողմից են և բացվում են եկեղեցու մեջ:



ՄՈՒՂՆՈՒ ՎԱՆԷԻ ՍՈՒՐԲ ԴԵՂՈՐԴ

ՆԻԵՂԵՑՈՒ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԴՈՒՐԸ

Միաժամանակ այդ մույթերի արտաքին կողմերից ձգվող համեմատաբար նեղ կամարների ծայրերը հենվում են նրանց դիմաց արևմտյան, հարավային և հյուսիսային պատերից, ինչպես և արևելյան արսիդի եզրերից ձգվող որմասյուղների վրա, այսպիսով կազմելով թաղակապ ծածկը՝ երկթեք տանիքով:

Արևելյան ծայրում ունի կիսակլոր մեծ արսիդ՝ բարձր, դուրս շեշտված բեմով, ուր բարձրանում են դուրս շեշտված մասի ծայ-

երկու խոշոր մուտքերը բացվում են արևմտյան և հարավային պատերի կենտրոնական մասերից, որոնք ունեն կամարակապ ճակատակալ մեծ քարեր և գեղեցիկաքանդակ շրջանակներ: Կամարակապ զազաթով և ներսից լայն բացվածքով քսան լուսամուտներից ութը բացվում են գմբեթի թմբուկի մեջ և երեքական հատ՝ յուրաքանչյուր պատի մեջ՝ համալսի դասավորված: Ներսում, պատերի մեջ կան տարբեր մեծությամբ բազմաթիվ խորշեր, բուրյն էլ կա-

մարակապ գազաթուփ, ոմանք շատ խորը՝ Լեկական նույնածն, բայց շատ մեծ խորշեր էլ կան արևմտյան պատի մեջ, արտաքուստ, դրան երկու կողմերում, գոյացած սրահի՝ եկեղեցուն կից շարված որմասյուններից։

Արևմտյան կողմում, կից ունի՝ Կատուկ սրահ-գանգակատուն, հինգ կամարակապ մեծ բացվածքներով՝ երեքը արևմտյան և մեկական հարավային ու հյուսիսային կողմերից։ Մածկը թաղակապ է. տանիքի կենտրոնում քարձրանում է սյունազարդ զանգակատունը՝ 12 գեղեցիկ սյունների վրա։

Հուշարձանը հիմնականում կառուցված է սև տուֆի մաքուր տաշված քարերով՝ կրաշաղախով մածուցված. օգտագործված է նաև կարմիր տուֆ, որից ամբողջապես կառուցված է զանգակատունը։ Սալահատակված է, տանիքը պատած է սալաքարերով։ Կանգուն և ամբողջական վիճակում է։

Վաճֆի միաբանության բնակելի և այլ շենքերը գտնվում են եկեղեցու արևելյան, հարավային և հյուսիսային կողմերում։ Հյուսիսային կողմի բնակելի շենքերի մի մասը շարված է նաև տուֆի՝ մաքուր տաշված քարերով, կրաշաղախով, ծածկը թաղակապ,

իսկ մյուսները շարված են մանր քարերով. ցեխով և փայտածածկ են։ Դրանք վրա գտնվում է Արեւ եպիսկոպոս Մխիթարյանի կողմից կառուցված դպրոցի շենքը՝ երկրորդ փարկի ձևով։

Սեղանատունը գտնվում էր եկեղեցու հարավային կողմում՝ մեծ սրահի ձևով. շարված էր կիսատաշ քարերով, կրաշաղախով, ներսում, պատերին կից ձգվող որմասյունները միացնող կամարները, որոնք մաքուր տաշված քարից էին, գտնվում էին թաղակապ ծածկը։ Այժմ ամբողջապես ավերակ վիճակում է։

Պարիսպը ձգվում է եկեղեցու և միաբանության շենքերի շուրջը՝ կից վերջիններին, խիստ բարձր է, շարված մանր քարերով, ցեխով։ Գլխավոր մուտքը հյուսիսային կողմից է. մի փոքր մուտք էլ բացվում է արևմտյան կողմից։

Ջրամբարը գտնվում է պարսպի ներսում՝ հյուսիս-արևմտյան անկյան մասում։ Փոքր է, մատուռի ձևով. շարված է մաքուր տաշված ամուր քարերով, կրաշաղախով, թաղակապ ծածկով։

Գ. ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ա. ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՊԱՏԻ ՎՐԱ, ԱՐՏԱՔՈՒՄՆ, ԴՌԱՆ ՀՅՈՒՄՆԱԿԱՆ ԿՅՂՄԻ

ՄԵՍ ԿՈՐՇԻ ՄԵՋ.

1. Շնորհօֆե Տեառն ամենակալի
2. Ի քվին ՌժժԳ: (1664) ի թագաւորեան Պարսից փոքր
3. Շահապազին եւ ի բռնակալութեան երկրիս Ապագգու-
4. լի խաւին եւ ի հայրապետութեան հայոց Տեառն Յակոբայ
5. սրբազան կաթողիկոսիս Սուրբ Էջմիածնի որո հրամանաւ եւ օծանդակութեամբ թղ-
6. թով, բանիւ եւ արդեամբ բեղմանաւ Բրիստոնէից տրիւֆ, բնդ նմին եւ
7. գամենայն ինչս եւ ըստացուած հոգոյս եւ մարմնոյս վատնեցի ես
8. Դովհաննէս վարդապետս Մաղենցի, օրդի Յակոբայ, եղբօր օրդի
9. Մաւրաթոս Եպիսկոպոսին, Բակնալ ի հիմանց Սուրբ Գէորգայ եկեղեցիս եւ շինեցի
10. զսա հանդերձ գաւթովս հրաշակեալ յօրինուածօք՝ ներհուստ եւ արուա-
րուստ կոփածո քարօք
11. ի քվին ՌժժԳ-ին (1669) ի թագաւորեան Պարսից Շահ Սուլէմանին եւ ի բռնակալութեան երկրիս Աէֆի-
12. Դուլի խաւին ամառեցի եւ ես բնդ նմա ամառեցայ ի կենցաղոյ, եւ փո-
13. խեցայ առ Տէրն ամենից, մնաց միայն գլխի սալքն եւ ներքին դռնամէն
14. եկեղեցոյս եւ գաւթիս, զորո կտակաւ յանձն աւաւի եղբօր օրդայ իմայ Դա-
15. փօ վարդապետին՝ փոխանորդ լինել ինձ եւ կաւարել զպակասութիւն եկեղեցոյս
16. եւ գաւթիս որք տեսանէք գլխաւս իմ Աստուած ողորմի ասացէք ինձ եւ ծնողաց իմաց,
17. Տէր Աստուածն ձեզ ողորմեսցի՝ ամէն։ Ալէքսան Բարտուղար հայոց յի-
շեցէք ի Քրիստոս։

Դ. ԿԵՆՏՐԱԼ ԿԱՐԳԱՎԱՐՈՒՄ, ՀԱՐԱՎ-ԱՐԽԱՎԱՐՈՒՄ, ՄՈՒՏՔԻ ԱՐԽԱՎԱՐՈՒՄ, ԿՈՂՄԻ ՎՐԱ

1. Տիշեցե՛ք ի Քրիստոս զայսոն
2. Վարդանն որ է եղբորդդին
3. Յովհաննէս վարդապետի՝ շինողի
4. սուրբ եկեղեցւոյս եւ գաւթին եւ
5. եղբայր Դաիթ վարդապետին՝ փոխնոր-
6. դի նորին որ ի հալալ ընչից իւրոց ետ
7. գլխարնն շինութեան այս սեանս եւ :Ա:
8. կամարին յիշատակ հոգոյ իւրոյ
9. եւ ծնողացն՝ հօրն Կարապետին
10. եւ մօրն Թուրյանդին, եղբարցն՝
11. Զաֆարիային եւ Մարգարէին եւ կե-
12. նակցաց նոցին, զարմից եւ զաւակաց,
13. կենդանեաց եւ հանգուցելոց: Որք ողոր-
14. մի ասէ՛ք՝ Տէր Աստուած ձեզ ողորմեսցի՝ ամէն:
15. Գրեցաւ ի րվին :Ռ:Ճ:Ժ:Թ: (1870) ձեռամբ Լեւոնանին:

Գ. ԿԵՆՏՐԱԼ ԱՐԽԱՎԱՐՈՒՄ, ՄՈՒՏՔԻ ՀԱՎԱՏԵԱԼ ՔԱՐԻ ՎՐԱ, ԱՐՏԱՔՈՒՄՏ.

1. Շնորհօքն Աստուծոյ ևս Պետրոս վարդապետ որ յԱզովեաց, անձամբ եւ ժո-
2. դովրդեամբ իմով յօժանգակ եղէ շինութեան սուրբ եկեղեցւոյս
3. եւ շինեցի զդռոնս Սրբոյ Գէորգայ զօրավարի՝ երկնաւատակ կամարօք
4. եւ կանգնեցի ի վերայ զսուրբ խաչ մի՝ ի բարեխօսութիւն հօրեղբօրն
5. իմոյ Տեառն եաշատրոյ արհեստիւնպոսին՝ Գոգթան զաւառի և թմբուսաւ
6. վարդապետի. յիշեցլք ի Քրիստոս, ամէն: ի բօնին Ռ:Ճ:Ժ:Ռ (1869):

Դ. ԿԵՆՏՐԱԼ ԱՐԽԱՎԱՐՈՒՄ, ՄՈՒՏՔԻ ՀԱՐԱՎԱՐՈՒՄ, ԿՈՂՄԻ ՈՐՄԱՍՅԱՆ ԿԱՐԱՐԻ ԾԱՅՐԻՆ, ՄԱՂԻ ՆԵՐՍՈՒՄ.

1. Ի 1868 ամ հրամանաւ արժանընտիր
2. կաթողիկոսի Ամենայն Հայոց Տեա-
3. ռն Գէորգայ Գ-ի կարգեցալ հո-
4. զարարծու Աշտարակեցի Սիմէօն
5. Ստեփանեանց Սուրբ Գէորգայ վա-
6. ճիցս եւ արդեամբ նորին Վեհափա-
7. ռութեան նորոգեցի զխախ-
8. տեալ տանիսն տանաւորիս:

Ե. ԿԵՆՏՐԱԼ ԱՐԽԱՎԱՐՈՒՄ, ՔԱՏԻ ՎՐԱ, ԱՐՏԱՔՈՒՄՏ, ՄՈՒՏՔԻ ՀԱՐԱՎԱՐՈՒՄ, ԿՈՂՄԻ ԿՈՐԷՆԻ ՄԵՋ.

1. Ես Սիմէօն Ստեփանեանց Աշտարակեցի 1868
2. ամի հրամանաւ արժանընտիր Հայրապետին Ներսէսի
3. Հիւզեւորդի կարգեցա տեսուչ վանից Սուրբ
4. Գէորգայ զօրպիսի պաշտօն զկնի մահուան
5. յիշեալ Հայրապետի շարունակեցի հրամանաւ
6. Սիւնդի: 1868 ամն:





Ա. Ն. ՇԱՀԻՆՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՋՔԱՐԵՐԻ ԱՐՎԵՍՏԸ¹

ԽԱՋՔԱՐԵՐԻ ԱՐՎԵՍՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԺԱ—ԺԴ ԴԱՐԵՐՈՒՄ

Խաչքարային քանդակագործական արվեստը իր զարգացման գագաթնակետին է հասնում ԺԱ—ԺԴ դարերում²։

Այս ժամանակաշրջանում կառուցվում են րազմաթիվ նոր վանքեր, եկեղեցիներ, կամուրջներ, հյուրատներ, քարվանատներ և կերտվում հազարավոր գեղաքանդակ խաչքարեր։

Հիշյալ ժամանակամիջոցում հանդես է գալիս խաչքարեր կերտող վարպետների մի մեծ խումբ։ Այդ վարպետները շրջում են քաղաքից քաղաք, գյուղից գյուղ, քանդակում ու կերտում արվեստի և ձևի տեսակետից ոճավորված գեղեցիկ խաչքարեր, որոնց վրա հաճախ իրենց անուններն են դրոշմել վարպետները մերթ որպես «կազմող» կամ «գծող», «յօրինող», «քարգործ» և այլ կոչումներով։

Այժմ կանգ առնենք առավել տիպական և արվեստի տեսակետից յուրահատուկ մի շարք խաչքարերի վրա։

ԺԱ դարի խաչքարերից կարելի է հիշատակել հետևյալները.

1. Ի թիվս այլ խաչքարերի, Հաղբատի վանքի գավթի ներսում գտնվում է Ատոմ վերակացուի կանգնեցրած քաղալտե 1004 թվա-

կիր խաչքարը՝ հետևյալ արձանագրությամբ, որը փորագրված է խաչքարի եզերքին.

«ՆԽԳ քուին, ի հայրապետութեան Սիմէոնի, Ես Ատոմ վերակացու եկեղեցոյս կանգնեցի զխաչս, ինձ աղաթս արաբէք»³⁷։

Խաչի թևերի վերևի անկյուններում քանդակված են մեկական աղավիններ, իսկ խաչի թևերի ներքևից՝ տերևաքանդակներ դեմ ու դեմ։ Նույն այս ձևի մի խաչքար ևս կա գավթում՝ 1023 թվագրությամբ։

2. Սանահին գյուղի արևելյան ծայրին է գտնվում «Թեփակիր» կոչվող խաչքարը՝ 1011 թվակիր հետևյալ արձանագրությամբ.

«ՆԿ քականիս հայոց եւ ի թագաւորութեան Դաւթի եւ յառաջնորդութեն հաւր էսեայ, ես Արեթնագով կանգնեցի զխաչս զայս, զի սա իմեմ է բարձող բանին Այ, բարէխոսութիւն ինձ եւ ամենայն հաւատացելոց։ Ամենեւ Աձ, ամեն»³⁸ (նկար 29)։

Իր զարդաքանդակներով այս խաչքարը որոշ չափով հիշեցնում է Թալինի կլոր խաչքարը։

3. Հետաքրքիր շինարարական բովանդակությամբ արձանագրություներ ունի Հաղբատի վանքի 1086 թվակիր «Թեփակիր խաչ» կոչվող խաչքարը.

«Ի քուին ՇԼԵ Ես Տէր Սարգիս առաջնորդ սուր ուխտիս Հաղբատայ, շինեցի զբաղացս եւ արաբի ազատադաց. արկի և զայ-

¹ Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1980 թվականի № 5 և 6-ից և 2-ից։

³⁸ Ժարտարապետական և քանդակագործական արվեստը ԺԴ դարում որոշ զարգացում է ապրում Սյունիքում, Օրբելյանների տիրապետության ժամանակ, շնորհիվ մոնղոլների հետ նրանց վարած ճկուն քաղաքականության։

³⁷ ՏՃ՝ս նաև Կ. Կոստանյան, «Վիժակյան տարեգիր», էջ 12։

³⁸ ՏՃ՝ս Կ. Ղաֆադարյան, «Սանահինի վանքը և նրա արձանագրությունները», Երևան, 1957 թ., էջ 181. Զտվյալները այն վերագրել է 951 թվականին. Նույնը և Կ. Կոստանյան, «Վիժակյան տարեգիր», էջ 8.

գիս, տնկեցի եւ զգրախոս զանազան մեղաբերաւ ի փառս սրբոյ Նշանին, եւ ի վայելումն տանս Հաղթատայ: Աւղ, եթէ ոք զսա ի Հաղթատայ ճանէ կամ աւերման պատճառ լինի, ի մեծաց կամ ի փոքունց, կամ առաջնորդ՝ ուր սմա շինութիւնն չջանայ, այնպիսիքն որոշեալ լիցին յԱռտուծոյ եւ ընդ սրդուոյն կորստեան. եցին ի խաւարն արտաքին եւ յօրդն անբունս³⁹:

4. Իրենց քանդակման ձևերով եւ շափերով շատ հետաքրքիր խաչքարեր կան Յախագարում (Եղեգնաձորի շրջան), որոնցից ամենաարժեքավորներն են վանքի արեւելյան խմբի 1041 թվականին Վարդիկ վարդապետի կառուցած Ս. Կաթողիկէ կոչվող սագաշեն եկեղեցու ճակատին դրված 2 խոշոր եւ դեղաքանդակ Ս. Երրորդության խաչքարերը (նկար 30): Այս երկու խաչքարերն էլ իրենց քանդակների նրբությամբ, մշակման ոճով եւ ֆունկցիոնալ նշանակությամբ գերազանցում են իրենց նախորդներին:

Քանդակման այս ոճը հատուկ է նաեւ մեկ հայտնի թալինի կլոր խաչքարին, նրանցում հանդես եկող քանդակները զույգ պարանահյուս գծերի միացություն են կազմում. նուրբ եւ ճաշակով արված: Մշակման այս ձևը հիշեցնում է մետաղի քանդակման, մշակման յուրահատկությունը եւ տեխնիկան: Երկու խաչքարերն էլ ծածկված են բուսական եւ երկրաչափական ճոխ եւ նուրբ քանդակներով: Ամենայն իրավամբ սույն խաչքարերը ԺԱ դարի մեր լավագույն խաչքարերից կարելի է համարել, եթե ոչ ամենագեղեցիկ նմուշները:

Դժբախտաբար այս երկու խաչքարերը չունեն արձանագրություններ, սակայն հավանաբար եկեղեցու շինության ժամանակին են պատկանում: Եկեղեցու արեւմտյան ճակատին դրված երկար պատվանդանը, որը փաստորեն ծառայում է նշված խաչքարերին, ունի արձանագրություն, եւ որը թեեւ կաթողիկէի շինությանն է վերաբերում, սակայն եւ այնպես հուշում է մեզ հետաքրքրող խաչքարերի քանդակման ժամանակը: Ամենայն հավանականությամբ արձանագրության սկանզնեցի զնշան Սուրբ Երրորդությանը վերաբերում է նշված խաչքարերին: Պատվանդանի արձանագրության բովանդակությունը հետեւյալն է.

«Ես ճայր Վարդիկ, առաջնորդ սուրբ ուխտիս Յախագ-բարիս, շինեցի գլուսք Կաթողիկէս եւ կանգնեցի զճշան Աստուծոցորդութեան վասն իմ հոգւոյս փրկութեան, թերեւս յորոմութիւն գտից ի յապագային, ի



Նկար 29

տիեզերական հրապարակին, ուր բանքն սպանին եւ գործքն թագաւորեն: Աւղ, ով սրբազարդ քանդակայն, ուր զսուրբ պատարագն համարձակ մատուցանէ, զիս յաղաթս յիշեցէ առաջի զենոյն Քրիստոսի: Ամէն շաբաթ ար զայն ինձ առնէ այն քանդակայն, որ ի սմա պատարագ մատուցանէ⁴⁰:

Կաթողիկէ եկեղեցու Հյուսիս-արեւմտյան անկյան խաչքարը քիչ ավելի փոքր է հարավ-արեւմտյան անկյունում գտնվող խաչքարից (նկար 30):


Հետաքրքիր է այստեղ նշել, որ հիշված խաչքարերը հանդես են գալիս մի նոր ֆունկցիոնալ նշանակությամբ, երկուսը միասին կազմելով Կաթողիկէ եկեղեցու ճակատին ճարտարապետական մի գեղեցիկ անսամբլ: Ինչպես տեսնում ենք՝ սույն խաչքարերը կանգնեցված են եկեղեցու արեւմտյան ճակատին կառուցված հատուկ պատվանդանի վրա, որոնց միջև կա բարձր ու լայն մի խորշ զույգ կամարաձև ծածկով: Փոքր խաչքարի խաչի թևերի դատարկ տարածության

40 Հ. Ղ. Ալիշան, «Ախական», էջ 154. տե՛ս նաեւ Կ. Կոստանյան, «Վիճակն ապրեցիր», էջ 28 եւ Հոսարձանների պաշտպանության կոմիտեի արխիվը:

39 Արքիպ Էուզարձանների պաշտպանության կոմիտեի:

մեջ քանդակված են խաղողի մեկական գեղեցիկ ողկույզներ՝ իրենց տերևներով հանդերձ։ Նախորդ խաչքարերից ոչ մեկի վրա նման ձևով նուրբ քանդակված խաղողի ողկույզներ չկային։ Նախկին խաչքարերն ար-


րերի խաչերն ևս գեղեցիկ կերպով քանդակված են ի տարբերություն նախկին խաչքարերի։ Փոքր խաչքարի շրջանակը իր հերթին ծածկված է քառակուսի շրջանակների մեջ առնված նուրբ քանդակներով, որոնք



Նկար 30

տահալտում էին խաղողի ողկույզի գաղափարը, իսկ այժմ արդեն ԺԱ դարում այդ քանդակներն այնքան են լավ մշակվել, որ գրեթե ոճավորվում են։ Բացի այդ, խաչքա-

հետագայում աստղի ձև են ընդունում։ Այստեղ արդեն խաչաքանդակի ներքևի կլոր վարդյակը ևս քիչ խոշորացվելով գեղեցկապես քանդակված է, մի հրեույթ, որը համարյա



Նկար 31

պարտադիր է դառնում հետագա դարերում կանգնեցվող խաչքարերի համար։

Մեծ խաչքարը ևս գրեթե նույնպիսի նուրբ քանդակներով է զարդարված, միայն թե այս խաչքարը խաղողաքանդակների փոխարեն ունի այլ տերևանման քանդակներ։ Ամենայն հավանականությամբ այս երկու խաչքարերն էլ նույն վարպետի և նույն ժամանակի գործ են և ծառայել են որպես կաթողիկե եկեղեցու զխավոր ճակատ։

Ցախացքարի այս երկու խաչքարերը հանդիսանում են ԺԲ—ԺԳ դարերում վերջնականապես ձևավորված խաչքարերի նախատիպարը՝ իրենց հիմնական քանդակային և ոճային մոտիվներով։ Այստեղ հետա-

քերքիր է և այն, որ այս խաչքարերի վրա իշխում են ճոխ քանդակները, իրենց բուսական և երկրաչափական մոտիվներով։



ԺԲ դարը հայկական քաչքարերի զարգացման ու ծաղկման նոր շրջանն է։ Այդ ծաղկման և բարգավաճման նոր շրջանը նշանավորվում է խաչքարային քանդակների ու զարդամոտիվների գեղեցիկ, նոր ոճավորումներով։ Միաժամանակ, որանից հետո խաչքարերը, գրեթե միշտ, որպես կանոն, հանգչում են նույնպիսի ոճավորված և քանդակազարդ պատվանդանների վրա։ Դրա լավագույն օրինակներից է Սանահնի վանքի առաջնորդ Գրիգոր Վարդապետ Տուտեորդու կանգնեցրած 1184 թվականի խաչքարը (նկար 31 և 32)։

ԺԲ դարի մի քանի խաչքարերի նմուշներից են հետևյալները.

1. Բանանցում գտնվում է 1155 թվականով մի խաչքար, որը կերտել է Ատոմը.



Նկար 32


«...որք յաղաթս յիշէի եւ գկտով, որ քործող էր խաշիս»⁴¹,

Այս խաշարը կանգնեցրել է Մարգարիտը՝ «դուստր Ուխտիկայն»:

2. 1184 թվականին «Սարգիս կազմող»-ը քանդակում է Աշտարակում (Կարմրավոր հուշարձանի բակում) մի խաշար, որի պատվանդանն է միայն պահպանվել հետևյալ արձանագրությամբ.

Ի Թ. ՈՂԳ կանկնեցաւ սը նշանս ի քարե-
թաւսութի Թագունեա մաւ իմո... (Այստեղ
կա կապգիր անվերծանելի մի անուն): ՈՐԲ

«Յամի յորում եռնի կատարումն արային
վրաց Գրորգէ, եւ Գրիգոր վարդապետ որդի
Տուտէ եաշեմացաւ, բնակեալ ընդ հովանեաւ
սրբո Ածածնիս կանգնեցի գխաշս ի վերա
հանգստարանի իմո ակն ունելով ելից ի
կենցաղոյս: Եւ առդ անկեալ ղնիմ առ ոտս
քո նշանդ Այ եւ աղաչեմ անբարբառ շըր-
քամբ գի ի մեծի ներման քո լիցիս բա-
րեխաւս անարժան ծառայիս Քի: Եւ որք
երկրպագէի յիշեցէի ի Քս Յս: Կանգնեցաւ ի
հայրութեանն Յովնաննիսի յորում ամի հո-



Նկար 33

երկրպագէի յիշեցիքի: Քս ողորմի Սարգ-
սի կազմողին] (Նկար 33):

3. ԺԹ դարի գեղեցկապես քանդակված և
ոճավորված մեր լավագույն խաշարերից
մեկը հանդիսանում է Սանահնի վանքի ա-
ռաշնորդ Գրիգոր Տուսեորդու կանգնեցրած
խաշարը, որը քանդակել է Մխիթար կազ-
մողը Արձանագրութունը, որը գտնվում է
խաշարի ետևում՝ հետևյալն է.

⁴¹ «Ազգագրական հանգես», Ե գիրք, Թիֆլիս, 1889 թ., էջ 208—210.— Տե՛ս նաև Կ, Կոստանյան, «Վիժակոս տարեգիր», էջ 20—21:

րոգեցաւ Կարթողիկէս սը: Ի քու: ՈՂԳ:
ԶՄխիթար կազմիչ յիշեցիքի Քս: Աւետիս»⁴²,
Այս խաշարը կանգնեցված է շքեղ ոճա-
վորված, բազմաստիճան քանդակազարդ

⁴² Տե՛ս Կ, Ղաֆադարյան, «Սանահնի վանքը և
նրա արձանագրութունները», էջ 178—180: Արձա-
նագրութան վերջում գտնվող ծածկագիրը հեղինակի
կարգացել և վերլուծել է «Աւետիս»- Տե՛ս նաև Ջա-
լալյանց, հատ. Ա, էջ 27, «Ազգագրական հանգես»,
գիրք Ե—Ը, էջ 281, «Վիժակոս տարեգիր», էջ 25:
Վերջիններին մոտ արձանագրութունը սխալներով է
կարդացված, իսկ թվականն էլ ՈՂԳ՝ փոխառել ՈՂԳ-ի:



Նկար 34

պատվանդանի վրա, որը խաչքարին տալիս է վեհ տեսք։ Այն զարդարված է մեծ մասամբ երկրաչափական և բուսական նուրբ քանդակներով։ Քանդակված է ոչ միայն խաչքարի ամբողջ ճակատը, այլև խաչի թեւերի արանքում գտնվող, քիչ դեպի ներսի ողջ միջոցը։ Խաչքարի բուսական քանդակների մի շարք մոտիվներ այն աստիճան են ոճավորված, որ նրանցից գրեթե ոչինչ չի մնացել բնական տեսքով։

ԺՌ դարի քանդակագործական և կառուցողական արվեստի տեսակետից Տուտեորդու այս խաչքարը մեծ արժեք է ներկայացնում։

4. Այս դարի վերջի շրջանի լավագույն խաչքարերից է Աշտարակի շրջանի Կոյ գյուղի ճանապարհին, տուֆ քարից կերտված և ճարտարապետական նոր ձևով ոճավորված շքեղ խաչքար-կոթողը (Նկար 34)։ Արձանագրության համաձայն այն կառուցել է Պետրոս ազանատեսը վարդապետը, որը 1175 թվականին հեղու աչքով տեսնում է իր Հայրենիքի ազատագրությունը։ Նույն տարին արևը խավարում է և ուժեղ երկրաշարժ է լինում։ Դրանից որոշ

ժամանակ անց Զաքարե ամիրսպասայարը, չախչախելով սելջուկ էմիրություններին, ազատագրում է երկիրը ժՌ դարի 90-ական թվականներին, որից հետո էլ Պետրոս ազանատեսը վարդապետը կառուցել է տալիս վերոհիշյալ խաչքարը՝ Զաքարե իշխանի և նրա որդի Շահնշահի արեշատության համար։ Ինքնըստինքյան հասկանալի է, որ այս խաչքարը կանգնեցվել է 1196 թվականին Ամրեղի, և նույն տարիներին Արագածոտն գավառի (Աշտարակ, Թալիշ և այլն) ազատագրությունից անմիջապես հետո, այսինքն 1196—1200 թվականների ընթացքում, որպես հաղթանակի կոթող-խաչքար։

Հիշյալ խաչքարը առնված է հատուկ պատրաստված քարե շրջանակի մեջ, նուրբ արված քանդակներով և կազմում է մի ամբողջություն՝ իր ձևավորված պատվանդանի հետ մեկտեղ։

Քանդակների մեջ այստեղ հետաքրքիրն այն է, որ բուսական և երկրաչափական շքեղ քանդակների կողքին հանդես է գալիս նաև կենդանական (հավանաբար աղավաղների) քանդակը, որոնք տեղադրված են խաչի հորիզոնական թևերի վերևի 2 անկյուններում։



Նկար 35

5. Այս նույն ժամանակներում, 1196 թվականին, Զաքարյան իշխանների Ամբերդ անառիկ ամրոցի ազատագրության առթիվ, ինքը՝ Զաքարե ամիրսպասալար իշխանը, 1200 թվականին, Ամբերդում կանգնեցնում է հաղթանակի մի խաչքար հետևյալ արձանագրությամբ՝

«Ի Ոհթ քուականութեանս, ես Զաքարե ամիրսպասալար Հայոց եւ Վրաց, որդի մեծի Սաւգաի, առի զանառիկ ամրոցս ԳԱՆԻՐԴՅԱՅ յաղախեցայ իմ ուղայն Հաֆառու, որ առայ ի սմա, ի կորուստ Բրիտանից եւ յաւեր եկեղեցեաց եւ ետու առնել զնց»⁴³ (նկար 35):

Խաչքարը զարդարված է բուսական և երկրաչափական քանդակներով, ընդ որում խաչքարի եզերքները զարդարված են պարանահյուս քանդակներով: Խաչի հորիզոնական թևերի վերևի արանքում քանդակված է մեկական նուռ: Ի դեպ, պետք է ասել, որ Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանը խաչքարերի վրա նույն քանդակային մոտիվը վերագրում է ԺԳ դարին, մինչդեռ նույն զարդագրությունը խաչքարերի վրա, ինչպես նախորդ էջերում տեսանք, հանդես է գալիս դեռևս Ժ դարից Ակունքի, Մուղդիի և Զոդի հնագույն խաչքարերի օրինակով: Նույն քանդակի խաչքարային արվեստի մեջ հանդես է գալիս Ժ դարից, խաղողի քանդակներին ժամանակակից:

Զաքարե Ամիրսպասալար իշխանի հաղթանակի առթիվ կանգնեցրած հիշյալ խաչքարը միակը չէր իր տեսակի մեջ: Հնարավոր է, որ նման ֆունկցիոնալ նշանակությամբ այլ խաչքար-կոթողներ կանգնեցված լինեն այլուր՝ տարբեր դարերին վերաբերող:



Ոչ այդքան իրենց արվեստով, որքան իրենց բովանդակությամբ, ԺԱ—ԺԲ դարերին վերաբերող հետաքրքիր խաչքարերի ենք հանդիպում հաշենում և Լեռնային Ղարաբաղի այլ վայրերում:

1909 թվականին ակադեմիկոս Հ. Ա. Օրբելին, լինելով այս վայրերում, ուսումնասիրել է կենցաղային տեսակետից հետաքրքիր մի տաճարակից ավերի խաչքարեր⁴⁴,

⁴³ ՏԷՊՆԱՆ Գ. ԽՐԵԿՅԱՆՈՎՈՍ Հովսեփյան, «Եռագրական կամ Պողոսյան հայոց պատմություն մեջ», Ա մաս, Վաղարշապատ, 1928 թ., էջ 8—9:

⁴⁴ Հ. Ա. Օրբելի, «Եռանի խաչքարերի կենցաղային քանդակները ԺԱ—ԺԳ դ. դ.», «Ռուսական կայսերական ընկերության արևելյան բաժանմունքի Տեղեկագիր», հատ. ԻԲ, Պետրոգրադ, 1905 թ., էջ 327 (սուրբեք):

կենցաղային մոտիվներով խաչքարեր առաջին անգամ հանդես են գալիս հաշենում, որտեղ զարգացել է մարդկային ունեցվածքի քանդակագործությունը: Թեև քանդակագործական արվեստի տեսակետից այստեղի խաչքարերը համեմատաբար թույլ և կոպիտ են կատարված, բայց իրենց բովանդակությամբ արժեքավոր նյութ են տալիս՝ վաղ մոնղոլական ժամանակաշրջանի հայ զինվորների զենքն ու զրահը ուսումնասիրելու տեսակետից⁴⁵:

Հավապտուկի ավերակներում, բերդի գլխին, եկեղեցուց դեպի արևելք գտնվում է մի մեծ խաչքար հետևյալ արձանագրությամբ.

«ՈՒԳ: Ես Հասան որդի Խանրակալ կանգնեցի զխաչնս: Ով երկրպագե՛լ ի՞նչե՛նք ի Բրիտանոս»⁴⁶:

Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանը հղել է այստեղ այն ժամանակ, երբ այս խաչքարը կիսով լավ թաղված է եղել հողի մեջ, որի համար էլ լի կարողացել կարողալ արձանագրությունը⁴⁷: Այս խաչքարի վրա պատկերված է մորուսավոր մի ձիավոր, գլխին սաղավարտ, երկար նիզակը աչին, իսկ ձախով բռնել է ձիու սանձը: Զիավորի ձախ կողքից կախված է լայն ու կարճ սուրը: Զիու պարանոցը աղեղնաձև է, գլուխը քաշ ձգած, պոչը հանգույց արած: Զիավորի առաջ նկատվում է աշտարակ, որի ետևից երևում է մի մարդու գլուխ:

Հավապտուկի ավերակներում նման քանդակներ ունեցող այլ խաչքարեր ևս կան: Գանձասարի վանքում գտնվող 1181 թվականի մի ուրիշ խաչքարի վրա քանդակված է մի կին, ձեռքին երեխան: Այս խաչքարն ունի չորս տողանի հետևյալ արձանագրությունը.

«Ես Հասան որդի Վախտանգա կանգնեցի զխաչս ի տապանի դառե իմո Խաթունին եւ մաւ Թագունո դստեւ թագվորին Բաղաց»⁴⁸:

Խաչքարի վերևում գրված է՝ «ՈՒ ԹԻՈՆ ԷՐ»: Այս և մյուս բոլոր խաչքարերի վրա համարյա բոլոր ձիավորները դիմված են երկար սրերով, նետերով ու աղեղներով: Զիավորների պատկերման մեջ ներկայացված են հարձակողական բոլոր զենքերը, իսկ պաշտպանողականներից՝ վահանը:

⁴⁵ Նույն տեղում, էջ 328:

⁴⁶ Նույն տեղում, էջ 329:

⁴⁷ Գ. ԽՐԵԿՅԱՆՈՎՈՍ Հովսեփյան, «Եռագրական կամ Պողոսյան», Ա մաս, էջ 38:

⁴⁸ Հ. Ա. Օրբելի, հիշված աշխատությունը, էջ 329:

(Շառունակելի)



Ս Փ Յ Ո Ւ Ռ Ք Ո Ւ Մ

ԲԵԶՄԵՎԵՍՏԵԿ ՌԻՍՈՒՑԻՉԸ

Հովիսին լրանում է սփյուռքահայ բազմավաստակ ուսուցիչ, անխոնջ կրթական մշակ և դաստիարակ Գրիգոր Պողարյանի մանկավարժական և հասարակական գործունեության 40-ամյակը։


Վաստակավոր և կրթանվեր ուսուցչի և մտավորականի հորելյանը նշում են նրա բազմաթիվ աշակերտները, գրչի ու գաղափարի ընկերները, ինչպես նաև հայ մամուլը՝ հարգանքով և երախտագիտությամբ։

Գրիգոր Պողարյանը սրտառու է գերազանց տիպարն է հայ ուսուցչի և դաստիարակի, և նա երկար կապրի իր ուսանողների հիշողության մեջ որպես այդպիսին։

Գրիգոր Պողարյանի մոտ ուսուցչությունը տարերք է։ Նա ծնվել է որպես ուսուցիչ, ինչպես մի ուրիշը ծնվում է որպես բանաստեղծ կամ արվեստագետ։ Ըվ պատահական չէր, որ նա իր ամբողջ գիտակցական կյանքը, անսպառ եռանդը, բազմակողմանի և խոր գիտելիքները, առանց մնացորդի, նվիրել է Սփյուռքում և հատկապես Միլիայում և Լիբանանում հասակ նետող հայ նոր սերունդի հայադրոշմ դաստիարակության գործին։

Հազարների է հասնում թիվը նրա աշակերտների, որոնք մեր մեծասքանչ լեզվի քաղցրությունն ու ճաշակը, հայ մշակույթի և դպրության սերը, հայրենասիրության իրավ զգացմունքը, Հայ Եկեղեցու և մեր հոգևոր արժեքների նկատմամբ պաշտամունքն ու նվիրվածությունը ստացել են Գրիգոր Պողարյանից։

Այսօր, նրա շնչի ու նայվածքի տակ կրթված, դաստիարակված շատ երիտասարդներ, Սփյուռքում պատասխանատու և ղեկավար դիրքեր են գրավել հայ կյանքում, որպես ուսուցիչ, գրող, արվեստագետ, հասարակական գործիչ և հոգևորական։



Գրիգոր Պողարյանը քսաներորդ դարի երկրորդ կեսի հայ մանկավարժության և դպրոցավարության պատմության մեջ իր ուրույն տեղն է գրավում մեր մեծանուն այլ մանկավարժների կողքին։

Բազմավաստակ ուսուցիչ Գրիգոր Պողարյանը ծնվել է 1897 թվականին Այնթապում, ուր և ստացել է իր նախնական կրթությունը Վարդանյան կրթարանում, ապա իր ուսումը կատարելագործել Կիլիկյան ճեմարանում, ընդմիջտ իր կյանքն ու գործունեությունը կապելով մանկավարժական աշխատանքների հետ։ Երկար տարիներ նա Լիբանանում և Եգիպտոսում վարել է Ազգային Միության և Հայկական որրանոցի քարտու-

դար-ուսուցչի պաշտոնը, մինչև 1926 թվականը, երբ հրավիրվել է Հայկապ, որպես Այնթապի կրթական կրթասիրաց երկսեռ վարժարանների ուսուցիչ և ապա տեսուչ, պաշտոն՝ որը վարել է նա ձեռնհասորեն և փայլուն արժանավորությամբ, մոտ 25 տարի, Գրիգոր Պողարյանը միաժամանակ գործուն մասնակցություն է ունեցել Հայկապի ազգային-եկեղեցական կյանքում՝ որպես Ազգային վարչության, Ուսումնական խորհրդի, Ազգային գավառական ժողովի, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության կրթական հանձնաժողովի, Հայկապահայ ուսուցչական միության և այլ ուսանողական, բարեսիրական, հայրենասիրական, հայրենակցական միությունների անդամ, նախագահ, կազմակերպիչ և ղասախոս:

Գրիգոր Պողարյանը ուսուցչական, մանկավարժական և հասարակական գործունեության հետ միաժամանակ զբաղվել է նաև գրական-բանասիրական աշխատանք-

ներով: Ուսումնասիրել է Այնթապի գրագրերը և Այնթապի կորած գավառաբարձու: Միաժամանակ նա աշխատակցել է բազմաթիվ առաջադիմական թերթերի՝ կուռ և բովանդակալից հոգվածներով, ուսումնասիրություններով և ակնարկներով:

Միշտ անթառամ կմնա աշակերտների և րախտագետ սրտերում բազմավաստակ ուսուցչի, դաստիարակ-մանկավարժի և հասարակական գործչի, ինչպես նաև ազնիվ ու հայրենասեր հայ մարդու՝ հոբելյար Գրիգոր Պողարյանի պայծառ կերպարը:

Գրիգոր Պողարյանի մանկավարժական, կրթական, հասարակական գործունեության 40-ամյակի ուրախ առիթով, նրա մոտիկ և հեռավոր բազմաթիվ աշակերտների սրտագին մաղթանքն է, որ սիրելի հոբելյարը երկա՛ր, դեռ երկա՛ր ապրի, շարունակելու իր շնորհակալ գործունեությունը հոգուտ հայ դպրոցի, մեր մշակույթի և մեր ժողովրդի:



ՃԵՄԱՐԻՏ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

II

Բ

Մարդկային հոգիին բնատուր հարստութիւնը կազմող ալլազան սերերու մեջ մեկը կա, որ ամենեւնի զորավորն է և նվիրականը, մայրական սերին ալ ավելի: Հայրենի հողին սերն է անիկա, հայրենասիրութիւնը:

Արդարեւ, իրական հայրենասերը՝ ճշմարտային պահերու մեջ, գերագույն վտանգի ժամերուն, կմոռնա հայր, մայր, կին, զավակ, ինչք, հարստութիւն, կմոռնա ինքզինքն ալ, խոյանալու համար թշնամիին վրա, որ կփորձէ ոտնակոխ ընել սրբազան հողը Հայրենիքին և դարերու վաստակով անոր վրա կանգնած ազգային սրբութիւններ:

Հայրենասիրութեան այդ զգացումը, որ ո՛չ իսկ ձեւավորված է մանուկ հասակի մեջ, պատանութեան հետ կծի և իր պոռթկումին կհասնի երիտասարդութեան մեջ:

Երիտասարդ զինվորներ ի՞նչ հանդգնութիւններ հանձն կառնեն, մահվան հետ գիտակցորեն ճակատ ընած, ի սեր Հայրենիքին:

Վերջին պատերազմի վեց տարվան պատմութիւնը թղթատող մը պիտի գտնէ հազարավոր տիպարները մահը անգոհող այդ հանդգնութիւններու, խրամներու ծոցը, օդերու մեջ, կամ ծովերու խորը:

Հապա՜ շարքը իմացլալ մահը գրկող այն հերոսներուն, որոնք բանակներու թիկունքը, ընդերքը խոյ մարտնչումներու մեջ անհետացան:

Խորհրդային Միութեան, Զեխոսլովակիո, Յուգոսլավիո, Նույնիսկ Ֆրանսայի պարտիզանական կռիւները ի՞նչ անհավատալի հերոսութեան դրվագներովը հայրենասեր մեծ նվիրակներու, որոնք կոշված են դառնալու խաղաղութեան մեջ հասակ առնող ապագա սերունդներու հարգանքին ու պաշտումին առարկա նոր օրերու փրկիչներ:

Փոքր ենք իբրև ազգ, բայց արութեան մեծ գործեր ունեցած ենք մենք ալ ամեն դալու մեջ: Ալիմորուս խորենացին է հայրը այդ վկայութեան:

Ափսո՜ս որ օտար լուծեր, մեր լավագույն հատկութիւններն ումանց հետ, բան մը առած են նաև մեր հայրենասիրութեան տաք զգացումն: Օտար հողերու վրա ապրումը մեզ դարեւ դար ըրած է ավելի ինքնասեր ու շահախնդիր և ցեղային հասարակաց հատկութիւն մը, անխարդախ հայրենասիրութիւնը, դարձած է քիչերու բաժին մնացած շնորհ:

Պատմութիւնը անկաշառ դատավորն է ազգերու լավ ու հոռի արժենիչներուն: Այսպես, ան կվկայէ, թե դարերով Հայրենի հողն զրկված ազգեր շին կրնար հայրենասիրութեամբ հավասարիլ անոնց, որ սերունդն սերունդ ապրած և ուժեղացած են Հայրենի հողի դիպցումին տակ:

Անցլալ փառքի օրրան մեր մայրաքաղաքներն, հայ արվեստի դարավոր կոթողներն, ու քարերու բերնով անցլալ մեր փառքը պատգամող հուշարձաններն, մեր վանքերն ու ավերակներն հեռացած, օտար հողերու վրա սփռված հայերս կարելի չէ որ ըլլանք այնքան հարազատորեն հայրենասեր, որքան անոնք, որ կխմեն շուրջ հայրենաբուխ գետակներու, կդիտեն վեհատեսիլ գագաթները հայրենի ալեփառ լեռներու, կհամարուեն քարն ու խորանը դարավոր վանքերու և եկեղեցիներու, և կսեն զրույցներն ու երգերը հայրենասուն քաջերու:

Շապուհի պալատին մեջ, Հայրենի հողին վրա առլուծ դարձող Արշակի մասին Փաւլոստոսով մեզի հասած սիրուն գրվագ մը ունինք մեր դուրսագնական պնջլալին:

Որքա՛ն խոսումն է այդ ավանդավաճը, և գերազանցորեն հրաշք ու խանդավառող:

Հայրենի հողը... Ա՛ն միայն կրնա ջամբել կենսատու ափիշը ազգային գիտակցության և իռադիկալ հայրենասիրության:

Դրե՛ք ափ մը Հայրենի հող գաղթաշխարհի հայույթան ոտքերուն տակ, և պիտի կըրկներվի հրաշքը Արշակին. ամեն հալ պիտի դառնա առյուծ, շնորհիվ ազնվական այն արյունին, որ, հակառակ դարերու մահացնող ներարկումներուն, կըցած է պահպանվիլ շունչովը ազգայնացած մեր նկեղեցիին և մեքուպատուը մեր գրականության:

Եվ ահա՛ կըրկի այն ափ մը հողը մեր ոտքերուն տակ, շնորհիվ Խորհրդային Հայաստանի, ուրկն աշխարհասփյուռ հայության կհասնի հրավերը ներգաղթի:

Ներգաղթի գեպի Հայրենիք... Օտար անափիշ հողերի մեզ փրկելու կոչված հրավերն է ան, որ այնքան խոր խնդություն արծագանքեց բոլորիս հոգիներեն ներս:

Գ

Այդ արծագանքումը, ամենագու թնդունով, դո՛ւք ալ պիտի զգաք անտարակույս, սիրելի՛ օրիորդներ և պարոններ, դուք, որ ձեր պատանեկության հասակին հրաժեշտ տալու վրա եք արդեն և հզորապես պիտի կրնաք ներշնչվիլ Հայրենիքի կանչով:

Պատմության ձեր դասերուն ընթացքին շատ բաներ եք լսած հայրենասիրության մասին, և հուզող ու խանդավառ շատ տիպարներու հանդիպած: Զերհիացումը քնական է, որ երթա ամենն առաջ՝ Հայրենիքի ազատության և Հայրենի հողերու պաշտպանության նվիրված քաջերու և զորավարներու: Իրավունք ունիք. ձեր տարիքի նախասիրությունը հերոսներուն կերթա. ձեր մատաղ հոգիներուն տեսլական կուռքերն են անոնք:

Վաղը, երբ քարավաններն հետևին իրարու և դուք ալ բախտը ունենաք ձեր ոտքերուն տակ ջգգալու ջերմությունը Հայրենի հողին, եղեք նմանողները անոնց և արժեքավոր զավակները հին ու նոր օրերու մեր հերոսներուն և հերոսուհիներուն:

Սակայն, մի՛ փորձվիք հայրենասիրությունը օրոնելու միայն կովի և մարտնչումի, գինձորացյալ հերոսացումի մեջ: Զըշմարիտ հայրենասիրներ լին միթե անոնք, որ բրիլով Հայրենի հողի ալքերը կքանան, գրիչով հայրենի հանձարը կփառավորեն, երգով, ներկով, քարով, մարմարով հայրենի փառքը կպանծացնեն, կքանդակեն, կկանգնեն, գետեր կզսպեն, շուրեր կբաշխեն:

լեռներ կծակեն, ամայություններ կշենցընեն, Հայրենիք կկերտեն, կուսուցանեն, կերկնեն, կարտադրեն...:

Միևնույն ատեն, զգո՛ւյշ եղեք, որ ձեր հոգիներեն ներս ճարակ լգտնե սխալ հայրենասիրություն մը, որ մեզմե շատերունը եղած է և կշարունակե ըլլալ գաղթաշխարհի մեջ. քանի որ, նո՛ւյն նախահոր զավակներ, նո՛ւյն Հայրենիքի ժառանգորդներ, կիրքերի մոլեգնած և նեղմտությամբ կուրացած, նո՛ւյն Հայրենիքի անունով հաճախ զիրար կնսծացնենք, զիրար կմոռոտենք, զհույսիսկ, ծնունդ տալով ատելություն զգացումի մը, անհանդուրժողության մը, որ թշնամի բանակներու միայն պիտի ըլլար վայել:

Խեղաթյուրված հայրենասիրություն մը, զոր շահագործումի ապրանք դարձնելն շեն վարանիր անոնք:

Եթե կընդունիք, որ Հայրենիքը սրբություն մըն է, ապա ուրեմն այդ սրբության անուշով սնուցված ատելության և անհանդուրժողության զգացումները ձեզ համար թո՛ղ ըլլան խոտելի և աններելի:

Դո՛ւք, ներգաղթի այս պատմական օրերու քախտավոր շրջանավարտներ, դուք մի՛ փորձվիք մաս կազմելու հոսանքին անոնց, որ սեր կհավակնին տածել Հայրենիքի հանդեպ և ատելության կիրք կտեղան անոր անունով:

Կրնան գտնվիլ կույրեր, մուրթածներ ու վաճառվածներ: Իրական հայրենասիրությունը, ա՛յն հայրենասիրությունը, որ նվիրում միայն կճանչնա և զոհաբերություն, պիտի հանդուրժե նույնիսկ անոնց, քանի որ ժամանակն է գերագույն դատող և հաշիվներ հարգաբող:

Սիրելի՛ պարոններ և օրիորդներ, թո՛ղ ձեր հոգիներուն սնունդը զա հայրենական մաքուր ակներե, որպեսզի աճիք ու զորանաք Հայրենի հողի վրա և դառնաք բեղմնավոր ու պտղալի մասնիկները անոր:

Ներգաղթի ալս տարվան և Բելուսի քարափին ճամբա ելլող առաջին քարավանի պատմական այս օրվան պատգամը ա՛յդ թող ըլլա ձեզի, այն հաստատության անունով, որ ձեզի ջանաց ներշնչել իրական ու անխարդախ հայրենասիրության զգացումը:

Գացե՛ք, միացե՛ք անոնց, որ Հայրենի հողի վրա մեր նոր օրերու պատմությունը կկերտեն:

Այս օտար հողերու վրա ձեր թափելիք սերմերը կրնան ամուլթյան դատապարտվիլ, և հպմեստ ապրումի մը ձգտող ձեր ճիգերն

ու ոգորումները կրնան ատող մոլեռանդություններու բախիլ, քանի որ Հայրենի հողի կենսատու ուժը պիտի պակսի այստեղ, ձեր ոտքերուն տակ:

Քացե՛ք, հո՛ն, ուր կա այդ հողը նվիրական, և ուրկե իրենց սնունդը ստացած են հին դարերու և նոր օրերու մեր տիտանները:

Անհարազատ այս հողերու վրա, նոր սերունդի ազգային ոգիով դաստիարակման համար հիմնված այս հաստատությունն ու անոր տարեց ու կրտսեր բոլոր աշխատավորներուն մաղթանքը այս պիտի ըլլա ձեզի համար:

Երթա՛յք բարյալ:

Մեզի նման, օտար հողերու բաժին չըլլա ձեր երիտասարդությունը:

Հայրենիքը ձեզմով և դուք Հայրենիքով ապրեցե՛ք հպարտ, աճեցե՛ք ուրախ, եղե՛ք երջանիկ:

Ձեր և ձեզմով հառաջ գալիք սերունդներու այդ երջանիկ ու բարգավաճ ապրումին մեջ, հոգեկան գերերջանիկ ապրումի մը վայելքը պիտի զգանք նաև մենք:

Երթա՛յք բարյալ:

Ձեր ճամբան բաց ըլլա և ձեր ամուղերը պայծառ:

23 Նոյեմբ 1946

(«ԿՅԱՆՔԻ ՆՈՐ ՇՐՋԱՆԻ ՄԸ ՍԵՄԻՆ», Հալեպ, 1950 թ., էջ 71—75)





Մ Ա Յ Ր Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք Ո Ւ Մ

ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

Հին Զեմալ Գրքերի Մեկնություններ.— Երեսանի Պետական մատենադարանում սկսված է պատրաստությունը միկրոֆիլմերի այնտեղ պահվող արժեքավոր ձեռագրերի և հին տպագիր գրքերի և հանդեսների, Հատուկ լուսանկարչական գործիքներով կինոֆապիկների պես նկարահանվում է ձեռագրերը իր բոլոր մանրամասնությամբ, ինչպես նաև լույս է հանվում 887 թվականին գրված «Լուգարյան Ավետարան»-ի և մի շարք արժեք ձեռագրերի միկրոֆիլմերը:

Գիտական աշխատողին տրամադրվում է ոչ թե իրական ձեռագրերը, այլ նրա նկարահանված մեկ պատճենը: Դրա առավելությունը այն է, որ ձեռագրերը այդ կերպով ավելի լայն հասարակության մատչելի է դառնում և միևնույն ժամանակ մենում է անաղարտ:

Մատենադարանում կազմակերպված միկրոֆիլմերի բաժինը հետզհետե նկարահանելու է այնտեղ պահվող բոլոր գանձերը, նկարահանումից հետո ֆիլմերը պահվելու են հատկապես այդ նպատակի համար պատրաստված մետաղե փոքրիկ տուփերի մեջ և գրվելու են հատուկ գրապահարանների մեջ:

Արդեն միկրոֆիլմի են վերածվել 1172 թվականին արտագրված մոլորիկի «Կարդանանք» պատմությունը, Մովսես Խորենացու «Գեղարար» պատմության «Հայոց պատմություն»-ը և 1193 թվականին գրված «Շարակ»-ը:

Նկարահանվել են նաև «Մեղու», «Մեղու», «Մեղու»-րա հայկական հին և հազվագյուտ ամսագրերի եզակի համարները: Սրանից հետո Մատենադարանը կարող կլինի, միկրոֆիլմերի միջոցով, բավարարել իր հենավոր աշխատակիցներին:

ԱԿԱԳԵՄԻԱՆ ՄԱՅՐԵՆ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԿԵՐԻ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱՆԻՔՆԵՐԻ.— Հայկական Պետական հրատարակչության կողմից լույս են ընծայվել ականավոր գրականագետի հրեջք երկրամասերում թուրքերը մի սովոր հատորով, որը բաղկացած է 762 մեծագիր էջերից:

Գրքում ղեկավար են սկսվել ստեղծագործությունը «Պեմ Պոռնյան» և «Պարոնյանի գեղարարական հայացքները աշխատությունները: Գրքին կըցված է անվանադրանկ:

ՀԱՅԿԱՅԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐ.— Հայկական ՄԱՐ Գիտությունների ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտի այս տարի տարբեր արշավախմբերի միջոցով շարունակում է հնագիտական պեղումները կատարել ռեսպուբլիկայի մի շարք վայրերում:

Դվինի արշավախումբը, որը գլխավորում է դոկտ. պրոֆ. Կ. Ղաֆադարյանը, շարունակում է պեղումները հրեմենի ծաղաքի միջնաբերդում և քնակի թաղամասերում:

Հնագիտական արշավախմբերից մեկը, որը ղեկավարում է ճարտարապետության թեկնածու Կ. Հովհաննիսյանը, պեղումներ է սկսել Արին-քերդում (Էրեբունիում): Արշավախմբի արշավանքներին մասնակցում են նաև Մոսկվայի Ա. Ս. Պուշկինի անվան կերպարվեստի թանգարանը և Հայկական ՄԱՐ Միևնույնության բաժինը: Հնագետները այստեղ պեղում են ուրարտական թաղաք-ամրոցի՝ Էրեբունիի միջնաբերդը:

Ռեսպուբլիկայի Գիտությունների ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտի և Լենինգրադի պետական էրմիտաժի միացյալ արշավախումբը, որին գլխավորում է Հայկական ՄԱՐ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Բ. Պետրովսկին, հունիսի 21-ին պեղումներ սկսեց ուրարտական բերդաքաղաք Կարմիր-բլուրում (Թեյշեբանիում):

Ինստիտուտի մի այլ արշավախումբ, պատմական գիտությունների թեկնածու Հ. Մեղակյանյանի ղեկավարությամբ, սկսել է իր աշխատանքները Լճայենում, Մեհնի ափին:

Եռուով կսկսեն նաև Հայաստանի հնագույն բնակավայրի՝ Ենեղավիթի պեղումները: Այդ արշավախմբի ղեկավարն է պատմական գիտությունների թեկնածու Ս. Մարդարյանը:

Հնագիտական այն արշավախումբը, որին ղեկավարելու է պրոֆ. Բ. Առաքելյանը, սեպտեմբեր ամսին պեղումներ կկատարի Գառնիի ամրոցի հրապարակի շրջակայքում, այնտեղ, ուր նախորդ տարիներին հայտնաբերվել են պալատական-դղակային շենքերի մնացորդները և խճանկար հատակով բաղնիք:

Անտիտուտի մի խումբ գիտական աշխատողներ, պատմական գիտությունների թեկնածու Ս. Բարխուդարյանի ղեկավարությամբ, զբաղվում են միապորությունների հավաքմամբ և ուսումնասիրությամբ։ Ազգագրական և ժողովրդական բանահյուսության սանդուղներին միացյալ արշավախումբը կուսումնասիրի Իլ-չևսեի և Նոյեմբերյանի շրջանների ռուսկոյթյան կեն-ցազը, սովորությունները, հոգևոր և նյութական մշակույթը։

ԴԱՇՆԱԿԱՆԱԶԻՐ ՎԷՆ. ԿԼԱՅՐԱՐՆԵՐ ԵՐԲԱՆՈՒՄ.—
Սոսկեռական Միություն մի քանի մեծ քաղաքներում
համերգներ տալուց հետո, ամերիկյան Եշանավոր
դաշնակահար, Զայդովսկու անվան միջազգային առա-
ջին արջանակաբաժնեմիության լատերատ Վան Կայսեր-
նո աշխարհը Լան ծրեան։

Հուլիսի 22-ին նա ժամանեց Երևան և Կղզի հրկու
համերգ: Փաղաքային օդանավակայանում հրկուտասարդ
դաշնակահարին ընդունեցին չեղմունք, թարմ ծաղ-
կեպեղեք նվերներով, սրտատախ խոսքերով դիմավորե-
ցին:

